

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

№ 25 ԲԱՂԱԲԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ № 25

ԽՐԺԻԹ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

№ ժՈՂՈՎԱԾՈՒ 3

374.2

Խ-91

ԴԵՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.— ՅԵՐԵՎԱՆ. 1927

Է - MAR 2010

374.2 14 MAR 2013

10-91

ար

Պրոֆեսորներ բոլոր յերկրների, միացե՛ք.

№ 25	ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ	№ 25
------	--	------

ԽՐՃԻԹ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

1018
35617

№ 3 ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՅԵՎ ԵԶՄԻԱԾՆԻ ԳԱՎԱՌՆԵՐԻ ԲԱՂԼՈՒՄ- ԱՇԽԱՏԱՆԲՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԴԱՍԵՐԸ

1. ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

1926 թվի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Քաղլուսգլխավորն անցավ Լենինականի և Եջմիածնի գավառների քաղլուսաշխատանքների հետազոտման: Այս յերկու գավառները 1925 թ. ձմռանը, ինչպես և 1926 թ. հունվար—ապրիլ ամիսներին մեր կողմից հետազոտման և հրահանգման չեյին յենթարկվել: Ուրեմն հասկանալի պիտի լինեն այն մեծ հետաքրքրություն և սպասողականություն շարժառիթները, վորոնք կային մեր աշխատանքների շուրջը: Մեր յերկու տեսուչներն ել վոչ միայն գավկենտրոնների աշխատանքները քննեցին, այլ և շրջանային կենտրոններինը և գյուղերինը: Նրանք գնացին խոշոր կենտրոնները, վերջիններիցս շատ հեռու ընկած գյուղերը, ստուգեցին լիկկայանների, խրճիթների աշխատանքները, գրասենյակները և կապը հիմնարկների հետ, վորից հետո նրանք իրենց աշխատանքների մասին զեկուցել են գավկենտրոններում և Քաղլուսգլխավորում: Գավկենտրոններում կուսակցական և խորհրդային հիմնարկների ներկայացուցիչների նիստում, իսկ Քաղլուսգլխավորում՝ ներքին կոլեգիայում, մասնակցությամբ յերկու գավառների քաղլուսավարների, Եջմիածնի լուսբաժնավարի, Յերևանի գավքաղլուսավարի և Լուսժողկոմատի տեսչի: Զեկուցումների վերաբերյալ յեղել են վիճաբանություններ, գուրս են բերվել բանաձևեր, վորոնց հիմքն են յեղել կոնկրետ իրականությունը, միքանի փաստաթղթեր և աշխատակիցների անձնական գրույցները տեսուչների հետ: Պարզ ե, վոր հետազոտման արդյունքները հիմնված են կոնկրետ փաստերի վրա, ընդհանրապես իրական տվյալների վրա, ուրեմն պետք ե վոր լուրջ ուշադրություն առնվեն այդ հետազոտություն արդյունքները, և անպայման դրանց հիման վրա կարելի յե կոնկրետ առաջարկներ անել և ի ղեկավարություն ընդունել դասերը: Այդ

տեսակետից բոլոր դավադրութեանները նույնպէս պիտի ուշադրութեամբ քննութեան առնեն արդյունքները և իրենց աշխատանքների համար դասեր վերցնեն:

Ամենից առաջ նկատելի յե ծրագրային աշխատանքի բացակայութեանը, մանավանդ Լենգավառում: Այդ բացը նկատելի յե նախ կազմակերպչական բնագավառում: Հակառակ այն ցանցի, վոր մշակել ե Գաղութագրութեանը, լիկկայանները և խրճիթները բացվել են և գործում են անկախ դրանից (մեր խոսքը մեծ մասամբ վերաբերում և Լենգավառին):

Խոսենք փաստերով:

Լենինականի գավառում, համապատասխան ցանցի, պետք ե բացվելին վորոշ քանակութեամբ խրճիթներ, բայց հետագայում դրանց քանակը շատանում ե, և նախատեսված աշխատավարձը բաժանվում ե նույնպիսի ձևով: Որ.՝ Լենգավառի յերկրորդ գավառում նախատեսված ե և հաստատված մեկ որինակելի և յերեք շարքային խրճիթներ, սակայն բացվել ե յերեք շարքային փոխարեն 6-ը, իսկ աշխատավարձը բաժանել են 6 խրճիթվարի մեջ, յուրաքանչյուրին 5-ական ուրբի: Յեվ սա յեզակի դեպք չե, նույնն ավելի նվազ չափով նկատվում ե Նշմիածնի գավառում: Նման յերևութ նկատվում ե նաև մյուս գավառներում:

Բայց ի՞նչ ֆլաս դրանից: Չե վոր հիմնարկներն աճում են և գյուղերում կրթական կենտրոնների քանակը բազմանում,—կարող են այսպէս պատճառաբանել:

Առաջին հայացքից սա, իսկապէս, ճիշտ դիտողութիւնն ե համարվում: Բայց բավական ե միքիչ խորը քննել, և մենք կտեսնենք, վոր նման վերաբերմունքը կատարյալ սխալ ե և վտանգավոր՝ աշխատանքի հաջող ընթացքի տեսակետից: Ամենից առաջ վտանգավոր կողմն այն ե, վոր քանակն աճում ե հակառակ վորակի: Շատերը կարծում են, թե վորքան շատ, այնքան լավ, բայց մեր լոգունքն ե ճիշտ, բայց լավ: Յեվ իսկապէս քանակը ֆլասում ե բովանդակութեանը, Հետևանքն այն ե լինում, վոր փոխանակ ունենալու քիչ թվով խրճիթներ, այն ել լավ կազմակերպված, հարուստ գրքերով, պլակատներով և լավ աշխատանքով, մենք ունենում ենք շատ, բայց բոլորն ել վատ կազմակերպված ե խղճուկ դրութեամբ: Ժիշտ նման պատկեր ե նկատվել հենց վերոհիշյալ գավառում: Իսկ այս դրութիւնը հակառակ ե կուսակցութեան համագումարների և կոնֆերանսների վորոշմանը, վորոնք անընդհատ պայքար են մղում վորակի բար-

ձրացման գործում և տնտեսական և կուլտուրական ճակատներում: Յեվ, իսկապէս, մեր խրճիթներն աղքատ են կահավորմամբ և խղճուկ տպավորութիւնն են թողնում անցորդի կամ հետաքրքրվողի վրա: Իսկ ի՞նչ տպավորութիւնն պիտի ստանա այն գյուղացին, վորն այդպիսի աղքատ խրճիթ ե մտնում, և նման խրճիթում ի՞նչ աշխատանք կարելի յե տանել:

Նույնպիսի ծրագրային աշխատանքի բացակայութիւնն ե նկատվում աշխատանքի բովանդակութեան տեսակետից: Մեթոդական աշխատանքը վատ ե դրված, վորովհետեւ գավադրութեանները, մանավանդ Լենգավառի, համապատասխան նյութ և դեկավարութիւնն ցույց չեն տվել: Կենտրոնից ուղարկած մեթոդական գրականութիւնը չի բաժանվել: Յեվ յերբ հարց ե առաջ գալիս՝ ապա հէր ե ուղարկած գրականութիւնը, պարզվում ե, վոր լուսբաժնի գրադարանում կուտակած (Լենգավառ) ե, և, տարորինակ կերպով, վոչ մեկի մտքով չի անցնում ցրել այդ գրականութիւնը գավառներում: Այն ժամանակ պատկերը պարզ ե դառնում: Աշխատանքներն սկսվում են, իսկ ուսուցչութիւնը և խրճիթվարներն ու քաղութահիմնարկները մեթոդական ձեռնարկներ չունեն: Յեվ յերբ հարցնում են քաղութավարին, նա պատասխանում ե, վոր բաժանված ե: Ի՞նչ խոսք, վոր արդյունավետ աշխատանք չի կարող տարվել, և արդարացի յեն նրանք, վորոնք բողոքում են և շեղում, վոր քաղութաշխատանքների մեթոդական կողմը թույլ ե: Իսկ մեր աշխատակիցները բյուրոկրատիկ և անբարեխիղճ վերաբերմունք են հանդես բերում (Լենգավառ) և գործը փչացնում:

Պարզվում ե նաև, վոր գավադրութեանները չեն պարապում և չեն ուսումնասիրում քաղութաշխատանքի մեթոդները: Ամբողջ ժամանակ դրադված են կազմակերպչական աշխատանքներով: Մինչդեռ առանց ուսումնասիրելու հերթական և թարմ գրականութիւնը, փորձը, մեթոդական գրականութիւնը՝ անհնար ե սխտեմատիկ և բովանդակալից աշխատանք տանել: Կադրնչէինա յե, յերբ աշխատում ենք այնպէս, վորպէս անցյալ, նախանցյալ տարիներում: Գաղութաշխատանքների բնագավառում կազմակերպչական շրջանը շատ յերկար ե տևում, մինչդեռ այդ արդեն յոթերորդ տարին ե թեկուխում և արդեն վորոշ փորձ ունի: Դեռ անցյալ տարի գավադրութեանների խորհրդակցութեան ժամանակ պարզվեց, վոր մենք պատրաստ ենք և հնարավորութիւններ ունենք ուսումնական-մեթոդական հարցով ավելի

շատ զբաղվելու և այդ կողմն ավելի խորացրած և ըստ եյուրթյան բովանդակելից տանելու ի հարկե, դեռ շատ բացեր կան կազմակերպչական ասպարիզում. բյուջետային այլ հիմնարկների աշակցության և մի շարք ուրիշ դրուժնական հիմնական բացասական կողմերը մեզ անպայման թույլ չեն տալիս ուժեղացնելու կազմակերպչական աշխատանքների թափը, բայց քաղաքական հիմնարկները, համեմայն դեպս, վորոշ աստիճանի կայունացման են հասել, վորոշ աստիճանի ձևավորված են և ամուր արմատներ ունեն, ուրեմն մենք չենք կարող չուժեղացնել հիմնարկների բովանդակության հարստացման պայքարի թափը:—Հիմնականում այս թեզն ընդունեց գավաղուսվարների խորհրդակցությունը, ինչպես և անցյալ տարի կայացած քաղաքականների համամիութենական խորհրդակցությունը Մոսկվայում:

Ճիշտ է, մեթոդական գրականությունը քիչ է, հնարավորություն չունենք պարբերաբար հրատարակելու, բայց գոնե յեղածն ոգտագործենք: Մենք ունենք անգրագիտության վերաբերյալ դասագրքեր, վորոնք կարիք են զգում քննության և հետազոտման՝ նոր հրատարակություններն ավելի հաջող կազմելու համար. կան՝ մեթոդական ժողովածու, ծրագրեր, մի յերկու հրահանգչական նամակ, շրջաբերականներ—խրճիթների վերաբերյալ՝ «Խրճիթ-ընթերցարան» ժողովածու, շրջաբերականներ, ինչպես և ուսական գրականություն—բոլոր աշխատանքների վերաբերյալ, վոր մենք թե անցյալ տարի և թե այս տարի ուղարկել ենք և ուղարկում ենք: Մենք հրահանգել եյինք, վոր գավաղուսվարները պիտի իրենց կից մեթոդական-կրթական փոքրիկ գրադարան կազմեն: Բայց, ինչպես յերևում է, Լենինականում մատը մատին չեն խփել այդ խնդրում:

Աշխատանքը յերկու գավառներում էլ, մանավանդ Լենինականում, տարվում է հարվածային, սեղոնային, թռիչքներով ու կտրտվածությամբ: Չի կիրառվում մի ընդհանուր վորոշ քաղաքականություն, ավելի լավ ասած՝ չկա ծրագիր, մտածված և քննության յենթարկված վարվելակերպ: Այս է պատճառը, վոր Լենինականում քաղաքաշխատանքը մի բանաձևի մեջ վորակավորվել է իբրև քառասյին:

Այսպիսով մեր գավաղուսվարներն, ինկատի ունենալով Լենինականի փորձը, պիտի աշխատեն ուղղել իրենց աշխատանքի բացերը, յեթե այդպիսիներն իրենց գծով նույնպես նկատվում են: Տարրական հասկացողություն պիտի լինի մեզ համար՝ ամ-

բողջ աշխատանքը վորոշ ծրագրի յենթարկել: Մենք գիտենք, վոր մի շարք գավաղուսվարներ ունեն նման ծրագրեր, բայց մեզ անհրաժեշտ է, վոր ընդհանուր յերևույթ դառնա այդ և, վոր ամենագլխավորն է, կիրառվի կյանքում:

2. ՀՐԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼ ԴԵՆՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքաշխատողների համար այրուբեն է դարձել, վոր սպեցիֆիկ պայմանները (վոչ կայուն նախահաշիվ, թույլ ապարատ և այլն) մեզ ստիպում են ամբողջ գծով ամուր է դիտմանի կապ ունենալ: Մենք կարծում ենք, վոր Խորհրդային իշխանության մեջ վոչ մի ասպարիզում այնքան կարիք չի զգացվում կենդանի հրահանգման և ստուգման, ինչպես և անձնական միջամտության և քննության, ինչպես քաղաքաշխատանքների ընագավառում: Ունենալով այս խորը գիտակցությունը՝ կենտրոնն աշխատել է համապատասխան ապարատ ստեղծել ամբողջ գծով. յեղած միջոցներով, այսպես թե այնպես, յերբեք հրահանգչական աշխատանքը չթուլացնել: 1925—26 ուսումնական տարում հրահանգվել է 5 գավառ, չհաշված մանր-մունր ստուգումները: Այս տարի մինչև հիմա (հունվար) հրահանգվել է յերեք գավառ, չորրորդը՝ Յերևանը կիսով չափ վերջացել է: Նշանակում է՝ տվյալ պայմաններում վորոշ կոնկրետ աշխատանք տարված է կենտրոնի կողմից:

Սակայն այդպես չի արված Լենգավառում և մասամբ Եջմիածնի գավառում՝ գավաղուսվարների կողմից: Լենգավառի վերաբերյալ պիտի ասել, վոր կամ վերոհիշյալ գիտողությունը ճիշտ է, կամ սխալ է, բայց անուգուտ շրջագայություն է յեղել, այլուպես այնպիսի ծանր դրություն չեր բացվի մեր առաջ: Յեվ այն, ինչ վոր նկատվեց Լենգավառում, պիտի խոստովանել, վոր հանկարծակիի բերեց Քաղաքաշխատանքին:

Հրահանգումը, հատկապես Լենգավառում, այնքան թույլ է կատարվել, գավաղուսվարն այնքան պիտի է նստած յեղել իր տեղում, վոր ամբողջ գծով սխալ պատկեր է ստացվել: Գուցե բացառովի, վոր գավաղուսվարը հնարավորություն չի ունեցել սխտեմատիկ շրջագայելու: Նախ պետք է ասել, վոր այդ հնարավորությունները կան և յեթե չկան, պիտի ստեղծել. հետո կան լուսհրահանգիչներ, ինքը լուսբաժնավար և այլն: Պետք է ավելացնել և այն հանգամանքը, վոր Լենգավաղուսվարը մեզ շա-

բունակ ասել է, վոր շրջագայում է, և բոլոր տվյալները համապատասխանում են այդ շրջագայության արդյունքներին: Այսպիսով, վերջինս հարցական է դառնում. իսկ, ընդհանրապես, շրջագայության համար այդ հնարավորությունները կան, միայն տնտեսական և ցանկություն ունենալ և բյուրոկրատիզմից հեռու լինել:

Այդ հարցի բացասականության պատճառով ամբողջ Լենգրավառի վերաբերյալ մի գեղեցիկ որ նոր պատկեր է բացվում, վորը և ամբողջ գծով թյուրիմացություն առաջացրեց: Նույնպես փաստերով խոսենք: «Յոթերորդ գավառի քաղաքաշխատանքների մասին Գաղութագրության տեղեկություններ ունենք»,—գրում է տեսուչ Առաքելյանը իր գեղեցիկ մեջ: Յեվ իսկապես, այդ գավառի վերաբերյալ մենք լենգրավառի գեղեցիկ մեջ կարգում ենք, վոր անդրկովկասյան հրահանգիչը քաղաքաշխատանքների կողմից այդ գավառն «ամենաառաջին տեղն է համարում ամբողջ Անդրկովկասում»: Ինչ խոսք, վոր պետք է ուրախանալ: Բայց ընկ. Առաքելյանը շրջագայությունը և ստացած արձանագրությունները ցույց տվին, վոր դա խառնուրդ է յերևույթ և և կատարյալ անտեղյակություն: «Խրճիթների մի մասը լցված է դարմանով, իսկ մյուս մասն անուշով և միայն»,—գրում է նույն տեսուչը: Այն գյուղերը, վորոնք համարվել են խրճիթ ունեցողներ, և այն ել լավ խրճիթներ, այժմ շրջագայությունը պարզում է, վոր այդպես չէ: «Ջարջարիսի խրճիթը մայիսից դարմանով և լցված, խրճիթվառն ինքն ել չգիտե՝ պաշտոնի մեջ է հաշվում, թե վոչ...»: «Քեչիչքյանդի խրճիթը նույնպես դարմանով և լցված, իսկ գրքերը մի կոմսոմոլի մոտ եյին թափթփված և բորբոսնած դրություն մեջ»: Այսքանն ել բավական է՝ պատկերը պարզելու համար:

Այս և պատկերը անդրկովկասյան մաստաշտաբով ամենալավ համարված գավառում, իսկ մյուս գավառներում.—նույնն է պատկերը, նույն անմխիթար տպավորությունը:

Մինչդեռ յեթե կենտրոնում յեղած արձանագրությունները և հաշվեառ պատկերները կարգանք և քննենք, կտեսնենք, վոր հիշյալ բոլոր գյուղերում խրճիթներ կան: Այդ դեռ բավական չէ. տախտակների մեջ գրաֆներով ցույց է տրվում, թե յուրաքանչյուր խրճիթում ինչքան գիրք կա, քանի հոգի յե հաճախում, ըստ սեռի, կուսակցության, պարագմունքները, մեթոդները, և

այլն: Այսպիսով մեզ ուղարկված է մի գեղեցիկ պատկեր, բայց իրականությանն անհամապատասխան: Սա նշանակում է խաբել կենտրոնը, բարեխիղճ կերպով չուսումնասիրել իրականությունը, չեղյալ փաստերի հիման վրա զեկուցում գրել, վորի հետևանքը լինում է այն, վոր մի հրաշալի պատկեր է ստացվում—«անդրկովկասյան մաստաշտաբով ամենալավը», բայց ամբողջովին ցնորք:

Պետք է ասել, վոր այդ գավառում յերկրաշարժ չի յեղել: Այդտեղ ամբողջ գծով աշխատանք է տարվում: Մեր տեսուչը շրջել է այն գավառները, վորտեղ տարերային դեպքերն իրենց ավերմունքները չեն գործել, վերջապես «ամենալավ» գավառներն է շրջագայել: Բայց միևնույն տեսուչը տեսել է նաև լավ կողմերը, որ.՝ Հոռոմ գյուղի խրճիթը, վորը կազմակերպված է յեղել և լավ աշխատանքներ է տանում:

Ի՞նչ յեղրակացություն պիտի հանգենք:

Այն, վոր բյուրոկրատիկ լավատեսություն չպիտի ունենալ, վոր չպիտի փոխել իրականության պատկերը, վոր յուրաքանչյուր զեկուցում պիտի իր հիմքում ունենա վոչ թե սուբյեկտիվ տպավորությունը և ցանկությունը, այլ որչեպև իրականությունը, վոր տվյալները պիտի հիմնավորել, զեկուցում չգրել հիմնված բանավոր խոսքերի, ասեկոսենքի և չեղյալ փաստերի վրա: Իսկ յեթե գավառագրության բարեխիղճություն ունենալ շրջագայելու, անձամբ ստուգելու շրջաններից ստացած փաստերը, ուրիշ խոսքով՝ անձամբ անցներ գավառների կենտրոնները, գյուղերը, միաժամանակ ստուգելու լուստեսուչների միջոցով, մենք կունենայինք բարեխիղճ աշխատանք, իրականության համապատասխան պատկեր և վերջապես, մեկ-մեկու չեյինք խաբի չեղյալ տվյալներ տալով:

Ահա վորն է հրահանգչական թույլ զեկավարությունը և վորն է դրա հետևանքը: Ուռցրած և գեղեցկացրած զեկուցումներն ամբողջ գծով սխալ պատկերացումն են տալիս, իսկ թե դրանից ինչ հետևանք կստացվի՝ պարզ է: Լենգրավառի նոր աշխատակիցները պիտի փոխեն աշխատանքի մեթոդները և իրենց աշխատանքին հիմք վերցնեն բարեխիղճ ուսումնասիրությունը, ճիշտ տվյալները և ստուգված թվերը, անձնական շրջագայություն և որչեպև զեկուցում և ճշտած տվյալներով տախտակներ:

3. ՔԱՂԱՂՈՒՍՆԻՄԱՐԿՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Յերկու գավառներում ել լիկկայաններն ապահոված են գրեական պիտույքներով, խրճիթները գրականություն և ուղարկվել կենտրոնից, միայն Լենգրավառի խրճիթների գրադարանները

չեն յերևում, իսկ Եջմիածնի գավառում կան և գործում են, բայց վոչ բավականաչափ ինտենսիվությամբ. բայց այդ հիմնարկների տնտեսական զրուծյունը խիստ ծանր է: Նրանք չեն ստանում նախահաշվային գումարները: Դրամներ չեն ստացվում վոչ միայն կուլտ-կրթական աշխատանքների համար, այլ և աշխատավարձը չեն տալիս: Ահա Լենգավառի 7-րդ գավառի նախահաշվի զրուծյունը 1925—26 ուսումնական տարում.—

1. Աշխատավարձ նախատեսված է 180 ու., ծախսված է 105 ու., մնում է 75 ու.:

2. Տնտեսական—նախատեսված է 90 ու., ծախսված է 36 ու., մնում է 54 ու.:

3. Խրճիթին վերանորոգման համար չի նախատեսված:

4. Կուլտ-կրթ.—նախատեսված է 75 ու., ծախսված է 21 ու. 60 կ., մնում է 53 ու. 40 կ.:

5. Լիկկայանների աշխատավարձ—նախատեսված է 704 ու. ծախսված է 80 ու., մնում է 624 ու.:

6. Կուլտ-կրթական—նախատեսված է 500 ու. ծախսված է 12 ու. 47 կ., մնում է 487 ու. 53 կ.:

Ընդամենը—նախատեսված է 1549 ու., ծախսված է 265 ու. 7 կ., մնում է 1283 ու. 93 կ.:

Նշանակում է 1549 ու. նախահաշվից ծախսված է միայն 265 ու. 7 կ., մնացած գումարը՝ 1283 ու. 93 կ. շրջագործկոմը բաց չի թողել: Նույնը նկատվում է նաև Եջմիածնի գավառում: Տվյալներ կան, վոր այդ յերևույթն ընդհանուր է ամբողջ քաղաքագծով: Այսպիսի պայմաններում, ինչ խոսք, վոր անհնարին և կազմակերպված աշխատանք տանել:

Տվյալները ցույց են տալիս, վոր լիկկայանները և խրճիթները լուսավորութուն և վառելիք չունեն: Այդ պատճառով եւ աշխատանքները նորմալ չեն ընթանում: Հասկանալի չէ, վոր ցուրտ և մութ քաղաքահիմնարկները գյուղացին չի գնա: Մեր գավառապետները բավականաչափ ակտիվ աշխատանք չեն տարել այդ բացերը ժամանակին վերացնելու համար: Դեռ գավառապետների խորհրդակցության ժամանակ ընդունվեց, հետագայում մեր շրջաբերականներն եւ այդ եյին շեղում, վոր անհրաժեշտ է նախապատրաստական աշխատանքները ժամանակին սկսել, աշխատանքի քաշել ուսուցիչներին, քաղաքակրթականները և խրճիթավանդներին, վորպեսզի նոյեմբերին պատրաստ լինենք՝ պարագլուխները ժամանակին սկսելու:

Իհարկե, սխալ կլինի, յեթե վերոհիշյալ զրուծյան պատճառը միայն գավառապետներին վերագրենք: Գավառային մարմինները նույնպես ժամանակին չեն ընդառաջում քաղաքաշխատողներին՝ վերանորոգման յենթարկելով հիմնարկները, վարկերը լրիվ և ժամանակին բաց թողնելով, շենքեր տրամադրելով և այլն: Բայց փաստը մնում է փաստ, վոր այնտեղ, վորտեղ քաղաքաշխատակիցներն ավելի ակտիվ են յեղել, ուժեղ և պահանջկոտ, այնտեղ զրուծյունը մխիթարական է: Չի կարելի ժխտել, վոր վերջին խնդիրներից շատ բան է կախված: Թույլ, ծանր գրասենեկային աշխատակիցը յերբեք չի կարող վերոհիշյալ հարցերը վճռել: Մեր աշխատանքներն իրենց բնույթով հատկապես պահանջում են ակտիվութուն, դյուրաշարժութուն, յեռանդ և կազմակերպչական ուժեղ շնորհ, վորովհետև վարկերն իրենք իրենց չեն գալիս գրպանն ընկնում:

Ուրեմն մենք տեսնում ենք, վոր, հակառակ մեր բոլոր հրահանգների և զգուշացումների, վերոհիշյալ գավառներում նախապատրաստական աշխատանքները թույլ են տարվել, գուցե և չեն ել տարվել: Վոր աշխատանքի ամենալավ ժամանակ քաղհիմնարկները զուրկ են տարրական հարմարություններից, վորի հետևանքով քաղաքաշխատանքը վիժման վտանգի տակ է դրվում:

Սա մեզ համար որինակ դառնա, վոր հետևյալ տարում նախապատրաստական աշխատանքները ժամանակին սկսենք, վոր այդ գործի մեջ քաշենք բոլոր շահագրգռված հիմնարկները և աշխատակիցներին, վոր գավ. և շրջ. մարմինների հետ այնպես պայմանավորվենք, վոր հիմնարկները կարողանան անընդհատ աշխատել՝ ամեն բան ժամանակին պատրաստելով:

4. ԽՐՃԻԹՎԱՐՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՅԵՎ ԽՐՃԻԹԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Յերկու գավառների հետազոտությունը ցույց տվեց, վոր խրճիթավանդների կազմը թույլ է: Նրանք պատրաստված չեն կուլտ-կրթական, քաղաքապետական աշխատանք տանելու: Իհարկե, կան լավ պատրաստված և գործը հասկացող խրճիթավանդներ, բայց դրանք հազվագյուտ են: Կան և այնպիսիները, վորոնք սիրում են աշխատել, բայց, դժբախտաբար, պատրաստված չեն նմանաշխատանք տանելու համար: Ժամանակ եւ չեն ստեղծում կարգալու կենտրոնից ուղարկված գրականութունը և մեթոդական ձեռնարկները: Այդպիսիներն, ինչ խոսք, վոր պիտի աշխատե-

առաջ քաշել և հնարավորութիւններ տալ պարագելու, որ՝ ամառային դասընթացներն ուղարկել, շրջանային կամ գավառային յերկշաբաթյա կոնֆերանս-դասընթացներ բաց անել նրանց համար և այլն:

Խրճիթվարների սեփական քիչ հասկացողութիւնն ունի քաղլուսաշխատանքների մեթոդների մասին:

Կան և այնպիսիները, վորոնք անգրագետ են, որ՝ Ոչականի խրճիթվարը: Հասկանալի չէ, թե անգրագետ խրճիթվարը ինչպե՞ս կարող է աշխատանք կազմակերպել իր խրճիթում: Միքանիսն էլ կիսագրագետ են, բայց իրենց պարտքն են համարում դաս տալ նաև լիկկայանում, որ՝ Քյաթթարլիի խրճիթվարը: Նա ինքը կիսագրագետ է, բայց անբարեխղճութիւնն է անում լիկկայանում դասեր վերցնելով: Նա ինքը պետք է նախ սովորի, հետո ուրիշին սովորեցնի: Հետո նա այնքան է զբաղված լիկկայանում, վոր խրճիթի աշխատանքները շատ վատ են ընթանում, չնայած վոր գյուղը մեծ է, լավ գյուղ է, աշխատել կարելի չէ:

Խրճիթվարների մի մասը տարրական տեղեկութիւնն չունի քաղլուսաշխատանքների մասին: Մի շարք խրճիթներում տեղեկատու աշխատանք չի տարվում, գրադարանը կանոնավորված չէ, խմբակներ կան, բայց չեն գործում, պատի լրագիրը թույլ է աշխատում և այլն և այլն: Իհարկե, այդ բոլորի մեղքն առաջին հերթին խրճիթվարի վրա չէ ընկնում, վոր չի կարողանում կազմակերպել, չի աշխատում կամ վատ է աշխատում լավ և փորձված աշխատակիցներ կամ ուսուցիչ հրավիրել, չի կարողանում հասարակայնութիւնն ստեղծել խրճիթի շուրջը: Ինչ խոսք, վոր նման պայմաններում խրճիթը մենակ է մնում, կզգիացած է և չի կարողանում մասսայական աշխատանք տանել:

Միքանի խրճիթվարներ էլ խրճիթի դռներն անկանոն են բաց անում, առանց վորոշված ժամերի, վոր գյուղացիութիւնն իմանա, թե վոր ժամերին է բաց լինում խրճիթը, կամ ինչպիսի պարագմունքներ են լինելու տվյալ ժամին: Յեղել են նաև այնպիսի դեպքեր, յերբ մեր տեսուչը միքանի անգամ գնացել է խրճիթը, բայց դռները միշտ փակ է տեսել: Բանից դուրս է գալիս, վոր խրճիթվարն ավելի շատ իր գործերով է զբաղվում, քան քաղլուսաշխատանքով, մինչդեռ ռոճիկ ստանում է:

Քաղլուսկոմիտեներում ակտիվ մասնակցութիւնն չեն ցույց տալիս միքանի գյուղերում մեր խրճիթվարները: Այդ պատճառով դրանք անգործունյա հիմնարկ են մնում, թղթի վրա, և շուտով էլ մոռնում:

Մյուս կողմից գիտենք, վոր մեր խրճիթվարների աշխատավարձը շատ քիչ է: Այդ բանը նրանց շատ է խանգարում: Նրանք ստիպված են լինում այդ պատճառով ուրիշ գործ ել կատարել, վորպեսզի կարողանան իրենց ընտանիքը պահել: Սա, իհարկե, ընդունելի պատճառ է թույլ աշխատանք տանելու համար: Պիտի ամեն կերպ աշխատենք աշխատավարձը բարձրացնել, քաղլուսաշխատողների նյութական դրութիւնը լավացնել: Բայց մինչ այդ աշխատանքը պիտի չթուլացնել: Խրճիթվարը միշտ իր դիրքում պիտի լինի: Այնքան, վորքան հանձն է առնում այդ աշխատանքը տանելու, նա իր վրա դրված պարտականութիւնը պիտի բարեխիղճ կերպով տանի: Մեզ հարկավոր են ակտիվ, գործը լավ հասկացող, կրթված և բարեխիղճ քաղլուսաշխատավորներ և մեր գավառները պիտի այդ պատրաստեն, առաջ քաշեն նոր աշխատողներ, վերապատրաստեն յեղածներին և կուսգործավարտներին առաջին հերթին գործի քաշեն:

5. ՄԻՔԱՆԻ «ՄԱՆՐ» ԲԱՑԵՐ

Բացի այն խոշոր բացերից, վոր մենք նկատեցինք վերևում, կան մի շարք հարցեր, վորոնք, իսկապես, այնքան «մանր» են համարվում, վոր մեր գավաղլուսվարների ուշադրութեանը չեն արժանանում: Մինչդեռ դրանք մանր հարցեր չեն, այլ կարևոր, աչքի ընկնող բացեր: Գյուղացիութիւնը խրճիթ հաճախելիս այդ կողմերը չի կարող ի նկատի չունենալ:

Այդ կարևոր բացերից մեկը, բայց վորի մասին քիչ են հոգում՝ ուղղելու համար՝ դա վերաբերմունքի հարցն է գյուղացիութեան նկատմամբ: Լավ և ընկերական վերաբերմունքը հնարավորութիւն է տալիս գվարթ մթնոլորտ ստեղծելու խրճիթի շուրջը: Մեր խրճիթվարներն այդ տեսակետից իրենց չոր չինովներիկ պես չպիտի պահեն, այլապես խրճիթը կուլտուրական կենտրոնից կփոխվի մի անհաջող վարչական կենտրոնի: Ամեն կերպ պիտի աշխատել այդ վտանգավոր կողմերը վերացնել, վորի համար դավաղլուսվարները և քաղլուսկոմիտեներն ուսումնասիրութեան նյութ պիտի դարձնեն այդ դրութիւնը, շեշտեն այդ իրենց գեկուցումների մեջ և, ընդհանրապես, վերաբերմունքի հարցը աշխատանքի հետադոման և բացերի վերացման բնագավառում աչքի ընկնող հարցերից մեկը պիտի դառնա, և կարիք չկա մատների արանքով նայել դրան և ասել՝ «վոչինչ», լավ տղա

յի (այս-ինչ քաղաքաշխատողը), ջահել և, կուղղվի: Սա անհոգ վերաբերմունք է և անպայման լուրջ ուշադրութեան արժանի:

Մյուս «մանր» բացն այն է, վոր յերբեմն խրճիթը չի կարողանում լավ կապ հաստատել հասարակական և խորհրդային ու կուսիճնարկների հետ: Այդ դեպքում կամ նա իրեն թույլ է համարում այդպիսի մի գործ կատարելու, կամ շատ ուժեղ է զգում, այն աստիճանի, վոր այդպիսի կապի կարելքը չի զգում: Յերբեմն ել այդ կապը հասկացվում է վոչ իբրև կենդանի, լայն աջակցության և ակտիվ աշխատանքի կապ, այլ վարչական և ձևական: Իհարկե, այդպիսի կապը պետք է: Կապ ասելով պիտի հասկանալ՝ կենդանի, ակտիվ աշխատանքի, ոժանդակության և ինքնագործունեության մի կարևոր միջոց, վորովհետև առանց այդպիսի կապի անհնար է աշխուժ և բովանդակալից աշխատանք տանել խրճիթում: Կան այդպիսի կղզիացած, ինքն իր մեջ ամփոփված, դրսից կտրված խրճիթներ, վորոնք, ինչ խոսք, վոր մեզ համար անպետք են:

Մեր խրճիթը պիտի լինի մի այնպիսի կենտրոն, վորին պիտի կապված լինեն գյուղի կամ շրջանի բոլոր կազմակերպությունները, լավագույն և ակտիվ, կուլտուրապես զարգացած գյուղացին, ինչպես և ուսուցիչը, գյուղատնտեսը, բժիշկը, բուժակը և այլն: Այդպիսի խրճիթը կարող է իրական և իսկապես լավագույն աշխատանք տանել:

Մի ուրիշ «մանր» բաց է այն, վոր մեր խրճիթներում լավ կահավորություն չկա. վոչ միայն այդ, այլ և յեղած դեպքում այնպես անշնորհք և թափթփված է դասավորված, վոր վոչ մի գեղեցկություն չկա, մաքրություն չկա: Մեր բոլոր քաղկաղմակերպությունները պիտի ամեն կերպ աշխատեն, վերջիվերջո, միջին շնորհքի բերել մեր խրճիթները, վորի համար արհրաժեշտ է միջանի հատ իրեր գնել, պատկերներ և պլակատներ ձեռք բերել և հետո կանոնավոր դասավորել, վորպեսզի խրճիթը գեղեցիկ տպավորություն թողնի և մաքրության և հաճելի անկյուն դառնա հաճախողների համար: Վատ զարդարված և կեղտոտ խրճիթը չի կարող հասարակություն գրավել: Խրճիթը պիտի իր ամբողջությամբ օրինակ դառնա մյուսների համար, և ամեն մեկը մտնելիս իր հետ այն գիտակցությունը պիտի տանի, թե իր բնակարանն էլ այդպես պիտի կարգավորել և մաքուր պահել:

Իսկ այս խնդիրը պակաս կարևոր հանգամանք չէ մեր խրճիթավարների համար, պակաս հոգսի առարկա է: Այս առթիվ

մենք մի շարք շրջաբերականներով և վորոշումներով հայտնել ենք բոլոր գավկեստրոններին, վոր չպիտի անուշադրութեան մատնել այդ կողմը: Ուրեմն անհրաժեշտ է, վոր խրճիթավարները լուրջ մտածեն այս վերջին հարցի մասին, վերանայեն իրենց խրճիթի ներքին դասավորությունը և մի լավ կարգի բերեն, վորպեսզի խրճիթն, իսկապես, կուլտուրական կենտրոնի տպավորություն թողնի:

6. ՅԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետադոտված յերկու գավառներում ուրիշ մի շարք վոչ պակաս կարևոր բացեր էլ կան, բայց հնարավորություն չկա միառմի թվել այդ բոլորը: Բավականանա՞նք այդքանով:

Նշած այդ յերկու գավառների քաղաքաշխատանքների մեջ նկատվող բացերը չի կարելի միայն նրանց վերագրել և վոչ ել միայն այնտեղ է նկատվում: Այդ բացերն այս կամ այն չափով ընդհանուր են համարյա բոլոր գավառների համար: Ուրեմն շատ հասկանալի է, վոր այստեղ, հիշած բացերի մասին խոսելիս, պիտի չմոռանալ և մյուս գավառները:

Ընդհանրապես մեր բոլոր գավառապետները պիտի լուրջ մտածեն այս յերկու գավառների աշխատանքների հետադոտման արդյունքների և դուրս բերված բացերի մասին: Դա դեռ բավական չէ. անհրաժեշտ է յուրաքանչյուր գավառում նույնպիսի հետադոտություններ կատարել և փորձել դուրս բերելու նման բացեր:

Վորոնք են այդ ընդհանուր բացերը, վոր նկատվել են հետադոտված գավառներում. --

ա) Ծրագրային աշխատանքի և մի ընդհանուր գծված վարքագծի բացակայություն:

բ) Հարվածային շտապ և թափթփված աշխատանք:

գ) Հրահանգման, ստուգման և անձնական շրջագայության բացակայություն:

դ) Նախահաշվի խախտում, ցանցի կամայական լայնացում:

ե) Աշխատավարձի չափի նկատմամբ կամայական և տարբեր մոտեցումներ:

զ) Գավառապետախորհրդակցության վորոշումների կիրառման բացակայություն:

է) Յեղած դրութեան անտեղի լավատեսություն, բյուրոկրատիզմ և կադրոնշինա:

ը) Նախապատրաստական ամառային աշխատանքների թույլ ընթացք և Քաղուսգլխավորի դիրեկտիվների կիրառման և կատարման բացակայություն:

թ) Լենինականի գավառապետի ծաղկեցրած և «հարուստ» գեկուցումների պատճառով սխալ պատկերացում ամբողջ գծով:

ժ) Հասարակական, խորհրդային և կուսմարմինների հետ կապի թուլություն, վորի պատճառով և թույլ ղեկավարություն:

Ահա կարևոր և աչքի ընկնող յեղբակացությունները և բացերը, վոր պիտի շեշտենք հետադուրով և նյութերի հիման վրա:

Լենգավառապետը, ինչպես և մասամբ Եջմիածնի գավառապետը պիտի շտապեն իրենց սխալները և բացերը հենց այս ուսումնական տարում շտկելու և վերացնելու այս առթիվ արդեն ուղարկված շրջաբերականներով և դիտողություններով: Մեր ընկերները պետք է շտապեն իրագործելու մեր դիտողությունները, և քաղուս ամբողջ աշխատանքը պետք է ամենակարճ ժամանակամիջոցում Լենգավառում վերականգնվի և Եջմիածնի գավառում շտկվի ու աշխուժացվի:

Մեր մյուս գավառապետները թող ի նկատի ունենան այս դասը և նույնպես աշխատեն իրենց գավառներում յեղած նման բացերը հենց այս ուսումնական տարում վերացնել:

Մենք դեռ ժամանակ ունենք և հնարավորություն այդ աշխատանքը կատարելու, ուրեմն, առանց թուլացնելու աշխատանքի թափը, աշխուժացնենք և կենդանացնենք Լենգավառում քաղուսաշխատանքը, ինչպես և մյուս գավառներում իրագործենք մեր կազմակերպությունների վորոշումները, առաջին հերթին 13-րդ կուսհամագումարի և գավառապետների խորհրդակցության առաջարկները:

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍԵՂԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆԳԸ ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Դեռ 13-րդ կուսհամագումարի բանաձևում գյուղում տարվելիք կուլտուրական աշխատանքների մասին ասված է՝ ամենակարևոր աշխատանքը խրճիթ-ընթերցարաններում պիտի լինի տեղակատու բյուրոյի (բառիս ամենալայն իմաստով) աշխատանքը: Այս նպատակով ել ամեն մի խրճիթ-ընթերցարանին կից պիտի կազմակերպված լինի տեղեկատու սեղան:

Գյուղական մասսան մեր կառավարությունից հիմնական և այժմ հրատարակվող որենքներին քիչ է տեղյակ: Նա դեռ բաշխված չէ չափով ծանոթ չէ նույնիսկ գյուղատնտեսական ասպարիզում տեխնիկայի կատարելագործված ձեւերին, նվաճումներին ու այդ բնագավառում Խորհրդային իշխանության կողմից ձեռնարկված աշխատանքին: Նա քիչ բան գիտե իր, իբրև քաղաքացու, իրավունքների և ընտանեկան իրավունքների, պարտականությունների մասին: Նա քիչ գիտե բանվորների այժմյան նյութական դրության և գործարանային կյանքի ու մեր արտադրողականության մասին: Այս բոլորի վերաբերյալ, ճիշտ է, նրան հաճախ լուրեր հասնում են, բայց շատ դեպքերում կիսա-թերի և աղավաղված ձևով, այնինչ այդ բոլորի գիտնալը շատ կարևոր է գյուղացու համար, քանի վոր դա կարագացնի հնից նորին անցնելու պրոցեսը:

Լրագրի, մանավանդ գրքի ընթերցանությունը պահանջված չափով չի կարողանում շահագրգռել, հետաքրքրել գյուղացուն: Այդ աշխատանքն այնքան ել չի կապվում նրա ամենօրյա հոգսերի, կարիքների հետ: Տուր գյուղացուն հետաքրքրող հարցերին «կտրուկ պատասխաններ» — «Բ՛լ» պիտի դիմի վարկստանալու համար, ինչի համար է նա միասնարկ վճարում, «Բ՛լ» դիմել՝ յեղը, վոչխարը, կովը հիվանդանալիս, կամ լրիվ հողաբաժին ստանա-

լու համար... Դրա հետ մեծամասնակ տուր իրեն կարգալու կամ ինքը կարգա տրված հարցի համապատասխան բովանդակությունը գրքույկ կամ լրագիր:

Նա կբավարարվի, գոհ կմնա և կշարունակի հաճախել խընձիթ-ընթերցարան: Տեղեկություններ տալն ամենալավ միջոցն է մասսային խընձիթ-ընթերցարան քաշելու համար:

Սովորական գրականության միջոցով գյուղում կոմունիստական իդեալներ տարածելը չի տալիս պահանջված արդյունքը: 13-րդ կուսհամագումարը հաստատեց, վոր «սովորական ագիտացիան և պրոպագանդան քիչ են շոշափում գյուղը, վորովհետև լրագիրն ու գրքերը գյուղ չեն հասնում, ինչպես և գյուղացիների համար այնքան էլ հասկանալի չեն»: Կոմունիստական իդեոլոգիայի տարածման խնդրում տեղակատու սեղանի աշխատանքն անփոխարինելի չէ: Ամեն մի տեղեկանք՝ գեպքերի, յերևույթների նկատմամբ՝ կարող է լիովին կոմունիստական մոտեցում ունենալ: Գյուղացիական ամենաշարաքայտիկ տեղեկանքները՝ հողային հարցի, հողաշինարարության, հողային և քաղաքացիական որենքների շուրջ ինքնըստինքյան միջոցներ են կոմունիստական պրոպագանդայի համար:

Տեղեկատու սեղանի աշխատանքը կարելի չէ լավ համարել այն դեպքում միայն, յերբ գյուղացին խընձիթ-ընթերցարան է գալիս, խոսում, հարցումորձ անում առանց քաշվելու, առանց վորեն յերկյուղ կրելու: Այստեղ նա իրեն պետք է զգա այնպես, ինչպես իրեն տանը: Անպետք է այն տեղեկատու սեղանը, յերբ գյուղացին դիմում է նրան իբրև մի պաշտոնական հիմնարկության:

Այստեղ գյուղացին պիտի բացի իր սիրտն ամբողջությամբ, բացի բոլոր իր հույսերն ու կարիքները, նրան հետաքրքրող հարցերն ու դեպքերը՝ ամբողջովին համոզված լինելով, վոր այդ բոլորի համար նա կստանա իրեն միանգամայն բավարարող վերջնական և ճիշտ պատասխաններ: Տեղեկատու սեղանի վրա պարտականություն է դրվում՝ մանրազնին կերպով ուսումնասիրել գյուղացու հոգսերը, կարիքներն ու խնդիրները, գյուղի բոլոր հիվանդագիրն կողմերն ու յերևույթները:

Այսպիսով տեղեկատու բյուրոն պիտի լինի կուսակցության և բանվորության համար գյուղացիության լայն մասսայի տրամադրության ու հույսերի, սպասելիքների և վորոշումների արտահայտիչը, տեղեկատու աղբյուրը:

Մեզ մոտ գյուղերում դեռևս գոյություն ունեն՝ հանցագործություն, բյուրոկրատիզմ և գյուղական տեղական վարչական իշխանության ապրիսի գործունեության դեպքերը: Ինչի՞ յե պետք որենքը, ինչքան էլ նա գեղեցիկ ու հրաշալի լինի, յերբ նա վոչ միայն կյանքում չի կիրառվում, այլ գործադրվում է հաճախ միանգամայն աղավաղած, իսկությունը չհամապատասխանող, միանգամայն հակառակ մտքով:

13-րդ համագումարը հաստատեց, վոր «գյուղի չքավոր մասի շահերը պաշտպանող մի շարք որենքներ, շնորհիվ խորհրդային ապարատի թերությունների, գյուղ չեն հասնում»: Այս յերևույթի դեմ պայքարելը համագումարը համարում է ամենաանհետաձգելին: Խոշոր տեղ է տվել նաև խորհրդային ստորին ապարատի բարելավմանը, բյուրոկրատիզմի և որենքների աղավաղման դեմ պայքարելուն: Յեվ այդ ամենակարևոր պայքարում տեղեկանքը կարող է վոչ պակաս դեր խաղալ: Տեղեկատու սեղանն իր ամենորյա աշխատանքների ընթացքում նկատի պիտի ունենա այդ ամենագլխավոր խնդիրը: Կուսկազմակերպությունների, մամուլի, դատական որդանների միջոցով տեղեկատու սեղանը բյուրոկրատիզմի յեվ հանցագործությունների դեմ պայքարելու գործում պետք է յեվ կարող է լինել առաջինը:

Գյուղի կուլտուրական մակարդակը շատ ցածր է: Նրա բարձրացումը—ամենալավ ուղին է դեպի կոմունիզմը: 13-րդ համագումարն ասում է, վոր ամեն մի քաղաքական աշխատանք նրանում (գյուղում) անխուսափելիորեն կապված պիտի լինի գրագիտության բարձրացման, ամենանեմենտար տարրական գիտելիքների տարածման հետ:

Կուլտուր-լուսավորական աշխատանքներից կտրված տեղեկատու սեղանը չի կատարում իր վրա դրած պարտականությունների 50 տոկոսը, այդպիսի աշխատանքն անպետք է: Լավ է այն տեղեկանքը, տեղեկատու սեղանի այն աշխատանքը, վորը կազմում է գյուղի ընդհանուր կուլտուրական վերելքի անբաժան մասը:

Մի կարևոր հանգամանք էս. գյուղացուն այս կամ այն տեղեկանքը տալով՝ միշտ էլ հնարավոր կլինի հետաքրքրություն առաջ բերել նրա մեջ դեպի գրքերն ու լրագրերը: Տեղեկանքի միջոցով դեպի գիտություն, դեպի լրագիր, դեպի գիրք—ամա տեղեկատու սեղանի մեծակամ յոգունգը:

ԻՆՉՊԵՍ ՏԱՆԵԼ ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍԵՂԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Հիմնովին սխալ է գործի այնպիսի դասավորումը, յերբ ամբողջ աշխատանքը ծանրաբեռնում են միայն մի ընկերոջ վրա: Գյուղացիության շահերն ու պահանջներն այնքան բազմազան են, այնքան տարբեր, վոր մի մարդ վոչ մի դեպքում էլ կարող զբանց լիովին բավարարություն տալ: Առանց գյուղի կուսակցական բոլոր ընկերների և խորհրդային աշխատակիցների ակտիվ մասնակցության խրճիթ-ընթերցարանի տեղեկատու սեղանի լավ աշխատանքի մասին մտածել անգամ էլ կարելի: Ամենից առաջ գործի պիտի հրավիրել բոլոր կուլտուրական ուժերը՝ ուսուցչին, գյուղատնտեսին, բժշկին, անասնաբուծին և այլն: Անհրաժեշտ է շրջ. խրճ. ընթ. տեղեկատու սեղանի աշխատանքներին մասնակից դարձնել շրջգործկոմի ներկայացուցչին, հողբաժնի վարչին, միլիտանտին դատավորին կամ քննիչին, ֆին-տեսչին և մյուս բոլոր պաշտոնյաներին: Հարկավոր է հերթակալություն նշանակել. միայն կարևոր է, վոր բոլոր ընկերները գիտենան, վոր նրանք վոչ թե կառավարում են, այլ իրենք զբաղվում մեծ ծառայություն են մատուցանում գյուղացուն: Այս բոլոր աշխատանքները կատարվում են կուս. բջիջի անմիջական հսկողությամբ ու ղեկավարությամբ:

Հարցերին պիտի տրվեն հնար յեղածին չափ շտապ և միտքն ամբողջովին ընդգրկող պատասխաններ: Վոչ մի դեպքում գյուղացիներին չպիտի կեղտկեղ սխալ և անհամապատասխան պատասխաններով ու տեղեկանքներով: Պետք է հաբցը լուրջ ուսումնասիրել, ապա պատասխանել: Չիմանալու դեպքում լավ է պատասխանել՝ «չգիտեմ», բան թե տալ բոլորովին սխալ պատասխան: Լավ է հարկադրել գյուղացուն սպասել յերկու-յերեք օր, բայց տալ գործնական և նրան բավարարող պատասխան:

Գյուղացիությունը շատ հաճախ ցանկություն է ունենում պատի լրագիրը կարդալու: Այս գործում ևս ողնություն պետք է գա տեղեկատու սեղանը: Հարցերի պատասխանները վորոշ դեպքում գրվում են պատի լրագրի մեջ. դրանով ստիպում են գյուղացիներին պատի լրագիրը կարդալ և առհասարակ նրանով հետաքրքրվել: Սովորեցնել գյուղացիներին թերթ կարդալ՝ նշանակում է հարկադրել նրանց նաև գրել թերթում ու դրանով ճանապարհ բանալ գյուղթղթակից դառնալու համար:

Բացի դրանից, գործի հաջողության տեսակետից, տեղեկատու սեղաններն ամենասերտ կերպով պետք է կապվեն օրջանային յեվ գավառային հիմնադրերի հետ: Հարկ յեղած դեպքում պետք է կերպով նրանցից պահանջել հարցերի պատասխանները, խնդիրը պարզաբանող նյութեր և տվյալներ: Հարկավոր է ամենաուժեղ կապ պահպանել «Մաճկալ» թերթի հետ. ցանկալի յեկապ ունենալ նաև ուսական «Беднота» և «Крестьянская газета» թերթի հետ: Այս թերթերն ունեն առանձին բաժին, վորտեղ տրվում են հարցերի պատասխանները: Տեղեկատու սեղանն այդ բաժինների տվյալներից կազմում է տեղեկանքի մի առանձին գրքույկ միշտ իր ձեռքի տակ ունենալու համար: Հաճախ ինքն է հարցում անում թերթերին, սովորեցնում է, առաջարկում գյուղացիներին, վոր նրանք ևս թերթի հետ կապվեն, հարցումներ անեն, կարգան թերթերում իրենց հարցերի պատասխանները: Դա ամենալավ միջոցն է գյուղացու պահանջներին բավարարություն տալու և միաժամանակ նրա մեջ հետաքրքրություն ու սեր առաջ բերելու համար դեպի լրագիրը, գրականությունը:

Իրեւ ոժտնդակ նյութեր խրճիթ-ընթերցարանում պետք է լինեն քարտեզներ, բառարաններ, որենագրքեր:

Տեղեկատու սեղանի համար նյութեր հավաքելու և դասավորելու, ինչպես և գյուղացիների համար դիմումներ, նամակներ, հայտարարությունների գրելու գործում առաջին տեղը պետք է բռնեն ԼԿՅՄ-ի անդամները: Նրանք պիտի լինեն խրճիթվարի և տեղեկատու սեղանի վարչի առաջին ոգնականները:

Հ ա ռ Վ ա ռ ու մ

Տեղեկատու սեղանը պետք է ունենա իր կատարած ամբողջ աշխատանքի մանրամասնին հաշվառումը: Ամեն մի հարց ու դիմում, ամեն մի տեղեկանք պետք է գրի առնվի: Այնպես պետք է անել, վոր ամենաշնչին խնդիրն անգամ առանց հաշվառման չմնա: Ամիսը մեկ անգամ պետք է տված հարցերի, դիմումների, տեղեկանքների, պատասխանների ամփոփում կատարել և այդ ամփոփումները յերեք ամիսը մեկ խրճիթվարի ղեկուցման հետներկայացնել ուր հարկն է: Տիպիկ և ավելի հետաքրքիր հարցերի վերաբերյալ անհրաժեշտ է տեղեկություն տալ նաև կենտրոնին: Չափազանց կարևոր է սեղանի աշխատանքների հետաքրքիր մոմենտները լուսաբանել մամուլի մեջ:

	Մ Ն Ս կալգի.
	Յնէր է խնդիրն քն- դունդիւ.
	Ո՞ւ մ է ց է խնդիրը
	Խնդրի հա- մատութեան վանդակ.
	Յնէր է ովիւ պա- տարանը
	Ո՞ր է տիւ պատան- խանը
	Պատասխա- նի համատու բոխանդի.
	Ի՞նչ նորթ է հիշք ծա- ռայելի պատ,- տանու հա-
	մա
	Ծանոթու- թյուն

Այսպիսով լաշյն կերպով տրված և կուս. ու վարչական մարմիններին, կուլտուրական ուժերին, ղեկավար որգանների և թերթին հետ սերտորեն կապված, իր ամբողջ աշխատանքը ճիշտ հաշվառման յենթարկված գործը հուլյս կնեքշնչի մեղ տեղեկատու սեղանի աշխատանքը լավ հիմքերի վրա դնելու համար:

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍԵՂԱԼԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես քաղղուսաշխատանքն իր ամբողջությամբ, այնպես
եւ մասնավորապես խրճիթ-ընթերցարանի տեղեկատու սեղանը
պետք է աջակցի կուսակցությանը և Խ. իշխ.-նը կազմակերպչա-
կան խնդիրներում, նպաստի բատրակների ու չքավորների կուլ-
տուրական մակարդակի բարձրացման գործին, ընդառաջ գնա
գյուղի միջակ դասի պահանջներին և եւ ավելի ամրացնի չքավորի
ու միջակ գյուղացու, բանվորության ու գյուղացիության միջև
գոյություն ունեցող դաշինքը: Քաղղուսի առաջ դրված այդ կա-
րևորագույն խնդիրները վոչ մի դեպքում տեղեկատու սեղանն
իր աշխատանքների ընթացքում աչքաթող չպիտի անի: Սրանք
են կազմում քաղղուսաշխատանքի հիմքը, սրանցով պետք է ղե-
կավարվի:

Ի՞նչպես ոգնել չափորին

Տեղեկատու սեղանը չի կարող և չպիտի ոգնի գյուղի կուլ-
լակին: Սակայն վորո՞վհետև տեղեկատու սեղանի հիմնական խըն-
դիրներից մեկն ել գյուղացիական լայն մասսաների մեջ հեղա-
փոխական որենսդրության ժողովրդականացումն է, դրա համար
եւ թույլատրելի չի հոգուտ չքավորի՝ որենքի վորեն խախտում:
Արգելվում է կողմնապահ վերաբերմունքը: Որենքը կազմված է
աշխատավորության կողմից հենց իր աշխատավորության շահերը
պաշտպանելու նպատակով: Որենքն իրավունք և հնարավորու-
թյուն է տալիս պայքարել կուլակության դեմ: Որենքի սահման-

Ներկից դուրս ամեն մի վերաբերմունք ու կատարած փոքրիկ դեպք պետք է համարել ավելորդ ու ֆլասակար: Միայն անհրաժեշտ և սովորեցնել, հասկացնել չքավորին, թե ինչպես ոգտվել գոյու-թյուն ունեցող որենքներին:

Զքավոր գլուղացին թե տնտեսական և թե քաղաքական հարցերում ավելի քիչ ե ակտիվ, քան միջակը: Նրա կուլտուրական մակարդակը ավելի ցածր ե. չքավորների մեջ ավելի շատ անգրագետներ ու կիսագրագետներ կան: Դրա համար ել տեղեկատու սեղանը դեպի չքավորը պիտի ունենա առանձին մոտեցում և առանձնահատուկ ուշադրություն դարձնի նրանց առավարժություն հարգերի, դիմուհիների ու խնդիրների վրա:

Պետք է դիմել միջոցների, վորպեսզի չքավոր գյուղացին իր կյանքի բոլոր ասպարեզներում ակտիվություն առաջ բերի: Այս նպատակով ել շատ դեպքերում չպիտի սպասել, վոր չքավորը նրան դիմի, հարցնի, խնդրի, այլ հարկավոր է վաղորդք նրա կարիքները, պահանջները լավ ուսումնասիրելուց հետո հրավիրել խրճիթ-ընթերցարան և որենքների ու իրենց իրավունքների վերաբերյալ տալ բացատրություններ, իսկ, կարիքի դեպքում՝ զրույցի մեթոդով պարզարանություններ տալ նաև առանձին-առանձին տնտեսություններին: Վորովհետև չքավորին ոգնելու գործը կարևորագույն խնդիրներից մեկն է, դրա համար ել տեղեկատու սեղանների այդ ուղղությամբ կատարած աշխատանքն անպայման պետք է համաձայնեցվի կուսբյիջի և խրճիթ-ընթերցարանի այդ նպատակով ձեռնարկած աշխատանքին, վորպեսզի ոգնության պայքարը լինի ավելի լրիվ, մշտական և բազմակողմանի:

ԽՈՆՃԱԿԵԱ ՈՂՈՆԵԼ ԲԱՏՐԱԿԻՆ

Տեղեկատու սեղանի կողմից պակաս ուշադրության նպատի արժանանան և բատրակները, վորոնց թիվը մեր գյուղում զգալի չէ, և վորոնք վորոշ տեղերում նույնիսկ չեն ել կազմակերպված: Բատրակի դրությունը գյուղում ավելի ծանր է, քան չքավորինը: Նա կուլակից ավելի շատ կախում ունի: Բատրակների մեջ ավելի շատ անգրագետներ կան: Բատրակի կուլտուրական մակարդակը ավելի ցածր է: Բատրակներին շահերը պաշտպանելու նկատմամբ տեղեկատու սեղանի առաջ դրվում է յերկու խնդիր. մի կողմից պետք է նպաստել, վոր բատրակը ճիշտ ըմբռնի իր իրավունքներն և վարձակալության վերաբերյալ աշխատանքի որենսդրությունը: Իսկ մյուս կողմից պետք է լայն կերպով պարզաբանել, հասկա-

ցնել, վոր նա իր իրավունքները, շահերը պաշտպանի պայմանա-
գրեր կնքելու կարգով և գյուղանտառ միությանն անդամակցելու
միջոցով: Շատ կարևոր է վերջինը. վոչ մի բատրակ դուրս չպի-
տի մնա կազմակերպությունից: Տեղեկատու սեղանը բատրակների
մեջ տարվելիք իր բոլոր աշխատանքը պետք է համաձայնեցնի
գյուղանտառ միության հետ:

Ընդհանուր գիտությունը պատասխանների վերաբերյալ

Տեղեկատու սեղանը վոչ մի հարց, ինչ բովանդակությամբ ել
ուզում է լինի, չպիտի թողնի անհետևանք: Ամեն մի հարցի համար
գյուղացին պիտի պատասխան ստանա: Յեթե տեղեկատու սեղանն
անկարող է վորևէ հարցին պատասխանել, պետք է խորհուրդ տա
գյուղացուն՝ ում և ինչպես դիմել իր հարցով: Պատասխանելուց
միանգամայն հրաժարվելն անթույլատրելի է, վորովհետև նման
վերաբերմունքը գյուղացուն կդնի անոգնական դրուժյան մեջ և
վատ կանդրադառնա ընդհանրապես աշխատանքների վրա: Այդ-
պիսի դժվար դրուժյունն չստեղծելու համար տեղեկատու սեղանը
բոլոր հարցերին պատասխաններ տալու նպատակով վաղորդ
պետք է տանի համապատասխան աշխատանք: Նա պետք է նա-
խատեսի, թե մոտ ապագայում ինչպիսի հարցեր ու պահանջ-
ներ են դրվելու նրա առաջ և ըստ այնմ նյութեր հավաքի դրանց
բավարարություն տալու համար: Միանգամից պարզ և վորոշակի
պետք է գիտենալ, թե ինչով է ապրում գյուղը, վորոնք են նրա
կարիքներն ու պահանջները և ինչպես կարելի է տեղեկատու
սեղանի միջոցով նրան բավարարել:

Առհասարակ տեղեկատու սեղանին առաջադրված հարցերը
կրում են գլխավորաբար սեզոնային բնույթ. որինակ՝ միասնա-
րկի գանձման ժամանակ հարցերի մեծ մասը կկրի հետևյալ
բնույթը՝ յե՞րբ վճարել (ժամկետները), ի՞նչ չափով և ի՞նչ կար-
գով վճարել: Հերթական գինակոչի ժամանակ կլինեն այլ բնույթ-
ի հարցեր. ի՞նչ արտոնություններ են տրվում կարմիր-բանա-
կայիններին, ովքեր են ազատվում, ժամկետների և զորակոչի
կարգի մասին: Բնական վորևէ պատահարից հետո, որինակ՝ կար-
կըտահարությունից հետո, կլինեն դիմումներ՝ ումից նպաստ
ստանալ, ի՞նչ արտոնություն է տրվում նրան միասնարկի հար-
ցում և այլն:

Իհարկե, կլինեն նաև հարցեր, վորոնք վոչ մի կապ, առնչու-
թյուն չեն ունենա գյուղական կյանքի հետ. բոլորը թվել ան-
կարելի է: Բայց գլխավոր և կարևոր խնդիրներն այս կամ այն

աշխատանքի սեզոնի ժամանակ կարելի է նշել և հետագա աշ-
խատանքների ընթացքում հարցերին պատասխանելու միշտ պատ-
րաստ լինել:

Գործնական ոգնություն

Չի կարելի բավականանալ հարցերին տեղեկատու սեղանի
կողմից միայն տրված պատասխաններով. անգրագետ կամ կիսա-
գրագետ գյուղացուն միայն տեղեկանք տալը դեռ բավական չէ:
Առանց գործնական ոգնություն նա քիչ դեպքում կկարողանա
ոգտագործել ստացած պատասխանը կամ տեղեկանքը: Վերցնենք,
որինակ, իրավաբանական բնույթ կրող խնդիրները: Շատ գյուղ-
ացիներ այս կամ այն խնդրի լուծման համար վոչ միայն չգիտեն
նր դիմել, այլ նույնիսկ թե ինչ կերպ, ինչ ձևով դիմել: Ճիշտ է,
Խորհրդային իշխանությունն ընդառաջ գնալով անգրագետ և կի-
սագրագետ գյուղացիությունը՝ դատական մարմիններին պարտա-
դրել է գրավորին հավասարազոր նաև բանավոր դիմումներ ու գան-
դատներ ընդունել, բայց և այնպես այդ դրուժյունն ել չի բա-
վարարում գյուղացիության վորոշ խավերին: Կան գյուղացիներ,
վորոնք վախենում են, վոր չեն կարողանա իրենց ուզածն ար-
տահայտել բանավոր, վախենում են, քաշվում, յենթադրում են,
վոր խոսելու ժամանակ կշփոթվեն, իրենց կկորցնեն, ուստի լրիվ
չեն անի և չեն ասի այն, ինչ վոր հարկավոր է: Այստեղ արդեն
տեղեկատու սեղանը պետք է այդպիսի գյուղացիների համար գրի
գանգատներ, դիմումներ ու խնդիրներ: Դրանով գործը վերջացած
չպիտի համարել: Պետք է միշտ կապ ունենալ համապատասխան
մարմինների հետ, հետաքրքրվել տված խնդրով ու արագացնել
նրա լուծումը: Չպետք է գրել այնպիսի դիմումներ, վորոնք ակն-
հայտ կերպով, պարզ և, վոր անհաջող հետևանք կունենան: Դի-
մումների և գանգատների աշխատանքն ավելի կանոնավոր ու
արդյունավետ տանելու համար կարելի է կազմել հետևյալ ձևով
առանձին տետրակ-մատյան.

№	Դիմում կողմից	Ամսա- թիվ	Ում համար և գրված դիմումը գանգատել և խնդրել այն	Ինչ հիմ- նավորված և ուղղված	Դիմումի գանգատի խնդրի բովանդակ- ությունը	Ինչ հետե- վանք է ու- նեցել	Դիմում գանգատ զրկել ստո- րագրով	Մանրոթու- թյուն

Հաշվառման այս ձևը հնարավորություն կտա հետևելու գրած
դիմումներին, գանգատներին և արագացնելու նրանց լուծումը:

այդպիսով գործնական աշխատանքը հաջող կընթանա. գյուղացիք կտեսնեն տեղեկատու սեղանի տված ոգուտը և կսկսեն վերաբերվել դեպի սեղանը մեծ վստահությամբ ու հավատով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԻՑ ՄԻՓԱՆԻՍՐ

Տեղեկանքներ տալու մասին պետք է մշտական և լայն կերպով հայտարարվի գյուղացիությանը: Դա կարելի չէ անել առանձին գրավոր հայտարարությունների միջոցով, վերոնք փակցնվում են մարդաշատ տեղերում—գյուղխորհրդի գրասենյակում, կոոպերատիվ խանութում, և բանավոր—գյուղական և հասարակական ժողովներում:

Սեղանի վերևում ագլտացիոն նպատակով պիտի փակցվի խոշոր պարզ տառերով գրված պլակատ: Ահա պլակատի ձևը.—

Այսեղ սեղեկատու սեղան է	
Տալիս է պատասխան հետեվյալ հարցերի շուրջը.	Ձեր գրում է՝
Հողային	Դիմումներ
Կոոպերատիվ	Գանդատներ
Կենցաղային	Խնդիրներ
Կուլտ-կրթական	Նամակներ
Արհմիության	Ցեղ բոլոր տեսակի
Ցեղ ուրիշ	գործնական թղթեր

Տեղեկատու սեղանի հայտարարությունների բովանդակությունը կարող է լինել բազմազան. բերենք մի քանի որինակ.

Կ Ա Ր Դ Ա՝

Ամեն կիրակի ժամը 10-ից մինչև 2-ը (այս-ինչ) խրճիթ-ընթերցարանում աշխատում է տեղեկատու սեղանը: Դյուղացու բոլոր կարիքներին ու հարցերին տալիս է ձրի խորհուրդ ու ոգնություն:

Տեղեկատու սեղանի բյուրո

Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի՝

Քեզ անհրաժեշտ է իմանալ՝ ինչքան պիտի միասնարկ տաս, հիմնարկությունների հասցեները, ինչպես բժշկել յեզը, կովը և շատ ուրիշ պատասխաններ: Անցիր խրճիթ-ընթերցարան, քեզ բոլորը կբացատրեն:

Տեղեկատու սեղանի բյուրո

Ը Ն Կ Ե՝ Բ

Անցիր խրճիթ-ընթերցարան, կխոսենք ու խորհուրդ կտանք քեզ՝ ինչպես բարելավել քո տնտեսությունը, ինչպես վարվել ուրիշ շատ խնդիրներում:

Տեղեկատու սեղանն աշխատում է ժամը

,,.....,,-ից մինչև ,,.....,,-ը

Տեղեկատու սեղանի բյուրո

ՊԱՏԻ ԼՐԱԳԻՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Յերբ խնդիր ե գրված՝ քաղաքականորեն դաստիարակել գյուղը և գյուղացիներին հոծ մասսաները ներս քաշել խորհրդային հասարակարգի շինարարության մեջ, այն ժամանակ գյուղական լրագիրը պետք ե բռնի կարևոր և հայտնի տեղերից մեկը։ Յեթե քաղաքում մենք ունենք վորոշ փորձ պատի լրագրի կազմակերպման և բարվոքման խնդրում, ապա գյուղում, գրությունը տակավին վատ կերպով ե հանդես գալիս։

Ի՞նչ ծառայություն կարող ե մատուցել գյուղի պատի լրագիրը։ Պատի լրագիրը գյուղում պետք ե դառնա խորհրդային ստորին ապարատի ամրապնդման և բարվոքման միջոցներից մեկը, պետք ե դրսևորի և բուժի գյուղական կյանքի բոլոր բացերն ու ախտերը։ Պատի լրագրի միջոցով մենք պետք ե ուժեղացնենք գյուղացիության ակտիվությունը և, վոր ամենագլխավորն ե, կազմակերպենք այդ ակտիվությունը։

Պակաս կարևոր խնդիր չե՝ ստեղծել իրեն՝ գյուղացիության միջից գյուղթղթակիցներին մի կադր՝ մի բան, վորը կարելի չե անել միայն պատի լրագրի միջոցով՝ կազմակերպելով և ամրապնդելով գյուղթղթակիցների շարժումը գյուղում, դնելով նրանց առաջ նահանգական և կենտրոնական մամուլի հետ սերտ կապ պահպանելու խնդիրը։ Վորն ե աչքի ընկնող գլխավոր բացերից մեկը, այդ գյուղթղթակիցների չմասնակցելն ե գյուղական պատի լրագրին։ Լրագրերը գրում են 2—5 հոգի, այն ել գլխավորապես գյուղի ինտելլիգենցիան։ Ըստ բովանդակության գրեթե պատի բոլոր լրագրերը չունեն «գյուղացիական դեմք», չեն շոշափում գյուղական տեղական կյանքի ցավոտ խնդիրները, բայց լեցուն են յերկար ծավալի հոդվածներով, վորոնք ընդհանուր, վերացական դիտողությունների բնույթ են կրում։ Լրագրերը գրեթե չեն արտացոլում կուսակցության քաղաքականությունը՝

«Յերեսներս դեպի գյուղ» լոգունգի հետ կապված, բացի այդ, թեպետ լրագիրը գրվում ե կիսագրագետ գյուղացու համար, բայց նրա լեզուն դժվար հասկանալի չե, լի չե ոտարագրի բառերով, մտքերը մանվածապատ են, այն ել յերկար նախադասություններով։ Նկատվում ե կոմբիջների մասնակցության բացակայությունը, ել չենք խոսում դեկավարության բացակայության մասին։ Ինչ վերաբերում ե արտաքինին ու ձևին, այստեղ պատկերը շատ խայտաբղետ ե։ Լրագրեր կան, վորոնք ընդունել են միանգամայն ուղիղ և նպատակահարմար ձև։ Կան և արտաքուստ շատ գեղեցիկ, ներկերով և թանաքով նկարներ, վորոնք արտացոլում են առաջին հոդվածների և ամբողջ համարի բովանդակությունը։ Հաճախ գործ են ածվում ուրիշ տեղերից կտրված և խեղժով կպցրած պատշաճ նկարներ և պատկերներ, վորոնք լավ են, պարզ տպված։ Բայց կան և պատի այնպիսի լրագրեր, վորոնց հարկավոր ե մոտենալ խոշորացույցով, վորպեսզի մարդ կարողանա կարդալ, դրանք գրված են մանր, անհասկանալի ձևագրով։ Փերականական սխալներով՝ հոդվածներն ըստ բաժինների չեն դասավորված։ Շատ դեպքերում լրագիրը գրվում ե յերկարությունով, դա աննպատակահարմար ե։ Բացի այդ՝ վերնագիրը վորոշ դեպքերում բնավ չի համապատասխանում լրագրի բովանդակությանը և անհարմար ե գյուղի համար։

Պատի լրագրի հերթական խնդիրներն են՝

1) Ուժեղացնել աշխատանքը գյուղացիների և գեղջկուհիների լայն ակտիվություն հայտնաբերելու համար։ Հարկավոր ե ձգտել, վոր գյուղացին լինի վոչ միայն սոսկ ընթերցող, այլ և ինքն ակտիվ մասնակցություն ունենա պատի լրագրի ստեղծման և կազմակերպման գործում։ Իսկ այդ իրականացնելու համար հարկավոր ե կազմակերպել գյուղթղթակիցների խմբակներ, դրանց մեջ քաշել գյուղացիներին, վորոնց առաջ վոչ միայն կազմակերպչական խնդիր դնել, այլ և ապացուցել նրանց մասնակցության կարևորությունը լրագրում, սովորեցնել նրանց գրել և այդ խմբակի միջոցով սերտ կապ ստեղծել բոլոր գյուղթղթակիցների և կենտրոնական մամուլի միջև, վորպեսզի պատի լրագրի շնորհիվ աճի, լայնանա և ամրանա գյուղթղթակցային շարժումը։

2) Պատի լրագիրը միայն այն ժամանակ գյուղացիների ուշադրությունը կգրավի իր կողմը, յերբ նա ունենա արտաքուստ գրավիչ տեսք։ Նախ և առաջ հենց ինքը ձևը, ֆորման պետք ե լինի լայնությունով, վորովհետև այդ հարմար ե կարդալու համար։

Վերնագրերի և առանձին վերնագրերի նկարագրողումը, հողված-
ները բաժինների վերածելը և ամեն մի բաժնին վերոջ տեղ հատ-
կացնելը, առանձին հողվածների ակնհայտնի դարձնելը և նկար-
ները, — այդ բոլորը պիտի անպայման տեղ ունենան լրագրում:

Պակաս նշանակություն չունի նաև լեզվի պարզությունը
և հասարակ լինելը: Հարկավոր է գրել գյուղացու համար հասա-
րակ, պարզ, հասկանալի լեզվով կարճ հողվածներ: Յեւ ահա այս-
տեղ է, վոր ուսուցչությունը պիտի ոգնություն դա մեր լրագրի
բարձրման գործում:

3) Լրագրական նյութի տեսակետից պահանջվում է վճռա-
կան բեկում դեպի գյուղացիական և տեղական ցավոտ խնդիրները:
Հարկավոր է ուշի-ուշով հետևել գյուղացիների բոլոր պահանջ-
ներին և հարցումներին, յեւելով այդ բոլորից՝ նախապես ընդգծել
պատի լրագրի հերթական համարների ծրագիրը՝ պահել: Միայն
տեղական նյութը, գյուղացուն հետաքրքրող հարցերի պարզա-
բանումը լրագրին կդարձնի ուշադրության արժանի:

4) Բացի խրճիթ-ընթերցարանների լրագրերից յերեմն լույս
են տեսնում լրագրեր նաև կոմյերիտական բժիշկների կողմից.
այսպիսով գյուղում հրատարակվում է 2 կամ ավելի լրագիր,
բայց վոչ մեկը դրանցից ուժեղ չի լինում: Դա առաջ է
բերում գյուղական առանց այն ել թույլ ուժերի նոսրացում: Մեր
տեսակետով ավելի նպատակահարմար է թույլ չտալ ուժերի
այդպիսի ջլատումը. պիտի կազմակերպել գյուղում մի ընդհա-
նուր լրագիր բոլոր կազմակերպությունների մասնակցությամբ.
Իսկ կոմյերիտիության կյանքի լուսաբանման համար այդ ընդ-
հանուր լրագրում հատկացնել մի հատուկ բաժին: Պատի լրագիրը
գյուղում նոր բան է: Այդ ուղղությամբ փորձ դեռ քիչ ունենք:
Լրագրի հետագա բարձրումը և ամրապնդումը հաջող կդնա
միայն այն դեպքում, յերբ ապահովված լինի կանոնավոր և կարող
ղեկավարությունը: Այդ պատճառով ել այդ կողմի վրա պիտի
դարձնել ամենալուրջ ուշադրություն, այն ել վոչ թե խոսքով,
այլ գործով, ինչպես կուսակցության, նույնպես քաղաքականների
կողմից:

Ստորև բերում ենք գործնական միջանի առաջարկներ. —

ա) Տարեկան մոտ յերկու անգամ կատարել լրագրերի պար-
բերական զննում — «սմոտը», հանել համապատասխան յեղրակա-
ցություններ և այդ հետադոտման ամբողջ պատկերն ուղարկել
տեղերին, վորպես ուղեցույց:

բ) Կարգավորել պատի լրագրերի ամենօրյա ղեկավարու-
թյունը՝ քաղաքական ղեկավարի ներկայացուցչի կամ գավառական կոմի-
տեյի ագիտ-պրոպ Բաժնի միջոցով՝ տալով գործնական ցուցմունք
լրագրի ամեն մի համարի համար:

գ) Լրագրի բարձրման և ամրապնդման գործում կարևոր
նշանակություն պիտի տալ պարբերական խորհրդակցություն-
ներին, վորոնք կհրավիրվեն խմբագրական անդամների կողմից
կողմից գավառային լուսբաժիններին կից. վորպեսզի ապահովվի
կուսակցական աղբյուրությունը և լրագրի ղեկավարությունը, հար-
կավոր է, վոր խմբակցությանների կողմի մեջ մտնեն կուսակցա-
կան բժիշկների և ԼԿՅԵՄ-ի ներկայացուցիչները, նաև խրճիթա-
րներ: Ուսուցիչներին առաջիկա դասընթացներում գործնակա-
նորեն սովորեցնել պատի լրագրի տեխնիկական և հրատարակման
ձևերը:

Պատի լրագրի ուժեղացման խնդիրը միայն այն ժամանակ
կլուծվի, յերբ կուսկազմակերպություններն իրենց հարկավոր
ուշադրությունը կնվիրեն այդ կարևոր գործին:

«Պատի լրագիրը պիտի դառնա կուս., կոմյերիտական, գյուղ-
բժիշկների աշխատանքների ամենակարևոր ձևերից մեկը: Նա պի-
տի պայքարի գյուղատնտեսության բարձրման, կոոպերացիայի,
գյուղի կուլտուրական մակարդակի բարձրացման, չքավոր գյու-
ղացիության շահերի պաշտպանման համար, կուսակի կեղծման
ձգտումների, ինչպես և վարչության որինազանցության դեմ:
Կուսկոմիները պիտի ուժեղացնեն պատի լրագրի աշխատանքի դե-
կավարությունը»:

Այդպես ասաց 13-րդ կուսակցական համագումարը:

Մենք չպիտի մոռացություն տանք այդ կարևոր վորոշումը
և պիտի իրագործենք ամենակարճ ժամանակում:

ՊԱՏԻ ԼՐԱԳՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Հասակավոր գյուղացիությունը շատ թույլ է մասնակցում
մեր պատի լրագրերին: Դրա գլխավոր պատճառն այն է, վոր
գյուղացիությունը պատի լրագրի վրա նայում է վորպես թեթե-
վակի մի գործի կամ մի աշխատանքի վրա, վոր քիչ ոգուտ է
տալիս:

Մեր խմբակցության գլխավոր հայտարարությունները, ինչ-
պես, որինակ, «Գյուղացիք, գրեցեք պատի լրագրի համար» բանա-

վոր հայտարարութիւնները գյուղացիական ժողովներում, կան-
չելով գյուղացուն—«Գրել այս որերս լույս տեսնելիք պատի լրա-
գրի համար»,—հալիվ թե համոզեցուցիչ լինեն գյուղացուն: Գյու-
ղական պատի լրագրի խնդիրները, գյուղի կոնկրետ ոգուտը—
հաղկվ թե հայտնի լինի գյուղացուն, վորովհետև այդ ագիտացիա-
ները՝ գրավոր թե բանավոր՝ համոզեցուցիչ չեն և չեն բացատրում
հարկավոր չափով քաղլուսվարական այդ խնդիրները:

Գյուղապատրագրի խմբակուլագիտայի և խրճիթվարների համար
առաջնակարգ խնդիր պիտի լինի՝ պատրագրի աշխատանքի հա-
մար առաջ քաշել հասակավոր՝ գյուղացիութեանը: Ինչպես ցույց
տվեց փորձը, պատի լրագրի համար մղած ագիտացիոն միջոց-
ները, վորոնք առաջ ելին գործադրվում, բավական չեն, և գյու-
ղացիութեանը մնում է առանց մասնակցութեան:

Պատի լրագիրը լույս տեսնելուց հետո միայն «կախված»
չպիտի մնա պատին. նրան կարելի չէ ոգտագործել և այլ կերպ՝ խըր-
ճիթ-ընթերցարանի քաղլուսվարական աշխատանքի համար: Պա-
տի լրագրի ընթերցումը գյուղացիութեան մեջ հանդիսանում է
կամ, ավելի ճիշտ, պիտի հանդիսանա խմբակուլագիտայի աշխատան-
քի անմիջական շարունակութեանը, վոր կատարվում է լույս
տեսնող համարի նկատմամբ: Այդտեղ մենք ստանում ենք բավա-
կանաչափ մեծ ոգուտ: Նախ՝ միանգամից ծախթացնում ենք
սովար թվով գյուղացիութեանը պատրագրի նյութին, յերկրորդ՝
կարդացածի վերաբերյալ կազմում ենք զրույց և հայտնաբերում
թերութեան պատճառները, գնահատում դրական մոմենտները և
այլն, թե ինչ պիտի անի գյուղացիութեանը՝ գյուղում առաջա-
ցած բացերը վերացնելու համար:

Յերրորդ՝ մենք ավելի լրիվ ենք ծանոթացնում գյուղացիու-
թեանն այն խնդիրների հետ, վոր դրված են պատի լրագրի
առաջ:

Գյուղացիութեանը մեծ հետաքրքրութեամբ վերաբերվեց
դեպի այդ փորձի փորձից բղխած աշխատանքը: Յեւ այդ շատ
հասկանալի չէ. տեղական նյութը գյուղացուն շատ է գրավում,
և գյուղական նորութեանը յերեք չի կորցնում նրա համար իր
հետաքրքրութեանը: Նման ագիտացիայի հետևանքով հետևյալ
համարը լույս ընծայելիս մենք տեսանք, վոր 12 հասակավոր
գյուղացի գրավոր դիտողութիւններ ներկայացրին պատրագրի
մեջ գետեղելու համար:

Տվյալ մոմենտում նման զրույց-ընթերցումներ պիտի կա-

տարել բատրակների և գյուղի ամենաչքավոր մասի մեջ, դար-
ձնելով դրանց մշտական թղթակիցներ: Միանգամայն հասկանա-
լի չէ, վոր վերոհիշյալ բոլոր ձեռնարկումների ընթացքում գյուղ-
թղթակիցների խմբակների դերը (յեթե կան այդպիսիները) չա-
փազանց կարևոր է: Վերապահումով պիտի ասել, վոր պատի լրա-
գրի նյութի առատութեան պատճառով կարելի չէ այդ ամբողջը
չկարդալ, այլ ամբողջ ուշադրութեանը կենտրոնացնել տվյալ մո-
մենտի և տեղի համար ամենակարևոր խնդիրների վրա, վորից
հետո նախապես պատրաստվելով դրանց շուրջը՝ բանալ համա-
պատասխան զրույց:

Մի վերջին առաջարկ ևս. պատի լրագրերը, մանավանդ շըր-
ջանի, վորոնք արտացոլում են ամբողջ շրջանի կյանքը, չպետք
է շարունակ այդ շրջանում թողնել, այլ անհրաժեշտ է ուղարկել
կարմիր անկյունները, գյուղական խրճիթ-ընթերցարանները, վոր-
պեսզի այլ գյուղերի գյուղացիութեանը ևս իրագեկ լինի գյուղա-
կան աշխատանքի դրական և բացասական կողմերին:

Հնարավորութեան դեպքում ցանկալի չէ պատի լրագրի ըն-
թերցում-զրույցներ կազմակերպել նաև կարմիր անկյուններում:

ՊԱՏԻ ԼՐԱԳԻՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

(Ռ. Կ. Կ. Կենտկոմի 1924 թ. դեկտեմբերի 1-ի վորոշումը)

1. Պատի լրագիրը գյուղում հանդիսանում է գյուղի ամբողջ
քաղլուսվարական աշխատանքի մի մասը և պետք է կապվի խըր-
ճիթ-ընթերցարանի հետ:

2. Գյուղական պատի լրագրերի ղեկավարութեանը պիտի
իրենց վրա վերցնեն կուս. և ԼԿԵՄ բջիջները, վորոնք և տալիս
են իրենցից լրագրի խմբագրական կոլլեգիան: Վերջինիս մեջ կա-
րելի չէ առաջ քաշել ամենաառաջադեմ գյուղթղթակիցներին,
ինչպես և ուսուցչին, գյուղատնտեսին ու խրճիթվարին:

3. Պատի լրագրի խմբագրական կոլլեգիան իր աշխատանքի
նկատմամբ հաշվետու չէ բջիջի բյուրոյի առաջ և ղեկավարվում է
վերջինիս գերեկտիվներով:

4. Գյուղական բջիջների քաղաքային կուլտչեֆերը պիտի
ձգտեն լրագրին մասնակցելու համար տեղական գյուղացիներից
վորքան կարելի չէ շատ աշխատակիցներ առաջ քաշել, մանա-
վանդ յերիտասարդութեան միջից ու զորացրված կարմիր-բանա-
կայիններից:

5. Հարկավոր ե հատուկ ուշադրութիւն դարձնել, Վոր պատի լրագրի աշխատանքների համար առաջ քաշվեն գեղջկուհիները:

6. Համաձայն կուսակցութեան 13-րդ համագումարի մամուլի մասին հանած բանաձևի՝ պատի լրագրի հիմնական բովանդակութիւնը պետք ե լինի՝ գյուղական տնտեսութեան բարվոքման, կոոպերացիայի, գյուղական կուլտուրական մակարդակի բարձրացման խնդիրները՝ կապված տեղական առանձնահատկութիւնների հետ, չքավոր գյուղացիների պաշտպանութիւնը կուլակների ու տեղական այլ բացերի հանդեպ: Հարկավոր ե պատի լրագրի սերտորեն կապել ագրոկայանի և դպրոցի հետ:

7. Պարտադիր պետք ե համարել պատի լրագրում քաղաքական ինֆորմացիա (վերջին նորութիւններ) ղեկավարել:

ՊԱՏԻ ԼՐԱԳԻՐԸ ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑՄԱՐԱՆՈՒՄ

Պատի լրագիրը պիտի լինի գյուղական հասարակական կարծիքի կազմակերպողը և գյուղի կարիքներն ու պահանջները հայտնաբերողը: Նա պիտի արտացոլի իր մեջ տվյալ շրջանի կուլտուր-քաղաքական և տնտեսական դրութիւնը՝ լուսաբանելով թե գյուղական կյանքի բոլոր կոնկրետ ու դրական նվաճումները և թե նրա ցավոտ կողմերը: Լրագիրը լույս ե տեսնում խրճիթ-ընթերցարանին կից և հենց այնտեղ ել փակցվում ե. ստորե բերում ենք գյուղական պատի լրագրի մասին հանած թեզն ու հրահանգը, Վոր մշակել ե Մոսկվայի նահանգական քաղաքական պատի լրագրի նկատմամբ ունենալիք ղեկավարութեան և հովանավորութեան նպատակով կազմվում ե խմբագրական կոլեգիա մոտավորապես հետևյալ կազմով. — խրճիթ-ընթերցարանի վարիչ, կուս. և ԼԿՅԵՄ բջիջների, գեղջկուհիների և գյուղական մոտավորականութեան ներկայացուցիչները (գյուղատնտես, ուսուցիչ, բժիշկ և այլն): Լրագրի քաղաքական բովանդակութեան վերաբերյալ յեղած ընդհանուր քաղաքական ղեկավարութիւնը և հսկողութիւնը տրվում ե կուս. կազմակերպութեան ներկայացուցչին: Փաստական խմբագրումը և լույս ընծայման ամբողջ աշխատանքը հանձնվում ե խրճիթվարին: Գալառական պատի լրագրի ղեկավարութիւնն ու ուղղութիւնն ընկնում ե գալկոմի ագիտ-բաժնի վրա:

Պատի լրագրի աշխատանքներին մասնակից անելու համար

անհրաժեշտ ե առաջ քաշել գյուղացիների, գեղջկուհիների և յերիտասարդութեան լայն խավերին, առաջին հերթին գյուղթղթակիցներին:

ՊԱՏԻ ԼՐԱԳՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Պատի լրագիրը պետք ե քաղաքացի լինի ընդամենը 3—4 բաժնից:

Լրագրի համար առաջարկվում ե հետևյալ որինակելի ծրագիրը. —

1. ԸճԳԽԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ. — Համառոտ առաջնորդող տեղական կյանքի ցավոտ խնդիրների մասին:

2. ԽՈՅԱԿԱ Ե ԱՇԽԱՏՈՒՄ ՄԵՐ ԽՈՐԻՈՒՐԳԸ. — (խորհրդի և նրա ղեկավարների դրական և բացասական կողմերը):

3. ՆՈՐ ԽՈՊԱԳՈՐԾՈՒՅՈՒՆ. — Ա. Առաջավոր գյուղական տնտեսութիւնների նվաճումներն ու հաջողութիւնները. կոլեկտիվ և խորհրդային տնտեսութիւնների աշխատանքների մասին. ինչով են ոգնում խորհրդային տնտեսութիւնները գյուղացիութեանը:

Բ. Գյուղատնտեսական աշխատանքների որացույց: Հոգված սեղոնային գյուղատնտեսական աշխատանքների մասին, ցանքսի ժամանակը, ամառի տեղերի մշակումը, խոտհարքի և հացի հավաքման ժամանակը, պայքար ֆասատուների դեմ և այլն:

4. ԿՈՈՊԵՐԱՑԻԱ. — Ինչպես ե աշխատում մեր կոոպերատիվը, վարկային ու գյուղատնտեսական ընկերութիւնը (առևտրական, լուսավորական ու գյուղատնտեսական աշխատանքը), հացի գներն ու արդյունաբերութեան արտադրանքների գները, Վորոնք հայտարարվում են տեղական կոոպերատիվի ու տնտեսական մարմինների կողմից:

5. ՓՈԽԿՈՒՄՆԵՐ. — Փոխկոմիտեի աշխատանքը, նվաճումները, բացերը, չքավոր գյուղացիութիւնն առաջ քաշելու տեմպը:

6. ԳՅՈՒԼԱԿԱՆ ԵՐԻՅԱՍԱՐԳՈՒՅՈՒՆԸ. — Ինչպես ե աշխատում ԼԿՅԵՄ բջիջը (կուլտուրական ու գյուղատնտեսական խմբակներ), գյուղի յերիտասարդութեան ակտիվութիւնը կոմյերիտիութեան մեջ, հակադրոնական աշխատանքը, գյուղի՝ հասարակական կյանքին մասնակցելը:

7. ԳԵՂՋԿՈՒԽՈՒ ԿՅՈՒՆԸ. — Պատգաւաւորական ժողովի ապաւորաւոր, հասարակական կյանքին մասնակցելու տեմպը (գյուղխոր-

հուրդ, փոխկոմ, կոոպերատիվ և դպրոց)։ Գեղջկուհու կենցաղը (ընտանեկան հարաբերություններ, հակակրոնական խնդիրներ)։

8. **Քաղաքի յեվ գյուղը**։—Քաղաքի և գյուղի կապը (կուլտուրական, քաղաքական, տնտեսական և կազմակերպչական, շեֆ-աշխատանք)։ քաղաքի ապրանքների եփանացումը, արտադրողականությունը բարձրացումը և բարվոքումը։

9. **Ցեղեկություն բաժին**։—Նոր որենքների մեկնաբանումը հարց ու պատասխանի ձևով, պատասխաններ գյուղացիների հարցումներին։

10. **Խճ, պեօֆ և կարգա գյուղացի**։—Տեղեկություն լույս տեսած գրքերի մասին։

11. **Գրական բաժին**։—Գեղարվեստական պատմվածքներ, ֆելյետոններ և վոտանավորներ։

ՊԱՏԻ ԼՐԱԳՐԻ ԼՈՒՅՍ ՏԵՍՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Լրագիրը լույս է տեսնում վոչ պակաս, քան յերկու շաբաթը մեկ անգամ։ Բացառություն են կազմում այն արտակարգ համարները, վորոնք նվիրվում են անցկացվելիք կամպանիաներին (բերքի որ, Հոկտեմբերյան տարեդարձը, Մարտի 8-ը, Պարիզյան կոմսունան, Մայիսի 1-ը և այլն)։

ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Խմբագրական կոլեգիայի խնդիրների մեջ մտնում են—խմբակների մեջ համախմբել պատի լրագրերի աշխատանքներին կանոնավոր մասնակցող թղթակիցներին, վորոնք նպատակ ունեն թե քննել թղթակցությունները և թե քաղլուսվարական սիստեմատիկ աշխատանք տանել գյուղթղթակիցների միջև։

Խմբակները պետք է համախմբեն տվյալ բոլոր գյուղթղթակիցներին, վորոնք գրում են գավառային, նահանգական և կենտրոնական լրագրերում։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՊԱՏԻ ԼՐԱԳՐԻ ՏԵՍՆԵԼՈՒ

1. Պատի լրագրի արտաքին տեսքն հագին դեր է խաղում։ պետք է գրել այնպես, վոր հեշտ լինի կարգավոր, գյուղացիներին դեպի իր կողմը գրավի։ Նյութն այնպես պետք է դասավորել, վոր ամենակարևոր և անհրաժեշտ տեղերը դրսևորվեն, պարզ յեկան, աչքի ընկնեն։

2. Ցանկալի յե, վոր պատի լրագիրը գրված լինի հորիզոնական։ Բարձրությունը պիտի լինի մի արշինից վոչ ավելի, յերկարությունը՝ մեկ ու կես կամ յերկու արշին։ Անպատճառ հարկավոր է նկարազարդել լրագիրը, վորովհետև պատկերով հոգվածը ավելի շուտ կկարգացվի և ընթերցողի կողմից ավելի շուտ կըմբռնվի։ Նկարները չպետք է կուտակել լրագրի մի մասում, այլ հավասարաչափ պետք է բաժանել ամբողջ թերթում։

3. Ձգտել, վորպեսզի լրագրի բաժիններն ամեն անգամ տեղավորվեն լրագրի վորոշ մասերում։ այդ հանգամանքը կհեշտացնի լրագրի ընթերցումը նաև կիսագրագետ ընթերցողի համար։

4. Վոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ, վոր պատի լրագիրը տպվի գրամեքենայով, կամ տպված ուրիշ լրագրերից հողվածներ ու ծանոթություններ կտրվեն ու փակցվեն վրան։ Ամբողջ պատի լրագիրը պիտի լինի ձեռագիր, խոշոր տառերով և պարզ։ Պատի լրագրի առանձին բաժինները կարելի յե գրել տարբեր ձեռագրերով։ Պետք է աշխատել, վոր բոլոր տառերը մի բարձրության լինեն, տողերի մեջ յեղած տարածությունը հնարավորության սահմաններում ամենուրեք լինի միաչափ։

5. Թուղթը, վորի վրա գրվում է պատի լրագիրը, պիտի լավ վորակի լինի, վորպեսզի թանաքն ու ներկը չծծվեն։ Պատի լրագրի համար ներկեր ընտրելիս հարկավոր է զգուշ լինել, վորպեսզի նկարը կամ գիրն անճաշակ չլինի։ Համարի մեծ մասը պիտի գրել սև ներկով։ Դեղին ու կանաչ ներկերը բնավ չպետք է գործածել։ Մնացած գույներից ամենից նպատակահարմարը կարմիրն է։ Յեթե ներկ չկա, կոմբինացիա անել սև, կարմիր և մանուշակագույն թանաքից։

6. Լրագրի անունը, խնչպես և հոգվածների վերնագրերը պետք է գրել գեղեցիկ։ Լավ կլինի, յեթե լրագրի անունը գրվի թերթի ամբողջ յերկարությունը՝ պարուրելով այնպիսի նկարով, վորը համապատասխան լինի լրագրի անվանը։ Դրա բարձրությունը պիտի լինի լրագրի մեկ հինգերորդից վոչ ավելի։ Անպատճառ պետք է մատնանշել լրագրի հերթական համարը, նաև թե ով է հրատարակողը։

Հողվածների ու ծանոթությունների վերնագրերը պիտի լինեն կարճ ու պարզ։ Վերնագրի մեջ վոչ մի կրճատում չի թույլատրվում։ Ամեն մի վերնագիր կարճ ու պարզ կերպով պետք է ասել ընթերցողին՝ ինչի մասին է խոսվում տվյալ հոգվածում կամ ծանոթության մեջ։ Ամբողջական վերնագրերը (որինակ՝

գյուղական փոխառութեան մասին և ներկայացուցչի խնդիրները) հարկավոր ե ընդմիջող դեմ շարժումներ:

7. Հողավաճառներն իրենց ծավալով 15—20 տողից չպիտի անցնեն: Նյութը խմբագրելիս հարկավոր ե հատուկ ուշադրութեամբ դարձնել այդ հանգամանքի վրա. կարճ ու հասկանալի հողավաճառներն ավելի հեշտութեամբ կկարգացվեն և կյուրացվեն:

8. Հարկավոր ե կարգավորել լրագրի կանոնավոր և ժամանակին լույս ընծայելը (մոտավորապես յերկու շաբաթը մի անգամ) և փակցնել նրան այնպես, Վոր կարելի լինի կարգալ՝ չըկռանալով և կամ գլուխը չըարձրացնելով: Հնարավորութեան դեպքում անհրաժեշտ ե պատի լրագիրը խրճիթ-ընթերցարանից հանել և կախել կոռպերատիվում կամ գյուղխորհրդում:

ԳՅՈՒՂԹՂԹԱԿԻԳՆԵՐԻ ԶԵՎ ԽՐԾԻԹ-ԸՆԹԵՐԳԱՐԱՆԸ

Գյուղթղթակիցներն թոհասարակ յենթակա յին հալածանքների: Մեր լրագրերն ամեն անգամ վկայում են այդ: Գյուղթղթակիցը դառնում ե ատելութեան առարկան այն մարդկանց, Վորոնց ձեռնտու յե գյուղի լուրջունը: Նրան հալածում են այն մարդիկ, Վորոնք ուզում են միայն ձեռնադրել ի կատար ածել Խորհրդային իշխանութեան ցուցմունքները և կարգադրութեանները: Չնայած այդ հալածանքին, այնուամենայնիվ գյուղթղթակիցների թիվը աճում ե, ինչպես նաև աճում ե նրանց արիւթյունը՝ գյուղի մասին խոսք ասելու պայքարում:

Գյուղթղթակիցը նոր կյանք մտնող գյուղի հասարակական կարծիքի արտահայտիչն ե: Յեւ հենց միայն այդ պատճառով նա պիտի առանձնապես մոտ լինի խրճիթ-ընթերցարանին: Չե՞ վոր միայն գյուղացիական մասսաների շահերից յենելով կարող ե խրճիթ-ընթերցարանն ուղիղ տանել իր աշխատանքը: Գյուղթղթակիցը և խրճիթ-ընթերցարանն ամենասերտ կերպով պիտի կապված լինեն իրենց ամբողջ աշխատանքի ընթացքում: Այդ բանն անվերապահորեն ընդունեց գյուղթղթակիցների համամիութենական խորհրդակցութեանը Մոսկվայում: Խրճիթ-ընթերցարանների աշխատանքի մասին նա ընդունեց հատուկ բանաձև, Վորի մեջ նշեց, Վոր «խրճիթ-ընթերցարանի բոլոր աշխատանքներում գյուղթղթակիցը պիտի ամենաակտիվ մասնակցութեանն ունենա», և «գյուղթղթակիցների պատվավոր անունն արժանի յե կրելու միայն այն մարդը, Վորը հանդիսանում ե հասարակական

գործիչ, ուշի-ուշով հետևում ե գյուղի ամբողջ կյանքին և ակտիվ կերպով ոգնում գյուղի շինարարութեանը և նրա մութ ուժերի դեմ մղած պայքարին:

Իր աշխատանքի ընթացքում գյուղթղթակիցը պետք ե հաստատ կերպով հետևի այս որոնքին. նա պետք ե գրի իր ասածի ճշմարտութեանն ստուգելուց հետո: Առանձնապես մոտ պիտի կանգնի գյուղթղթակիցը լրագրի ընթերցմանը. այդ խնդրում նա խրճիթվարի առաջին ոգնականն ե: Բացի դրանից խրճիթ-ընթերցարանում կա նաև այնպիսի աշխատանք, Վորի մեջ գյուղթղթակիցը պետք ե դառնա Վոչ միայն մասնակիցը, ոգնողը, այլ և անմիջական ղեկավարը. այդ պատի լրագիրն ե: Պատի լրագիրն անհրաժեշտ սեփականութեանն ե ամեն մի քիչ թե շատ աշխատունակ խրճիթ-ընթերցարանի: Նա, ինչպես հայելի, պետք ե արտացոլի տեղական կյանքն իր բոլոր նվաճումներով ու թերութեաններով. նա պիտի դրդի խրճիթ-ընթերցարան հաճախողներին հայտնաբերելու և մեկնաբանելու տեղական ցավոտ խնդիրները: 13-րդ կուս. համագումարը հատկապես ընդգծեց նման աշխատանքը խրճիթ ընթերցարանում, ցույց տալով նրա հսկայական նշանակութեանը մեր այժմյան իրականութեան մեջ: Պատի լրագրի հաջող ընթացքն ու լավ հիմքերի վրա դրվելը գերազանցապես կախված ե գյուղթղթակիցից: Միաժամանակ պետք ե ասել, Վոր պատի լրագիրը միայն առաջին ձևն ե, առաջին փորձը հասարակական կարծիքն արտահայտելու և գյուղի ցավոտ խնդիրներն ընդգծելու համար: Այնտեղ, ուր լավ ե աշխատում պատի լրագիրը, գյուղերն ե անել և յերկրորդ քայլը, այն ե՝ նպաստել տեղական և մինչև իսկ կենտրոնական լրագրերին. գործնականում ցույց տալ գյուղացիներին, թե ինչ բան ե պարբերական մամուլը և ինչ նպատակներ ե հետապնդում նա:

Խրճիթ-ընթերցարանը հասարակական առաջին կազմակերպութեանն ե գյուղում. նրա վրա պիտի հենվի գյուղթղթակիցը: Խրճիթ-ընթերցարանում կա աշխատանքի մի ասպարեկ ևս, Վորի կազմակերպողն ու ղեկավարը պետք ե հանդիսանա գյուղթղթակիցը. դա նոր գյուղթղթակիցներ պատրաստելն ու լրագրական կամ թղթակցական խմբակ կազմակերպելն ե: Գյուղթղթակիցների խորհրդակցութեանն առանձնապես կանգ առավ այդ խնդրի վրա: Բանաձևի մեջ կարդում ենք. «Վորպեսզի մենակ չլինի գյուղի մութ ուժերի դեմ պայքարելիս, գյուղթղթակիցն իր շուրջը պիտի կազմակերպի «լրագրի բարեկամներ»-ի խում-

բակ (թղթակցական խմբակ)՝ նրա մեջ քաշելով գյուղի ազնիվ ու
ակտիվ մարդկանց: Խորհրդակցությունն անհրաժեշտ է գտնում
այդ խմբակների կուս. և կոմյունիստական բջիջներին մասնակցելը:
«Լրագրի բարեկամներ»-ի խմբակների գլխավոր անելիքներն են
ա) աշխատել լրագրերին բաժանորդագրել գյուղի բնակչության
մեծամասնությունը, բ) միջոցների դիմել, վոր ժամանակին
լրագրերը տեղ հասնեն, գ) մատչելի բոլոր միջոցներով տանել
լրագրական պրոպագանդայի աշխատանքը, դ) առաջ քաշել և
պատրաստել նոր գյուղ(թղթակիցներ, ե) ակտիվ ձեռներեցություն
ցույց տալ հասարակական այն ձեռնարկումին, վորն ուղղված
էլինի գյուղի նորոգման և Խորհրդային իշխանության ամրա-
պնդման ոգտին: Իրենց աշխատանքի բոլոր ասպարաններում այդ
խմբակները պիտի խուսափեն ուժերը ջլատելուց և պարելիզմ
ստեղծելուց այնպիսի կազմակերպությունների հետ, վորոնք փաս-
տորեն տանում են խմբակներին յենթակա աշխատանք:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐ- ՊՈՒՄԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆԳԻ ՄԵԹՈԴԸ

Գյուղական աշխատանքի հարվածային հարցերից մեկն է
մասսայական մասշտաբով լիկվիդացիայի յենթարկել վոչ միայն
ընդհանուր, այլ և գյուղատնտեսական անգրագիտությունը: Ի՞նչ-
պես կարելի յե այդ իրականացնել, յերբ գոյություն ունեցող
փոքրաթիվ մասնագետների հանդեպ այդ բնագավառում մենք
ունենք մեծաքանակ անգրագետներ: Այդ գործում խրճիթ-ընթեր-
ցարանը պետք է անպայման նպաստի Խորհրդային իշխանու-
թյանը:

Խրճիթ-ընթերցարանը կոմյունիստություն և գյուղատնտե-
սական կազմի հետ մեկտեղ պետք է գյուղացիներին և գեղջկու-
հիներին մասսայականորեն կազմակերպի գյուղատնտեսական
խմբակներում, վորտեղ և նրանք կվերացնեն իրենց գյուղատըն-
տեսական անգրագիտությունը:

ԽՄԲԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Գյուղացիության ամենալայն խավերին մասնակից անել
գյուղական տնտեսության շինարարությունը, բացատրել գյուղա-
կան տնտեսության դերը յերկրի ընդհանուր տնտեսության քա-
ղաքական դաստիարակության մեջ:

2. Գործնական աշխատանքի հմտություն ձեռք բերելու
միջոցով բարձրացնել գյուղական տնտեսությունը համաձայն
գյուղատնտեսական գիտելիքների և գյուղատնտեսական գիտու-
թյան պահանջների:

3. Բարձրացնել խմբակի անդամների ընդհանուր զարգացո-
ղությունը, սովորեցնել վերլուծել շրջապատի յերևույթները, ազա-
տել նախապաշարմունքներից, վորոնք հաճախ խանգարում են
նորմոլություններ կատարել տնտեսության մեջ:

4. Տնտեսութեան կազմակերպութեանը և հողից օգտվելու ձևերի ընտրութեանը տանել աշխարհի ուղղութեամբ, վոր ձեռք առած համապատասխան միջոցները նպաստեն քիչ յեկամուտ ունեցող տնտեսութեան վերակառուցմանը և մանր, անհատական տնտեսութեանը՝ դառնալու ավելի խոշոր, կոլլեկտիվ տնտեսութեան:

5. Իրենց տնտեսութեան մեջ մտցնել խոշոր ագրոկուլտուր միջոցներ, վորոնց համաձայն նրանք խմբակներում գիտութեան և գործնականութեան են ձեռք բերել:

6. Վերադաստիարակել իրենց ընտանիքի անդամներին նոր ուղղութեամբ, նրանց ևս համախմբելու իրենց կյանքը սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու համար:

7. Տարածել գիտելիքներ և գործնական վարժութեաններ շրջապատող ազգաբնակչության մեջ և պարբերաբար ծանոթացնել տեղական բնակչությանը իրենց գյուղատնտեսական խմբակների աշխատանքներին:

8. Ազգաբնակչության մեջ ագրո-լուսավորական և տնտեսական ձեռնարկումներ անցկացնելու ժամանակ մշտական աջակցութեան ցույց տալ հողբաժնին և գյուղատնտեսական խորհրդին:

9. Կոոպերատիվ պրոպագանդա մղել, գյուղատնտեսական վարկային կոոպերացիայի միջոցով ագրոկուլտուր միջոցներ ձեռնարկել և հնարավոր չափով օգնութեան ցույց տալ գյուղատնտեսական կոոպերացիային նրա կազմակերպչական և ընթացիկ աշխատանքների ժամանակ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Խմբակը կազմակերպվում է խրճիթ-ընթերցարանին կից: Խմբակ կազմակերպել կարող է խրճիթվարը և շրջադրուսկոմիտեն, կոմյերիտմիութեան, կուսակցութեան և գյուղատնտեսի հետ միասին:

Ինչպես սկսել խմբակի կազմակերպումը, վորտեղից վերցնել նրա հիմքը կազմող միջուկը: Այս նպատակով գյուղատնտ. խմբակի կազմակերպիչները (խրճիթվար, գյուղատնտես, կոմյերիտ, Հ. Կ. Կ. (բ)-ի բջիջը և այլն) մասնաշաղկան և խորացված կերպով ագրոպրոպագանդա յեն մղում դասախոսութեան, զրույցի ու գյուղատնտեսական կարճատև դասընթացների միջոցով, ար-

շավախումբ կազմակերպելով դեպի որինակելի տնտեսութեանները և այլն: Նախապատրաստական աշխարհի աշխատանքների միջոցով խմբակի կազմակերպիչներն ազգաբնակչության մեջ հետաքրքրութեան են առաջ բերում դեպի գյուղական տնտեսութեան վերոհիշյալ հարցերը, ինչպես նաև ցանկութեան առաջացում տեսական գիտութեան ստանալու և իրենց տնտեսութեան մեջ ևս համապատասխան ձեռնարկումներ կազմակերպելու համար:

Գյուղական տնտեսութեան բարելավման հարցով առաջին հերթին կհետաքրքրվին կոոպերատոր-գյուղացիները, շրջխորհրդի, գյուղկոմի, գյուղխորհրդի աշխատակիցները, կոլլեկտիվ տնտեսութեան անդամները, խորհրդային տնտեսութեան բանվորները, կարմիր-բանակայիները, ինտենսիվ գյուղացիները և այլն:

Նախապատրաստական աշխատանքների ընթացքում գյուղի մատնանշված ակտիվ ուժերից ինքնաբերաբար կկատարվի մշտական, ակտիվ ունկնդիրների համախմբում, վորոնք և կկազմեն գյուղատնտեսական խմբակի միջուկը:

Յեթե աշխարհի խումբը բաղկանա 10-12 հոգուց, արդեն կարելի յե անցնել խմբակի կազմակերպմանը: Կազմակերպման ժողովում անհրաժեշտ է ծանոթացնել խմբակի խնդիրներին, նրա ապագա աշխատանքներին և կազմակերպման ձևին: Ընտրել խմբակի նախագահութեան 3-5 հոգուց, և քննել աշխատանքների նախագիծը: Այդտեղ ընտրել նաև խմբակի ղեկավար, վորը պետք է լավ ծանոթ լինի խմբակի տեսական և գործնական կողմերին և ընդգծի տեղական տնտեսութեան բարելավման ճանապարհները:

Ամենալավ ղեկավարը կարող է լինել տեղական գյուղատնտեսը, խորհրդատեսութեան վարիչը, գյուղատնտեսական տեխնիկոմի գասատուն կամ նրա բարձր կուրսի ունկնդիրը և փորձված ու ակտիվ գյուղացին:

Մասնագետի բացակայութեան դեպքում ղեկավարութեան իր վրա կարող է վերցնել խրճիթվարը, ուսուցիչը կամ առաջադեմ մի գյուղացի. վերջինս պետք է լավ ծանոթ լինի գյուղական տնտեսութեան հարցերին: Հետագայում պետք է խմբակի գյուղատնտեսութեանը ձևավորում տալ՝ նրա կանոնադրութեանը հաստատելով քաղաքական, Հետևյալ ժողովում մշակվում են ծրագրերն ու խմբակի պարապմունքների նախագիծը:

ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Խմբակի պարապմունքների աշխատանքների ծրագրի և նախագծի մշակման ժամանակ հիմք կարելի չի ընդունել Գաղղուս-գլխավորի կանոնադրությունը. նրա հիման վրա հարմարվելով տնտեսություն և շուկայի տեղական պայմաններին՝ մշակվում է խմբակի տեսական և գործնական պարապմունքների ծրագիրը: Նախքան ծրագիր մշակելն անհրաժեշտ է հետազոտել տվյալ շրջանի գյուղական տնտեսությունը: Հետազոտման հարցաթերթն իր մեջ պետք է պարունակի հետևյալ հարցերը—հողաբաշխումն ըստ իր ոգտակարություն, ցանքսի, անասնապահության դրությունը, նրանց կերի վիճակը, գյուղատնտեսական գույքի, կաթնատու և աշխատավոր հոտի ներկա դրությունը, և այլն: Տնտեսության պայմանների նախնական հետազոտությունները կհեշտացնեն սույն հարցերի պարզաբանումը. խմբակն այս աշխատանքը պետք է համարի իր պարապմունքների հիմքը և ըստ այնմ վորոշի՝ հացահատիկային տնտեսությունն ուսումնասիրել, կաթնային, թե մի ուրիշը:

Ծրագրի առաջին մասում պետք է մտնեն գյուղական տնտեսություն կազմակերպելու մասին ընդհանուր հարցեր: Որինակ՝ գյուղական տնտեսության դրությունը այժմ և մինչ հոկտեմբերյան հեղափոխությունը. ինչպես բարելավել գյուղական տնտեսությունը. Խորհրդային իշխանության հողային և գյուղատնտեսական քաղաքականությունը, անասնապահությունն ու անասունների կերը, դաշտերն ու յոնջաները: Գյուղատնտեսական մեքենաներն ու գործիքները, գյուղատնտեսական կոոպերացիան:

Ծրագրի յերկուրդ մասը—Արտադրական ծրագրի մեջ մտնում են հողագործության, անասնապահության, այգու և ագրոկայանների վերաբերյալ հարցեր, ինչպես, որ., ցանքս, դաշտային խոտացանքս, գյուղատնտեսական բույսեր, հողը և նրա կյանքը, հունձ հավաքելը, կերի համար բույսեր, մարգերի բաղադրումը, բույսերի վնասատուներն ու նրանց դեմ պայքարելը, հոկտյան (ձիու, յեղջերավոր կենդանիների, խոզերի, վոլխարների), թռչնաբուծության և մեղվաբուծության բարելավման ու բազմացման միջոցները:

Ծրագրի յերրորդ մասում մտնում են գործնական աշխատանքները, վորոնք տարվում են՝

1) Եքսկուրսիաներ կազմակերպելով դեպի դաշտ, այգի, բանջարանոց, մարգագետիններ, գյուղական անասնապահական տնտեսություն, խորհրդ. որինակելի տնտեսություններ, կոլեկտիվ տնտեսություններ, փորձնական հիմնարկներ, անասունների ազնվացման վայրեր:

2) Գյուղատնտեսական ցուցահանդեսներ կազմակերպելու միջոցով:

3) Խմբակի անդամների տնտեսություններում կամ մի այլ տեղ փորձեր կազմակերպելով:

ԽՄԲԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԻԸ

Գյուղատնտեսական խմբակների զարգացման հետ, յերբ նրանց ագրոկայանը հասնում է 10-ի կամ ավելի, հարց է առաջանում աշխատանքները տանել ինքնազարգացման մեթոդով:

Մի գյուղատնտես կարող է արդյունավետ աշխատանք կատարել միայն մեկ կամ յերկու խմբակում, վորովհետև խմբակի աշխատանքները մեծ են և բարդ, իսկ 10 խմբակի պարապմունքը գյուղատնտեսին կկլանի ամբողջովին. գործնականը ցույց է տվել, վոր գյուղատնտես իր բնագավառում ունի նաև ուրիշ աշխատանքներ:

Ղեկավարի գործն է ձիշտ ընթացք տալ ծրագրի մշակման, աշխատանքի նախագիծ և պարապմունքների դասատախտակ կազմելու ժամանակ:

Խմբակի աշխատանքների սկզբնական շրջանում ղեկավարը դասախոսային մեթոդով կամ զրույցի միջոցով աշխատանքները տանում է ըստ ծրագրի կազմակերպչական հարցերի, վորովհետև տնտեսություն կազմակերպելու վերաբերյալ հարցերը խմբակի ինքնուրույն մշակմանը թողնելը շատ բարդ են: Տնտեսության տեխնիկայի հարցերի հետագա մշակումը գյուղատնտեսն իր ձեռնեցություններով հանձնում է խմբակին, իսկ ինքը ղեկավարների, ղիսպուտների, զրույցների, ընթերցանության, ագրոկայանների միջոցով նպաստում այդ աշխատանքներին, ոգնում դիագրամաներ և պլակատներ պատրաստելուն, վիճակագրական տվյալներ ստանալուն և այլն:

Գյուղատնտեսն իր ձեռներեցությամբ կազմակերպում եքսկուրսիաներ, խմբակի հետ միասին կազմակերպում գործնական պարապմունքներ, աշխատանքներ և փորձեր. նպաստում է գյուղա-

տնտեսական ցուցահանդես կազմակերպելուն, գյուղատնտեսական էկոպանիաներին և այլն: Այն դեպքերում, յերբ խմբակը չունի մշտական ղեկավար, պարապմունքները պետք է տանել ինքնազարգացման մեթոդով՝ ոգտվելով գյուղատնտեսի, վորպես կազմակերպչի և խորհրդատուի ցուցմունքներից: Այդ դեպքում գյուղատնտեսն ոգնում է խրճիթվարին կամ գյուղատնտեսական խմբակի կազմակերպիչներին խմբակը կազմակերպելու գործում, իսկ հետագայում խմբակն իր աշխատանքները տանում է իր պրեզիդիումի ղեկավարութթամբ. որինակ՝

1) Կազմակերպում է ամբողջ խմբակով բարձրաձայն ընթերցում, հերթով յուրաքանչյուրին կարդալ և տալիս նյութի տակ յեղած հարցերը:

Անհասկանալի հարցերի կամ բառերի վրա պետք է կանգ առնել, լուծել այն կարծիքների փոխանակութթամբ, և յերբ հարցն անլուծելի թվա, պետք է գրել նախագահութթյան քարտուղարին և առաջ գնալ: Յերբ մի նյութի բոլոր հարցերը խմբակի կողմից մշակված են, խմբակի յուրաքանչյուր անգամ տանը պետք է ինքնուրույն կերպով աշխատի յենթանյութի վորևե հարցի շուրջը և ընդհանուր ժողովին ամբողջ նյութի մասին կարծիքների փոխանակութթուն կատարի:

2) Կամ, ընդհակառակը, սկզբից խմբակում նյութին վերաբերյալ բոլոր հարցերը կարդացվում և քննվում են, իսկ հետո անհատական վերամշակման համար յուրաքանչյուրին յենթանյութի մասին տանը կարդալու համար տալիս են գրականութթուն: Հետևյալ անգամ դպրոցի ձևով ամբողջ խմբակի կողմից վերամշակման է յենթարկվում կարգացված նյութը, և դարձյալ, ինչպես առաջին դեպքում, խմբակը կանգ է առնում նյութի անհասկանալի դեպքում և գրի յե առնում այն:

3) Կարելի յե յերկու խմբակիցների համար միասին մի վորևե թեմայի շուրջը դիսպուտ կազմակերպել՝ հարցին միքանի կողմերից մտանալով, իսկ հետո խմբակում արվում է զեկուցում հարակից զեկուցման հետ միասին: Որինակ՝ մեկն ապացուցում է տնտեսութթյան նոր ձևին անցնելու առավելութթունը, իսկ յերկրորդն առարկելով հարցի եյությանը, խոսում է տնտեսութթյան նոր ձևին անցնելու դժվար իրականացման մասին: Մյուս խմբակիցները հարցեր են տալիս, յերկու զեկուցողների առաջադրած հարցերը զարգացնում, լրացնում, բացատրում և յեզրակացութթուններ հանում:

4) Այս կամ այն մեթոդով ծրագրի մի թեման անցնելու ժամանակ խմբակը կազմակերպում է իր համար հարց ու պատասխանի յերեկո՝ իր սովորածն ինքնաստուգման յենթարկելու նպատակով: Այստեղ մեկը հարց է տալիս յենթանյութի կարգով, յերկրորդը պատասխանում, յերրորդը լրացնում, չորրորդն առաջադրում վիճելի հարցեր, և այլն, իսկ վերջինը ընդհանուր վիճաբանութթուններից հետևանքներ հանում:

Ումբակի ինքնազարգացման աշխատանքների համար կարող են և ուրիշ մեթոդներ լինել, որինակ՝ տանն ինքնուրույն ընթերցանութթուն, ագրոդատներ, եքսկուրսիաներ և այլն:

Յուրաքանչյուր մեթոդի ժամանակ նյութի գործնական վերամշակումը պարտադիր է:

Բայց միանգամայն առանց ղեկավարի դժվար է խմբակի համար աշխատանքներ տանել, ուստի անհրաժեշտ է ունենալ ղեկավար, թեկուզ և վորպես խորհրդատու կամ կազմակերպչի: Գյուղատնտեսը խորհրդատու կարող է լինել այն դեպքերում, յերբ խմբակը վորևե հարց խորացնել չի կարողանում: Դրա համար խմբակն աշխատանքի ժամանակ նյութի անհասկանալի և վիճելի հարցերը գրի յե առնում, իսկ հետո խմբակի նախագահն՝ այն լուծելու նպատակով գնում է մասնագետի մոտ, կամ հարցը գրավոր ձևով ուղարկում է պատասխան ստանալու համար:

Մի այլ դեպք.— յերբ խմբակն ինքը չի կարողանում ծրագրի մշակել, պարապմունքների նախագիծը կազմել, գործնական պարապմունքներ ու աշխատանքներ սկսել, եքսկուրսիաներ, գյուղատնտեսական ցուցահանդեսներ կազմակերպել և այլն, այն ժամանակ նա հրավիրում է մասնագետի, վորպես կազմակերպչի:

Ումբակի ղեկավարման համար ավելի հաջող մեթոդ պետք է համարել շրջանային խմբակների կազմակերպիչների խորհրդակցութթունը կամ համագումարը, ուր և շրջանային գյուղատնտեսը կիրականացնի խմբակների ղեկավարութթյունը:

Գավառների և շրջանների գյուղխմբակների ղեկավարներին կամ կազմակերպիչներին վերապատրաստելու համար ամառը, յերբ խմբակներն ադատ են տեսական աշխատանքներից, կարելի յե կազմակերպել սեմինարական պարապմունքներ, գյուղատնտեսի կամ քաղուսաշխատակցի ղեկավարութթյամբ: Սեմինարի կազմի մեջ կարող են մտնել շրջանի կամ գավառի գյուղ-խմբակների ներկայացուցիչները, ուսուցիչները և ակտիվ կուսակցականները:

Սեմինարի ժամանակ մշակման յենթակա որինակելի հարցեր կարող են լինել հետևյալները.—

- 1) Խմբակի կազմակերպության ներածություն.
- 2) Խմբակի կազմակերպություն.
- 3) Ինքնադեկլարում և դեկլարություն.
- 4) Ծրագիր կազմելու մեթոդ.
- 5) Աշխատանքի մեթոդ.
- 6) Տեսական պատրաստականություն.
- 7) Գործնական աշխատանք.
- 8) Խմբակի և առանձին անդամների ագիտացիոն գործունեություն.
- 9) Խմբակի կազմակերպչական աշխատանք.
- 10) Աշխատանքի հաշվառում:

Վորպեսզի ցրվածություն տեղի չունենա, և աշխատանքը տարվի համաձայն մշակված սխեմայի, անհրաժեշտ է նշանակել խմբակի աշխատանքի կոնկրետ ծրագիրը: Պարապմունքի նախագիծը պետք է սահմանի, թե ինչպես պետք է մշակվի այս կամ այն հարցը: Պետք է նշանակել՝ վորքան և ինչ հարցերի մասին պետք է դասախոսություններ կարդացվեն, ինչպիսի հարցեր մշակել խմբակի անդամների զեկուցումների միջոցով, ինչ հարցի շուրջը կազմակերպել դիսպուտ, ինչպիսի հարցեր յենթարկել ագրոգատի, քանի եքսկուրսիա կազմակերպել, ինչպիսի դիադրամաներ և պլակատներ կազմել, ինչպես և ինչպիսի գործնական աշխատանքներ կատարել և այլն:

Յերբ ծրագիրը պատրաստ է, կարելի յե կազմել պարապմունքների դասացուցակ՝ յերբ և ով է կարդալու դասախոսություն, զեկուցում, յերբ և ուր կազմակերպել եքսկուրսիա, յերբ կատարել փորձեր և այլն:

Այս մեթոդի ժամանակ դեկլարի դերը նույնանում է կազմակերպչի կամ խորհրդատուի դերին:

ԳՅՈՒՂԽՄԲԱԿԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԶԵՎԵՐԸ

Նախ և առաջ գյուղխմբակին անհրաժեշտ է ամենալուրջ ուշադրություն դարձնել գյուղատնտեսական գիտելիքները գյուղացիների մեջ տարածելու նպատակով տարվող մասսայական աշխատանքներին: Ինչպատի ունենալով գյուղական բնակչության

թույլ զարգացումն այս աշխատանքում՝ անհրաժեշտ է, վոր հայտնելված տեղեկությունները կապ ունենան գործնական կյանքի հետ և բոլորն գյուղատնտեսական կյանքի տեղական հանգամանքներին:

Առաջին շրջանում գյուղացիության լայն մասսաների համար ագրոպրոպագանդայի ամենամատչելի ձևով կլինեն—գրույցներ, ընթերցանություններ, դասախոսություններ, գյուղատնտեսական եքսկուրսիաներ, գյուղատնտեսական անկյուններ, տեղեկատու աշխատանք, կոոպերատիվ պրոպագանդա և այլն:

Գյուղատնտ. խմբակի ագրոպրոպագանդայի հասարակական աշխատանքների համար մատնանշված բոլոր ձևերը տալիս են միայն տարրական տեղեկություններ և առաջացնում ինքնուրույն ուսումնասիրության հետաքրքրություն և գյուղական տնտեսության հարցերի լուծում: Այդ պատճառով ագրոպրոպագանդան անհրաժեշտ է կենդանի խոսքով կապել փորձնական-ցուցադրական գործին, գյուղացուն գործնականում համոզել տեսական գիտելիքների ճիշտ լինելը:

Գյուղխմբակը գործնական աշխատանքներ կարող է տանել կյանքում առաջադեմ գյուղացիների և գլխավորապես գյուղ-կոոպերացիայի աջակցությամբ: Խմբակի գործնական աշխատանքի հիմնական ձևերը կարող են լինել ցուցադրական դաշտը, ցուցադրական հողաբաժինը, հատիկագործի և բեղմնավորման կայանները, անասունների և գյուղատնտեսական ցուցահանդեսները:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԽՄԲԱԿԸ, ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԸ

Գյուղացիության արտադրողականության բարձրացման հարցերի վերաբերյալ խրճիթ-ընթերցարանի խորացրած աշխատանքը կարող է ընթանալ յերեք ուղղությամբ.—

1) Գյուղացիական տնտեսության հարցերի ուսումնասիրություն և գյուղատնտեսական խմբակների միջոցով գործնական փորձառության ձեռք բերում:

2) Տնտեսության հարցերի ուսումնասիրություն, առողջապահություն, աշխատանքի, կենցաղի և տնտեսական խմբակների միջոցով գործնական փորձառությունների ձեռք բերում:

3) Կոոպերացիայի և կոլեկտիվիզացիայի հարցերի ուսումնասիրություն և կոոպերատիվային խմբակների միջոցով գործնական փորձառության ձեռք բերում:

Գյուղատնտեսութեան արտադրողականութիւնը բարձրացնող մատնանշված յերեք ուղղութիւններէից ամենից շատ տարածված է գյուղատնտեսական խմբակը, վորից հետո տնային տնտեսութիւնը: Ճիշտ է, վերջինս հաճախ գոյութիւն ունի «կարուձևի խմբակ» կամ «ձեռագործ» անվան տակ, սակայն ըստ գործի եյուրթյան նա զբաղվում է տնային տնտեսութեան համարյա բոլոր հիմնական հարցերով:

Յեւ ինչպես զարմանալի է, վոր ամենից քիչ տարածված են կոոպերատիվ խմբակները. խրճիթ-ընթերցարանին անհրաժեշտ է առաջին հերթին զբաղվել սրանց կազմակերպմամբ: Գյուղ-խմբակը գյուղական տնտեսութեան արտադրողականութիւնը բարձրացնելու ուղղութիւններն ուսումնասիրելով, չի կարող չըշտափել նրա առանձին բնագավառների կոոպերացման և մանր, անհատական տնտեսութեան կոլլեկտիվիզացիան ավելի խոշորի վերածելու վերաբերյալ հարցերը: Գյուղատնտեսական խմբակն իր ծրագրի մեջ անհրաժեշտ չափով տեղ է հատկացնում գյուղատնտեսական կոոպերացիային: Բայց ինչպես սկզբունքային-կազմակերպչական, նույնպես և տեխնիկական հարցերի վերաբերյալ բոլոր տեսակի կոոպերացիայի խնդիրներն անհրաժեշտ է համախմբել խրճիթ-ընթերցարանին կից կոոպերատիվ խմբակում:

Կոոպերատիվ խմբակի հիմնական հարցերը պետք է լինեն՝

1) Խորհրդ. շինարարութեան, կոոպերացիայի տնտեսական և քաղաքական դերի ուսումնասիրութիւնը, 2) դասակարգային մտեցում դեպի կոոպերացիան, 3) կոոպերացիայի կազմակերպչական հարցերի ուսումնասիրութիւնը, 4) կոոպերատիվ տեխնիկայի հարցերի վերաբերյալ գիտութիւնների և գլխավորապես գործնականի ձեռք բերում: Կոոպխմբակ կազմակերպելու մեթոդները կարող են լինել նույնը, ինչ վոր գյուղատնտեսական և տնային խմբակներինը. ծրագիր կազմելու հարցը, վորպես ավելի քան բարդ հարց, պետք է յենթարկվի բազմակողմանի լուսաբանութեան:

ԾՐԱԳԻՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԵԹՈԴԸ

Գործի հաջողութեան համար խմբակին անհրաժեշտ է մշակել պարապմունքների ծրագիր, վորը բղխի իր շրջանի տնտեսական և շուկայի փոխհարաբերութեան կարիքներից ու շահերից: Լուծե-

լու համար այն հարցը, թե ինչն ընդունել հիմքում և ինչից սկսել խմբակի պարապմունքը, — արդյոք գյուղատնտ. խմբակի ուսումնասիրութիւնից, կոլլեկտիվ հողագործութիւնից, սպառողական կոոպերացիայից, թէ տնային արհեստագիտական կոոպերացիայից, — պետք է ծրագրել կազմելուց առաջ քննութեան առնել գյուղական տնտեսութիւնը և տվյալ ուայոնի բնակչութեան պահանջները:

Ուսումնասիրութիւնը կարող է կատարել խմբակին ապագահութիւնը նրա ակտիվ կազմակերպիչների հետ միասին. հետագոտութեան ծրագիրը կազմելու համար պետք է դիմել տվյալ շրջանային միութեան կոոպերացիայի հրահանգչին կամ գյուղատնտեսին:

Հետագոտութեան ծրագիրն իր մեջ պետք է պարունակի հետեյալ հարցերը. — շրջանի տնտեսական դրութիւնը, նրա հիմնական բնագավառները. անասնապահութիւնը միացված է արդյոք կաթնատնտեսութեան կամ ուրիշ այլ ճյուղի հետ. հացահատիկային տնտեսութիւնը, այգեգործութիւնը. մարգերի հետ միասին գոյութիւն ունեն արդյոք տնային արհեստներ և վորոնք են. ունեն արդյոք սպառման շուկաներ և տնտեսութեան ինչպիսի մեթոդներ են շուկա հանվում, ինչ դրութեամբ, մշակված թե հում. արտադրութեան ինչպիսի միջոցների կարիք է զգում բնակչութիւնը. վարկը գլխավորապես ինչի համար է անհրաժեշտ. ինչ բարենպաստ հանգամանքներ կան յերկրագործական կոլլեկտիվներ կազմելու համար. ինչպես է աշխատում շրջանում գտնվող կոոպերատիվը, ինչպիսի թերութիւններ ունի նա և այլն:

Հետագոտութիւնների հիման վրա մշակվում է ծրագիրը:

Նման ձևով կազմված ծրագիրը պետք է սկսվի տվյալ շրջանի տնտեսութեան ուսումնասիրութիւնից: Այն ժամանակ տեղական կարիքների և շուկայի պահանջի հիման վրա պարապմունքներն իրենք կմոտենան կոոպերացիայի խնդիրներին: Հետո, իրենց շրջանի որինակով, քննութեան յենթարկել գյուղացիների գույքային դրութիւնը, նրանց դերը կոոպերացիայի մեջ և ընդհանրապէս՝ կոոպերացիայի նշանակութիւնը գյուղացիական դասազան խավերի համար (գյուղի շերտավորումը)՝ ընդհանուր գծերով ուսումնասիրելով կոոպերացիայի խնդիրները. այնուհետև խմբակն անցնում է կոոպերատիվների և կոլլեկտիվների խնդիրների և հիմնական ձևերի ուսումնասիրութեանը:

Այն հարցը, թե կոոպերացիայի վոր ձևից սկսել պարապելը, կվորոշի ինքը խմբակը՝ յեկնելով իր շրջանի պահանջներից:

Գյուղում ավելի լավ կլինե՞ր սկսել գյուղատնտեսական և վարկային կոոպերացիայի ուսումնասիրությունից, վորովհետև տնտեսություն կազմակերպության հարցերի հետ նա ավելի սերտ է կապված և նրա արտադրականությունը բարձրացման համար հսկայական նշանակություն ունի: Հետո պետք է առաջադրել գյուղատնտեսության համայնական ավելի բարդ ձևերի ուսումնասիրությունը (կոմունաների, արտելների, հասարակական հողաբաժնի և այլն), վորոնք ավելի մեծ նշանակություն ունեն յերկրի սոցիալիստական շինարարության գործում: Մյուս հետևում է սպառողական կոոպերացիան, վորի գլխավոր նշանակությունն է պետության ղեկավարող ազդեցությունում ձեռք բերել գյուղական շուկան և վերջապես տնայնա-արհեստավորական կոոպերացիան: Կոոպերացիայի սկզբունքային հարցերն ուսումնասիրելիս մշակվում են նրա կազմակերպման հիմնական մոմենտները և միությունական համախմբումը: Ծրագրի յեզրափակման նյութերը պետք է ընդգրկեն կոոպերացիայի վերաբերյալ բոլոր հարցերը: Այդ հարցերում անհրաժեշտ է լուսաբանել կոոպերացիան վորպես անասունների ազնվացման ազդարարային կուլտուրայի միջոց. նրա դերն ընդհանուր կուլտուրայի բարձրացման և կենցաղի բարելավման մեջ, այնուհետև հարկավոր է պարզաբանել Հ. Կ. Կ. (բ) և Խորհրդ. իշխ. կոոպերատիվային քաղաքականությունը և հայտնաբերել կոոպերացիայի դերը, վորպես մի ճանապարհ, վոր տանում է դեպի սոցիալիզմ:

Հարցերի թեորետիկական մշակման հետ միաժամանակ պետք է տանել և գործնական աշխատանք ծրագրի բոլոր հարցերի վերաբերյալ:

Գործնական աշխատանքներն են՝

1) Տնտեսության կազմակերպման և տեղական կամ հեռավոր կոոպերատիվների ու կոլեկտիվների վարչության հարցերի հետազոտում, 2) կոոպերատիվների և կոլեկտիվների կազմակերպման և աշխատանքի համար որինակելի նախագծերի մշակում, 3) կազմել դիագրամմաներ, վորոնք կարտացոլեն կոոպերատիվների տարեկան աճումը, անդամների թվի մեծացումը (առանձնացնելով կանանց), կուլտ-միջոցների համար գործադրածը և այլն, 4) ակտիվ մասնակցություն կոոպերատիվների կազմակերպման գործում:

Վերջին գործնական պարապմունքը հնարավոր է տանել այն դեպքում, յերբ խմբակի շրջանում վորևե կոոպերատիվ կա. կո-

ոպերատիվային խմբակի խնդիրներին այսպիսի մոտեցում ունենալով՝ ծրագրեր կարող է պարունակել մոտավորապես կազմակերպչական 10 ընդհանուր հարցեր.—

1) Տեղային տնտեսության եկոնոմիկան, տեղային տնտեսության բնութագիրը, նրա հեռանկարները, կոոպերատիվային աշխատանքն ինչպիսի ուղղությամբ տանելով կարող է ավելի մեծ ոգուտ տալ. գյուղացիության շերտավորումը.

2) Կոոպերացիան և նրա խնդիրները.

3) Գյուղատնտեսական վարկային ընկերություններ.

4) Գյուղական տնտեսության մասնավոր բնագավառների և կուլտուրաների կոոպերացում.

5) Կոլեկտիվ հողագործություն (գյուղատնտեսական կոոպերացիայի ցանցի մեջ, դիրքը, նշանակությունը).

6) Գյուղացիական շուկան և նրա հարցերի կապը տնտեսության պետական պլանիրովկայի հետ (սպառ. կոոպերացիայի դերը նրա մեջ).

7) Տնայնա-արհեստագործական կոոպերացիա (խնդիրները).

8) Բոլոր տեսակի կոոպերացիաների կազմակերպումը և նրանց մեթոդները.

9) Կոոպերացիա, ագրոկուլտուրա, կուլտուրա և կենցաղ.

10) Կոոպերացիայի բնագավառում Հ.Կ.Կ. (բ) և Խորհրդ. իշխանության քաղաքականությունը (կոոպերացիան վորպես դեպի սոցիալիզմ տանող ճանապարհ):

Մատնանշված հարցերը հիմնական տեղ են գրավում զրույցների մեջ: Բացի դրանցից, կոոպերացիայի հարցերի տեխնիկական և գործնական մշակման համար տեղական պայմանների և շրջանի պահանջների համաձայն կարելի յե ավելացնել և միջանի այլ մասնավոր թեմաներ:

Բացի վերոհիշյալ բոլոր սկզբունքներից, անհրաժեշտ է ասել նաև, վոր կոոպերատիվային պրոպագանդան պետք է կապված լինի ագրոպրոպագանդայի հետ: Չի կարելի ագրոպրոպագանդայով զբաղվել գյուղական անհատ սեփականատերերի հետ, միաժամանակ չշռափելով տնտեսության կոոպերացումը: Յուրաքանչյուր ագրոձեռնարկ, վորը տանում է դեպի գյուղական տնտեսության արտադրողականության արդյունավետություն, պետք է հիմնվի ամբողջ տնտեսության կոոպերացման, նրա տարբեր ճյուղի կամ վորևե տեխնիկական միջոցների վրա: Կոոպերացիայի և ագրոպրոպագանդայի կապի անհրաժեշտության սպառ-

նում և հետևյալ վտանգը.—յեթե ագրոպրոպագանդան տարվի ագրոձեռնարկ անցկացնելու համար, վորը տնտեսութեան յեկամուտը բարձրացնում է, և միաժամանակ չկատարվի տնտեսութեան կոոպերացում, այն ժամանակ անհատական ուժեղ տնտեսութեանները կսկսեն աճել, կդառնան կուլակային, վորոնք կոոպերացիայից և գյուղական տնտեսութեան կոլլեկտիվիզացիայի բարձր ձեւերից միանգամայն հեռու յեն, և նոր, տնտեսական ձեւերը վոչ մի ազդեցութեան չեն ունենա նրանց նկատմամբ: Նե՞ղ-ը, ապրանքային տնտեսութեան անխուսափելիորեն տանում է դեպի անհատական տնտեսութեան այդպիսի աճեցում:

Սոցիալիստ հանդիսանալ դրան, գյուղական տնտեսութեան վերելքի շահերին չի վերաբերում, բայց յերբ պրոպագանդա յետարվում հանուն տնտեսութեան վերելքի, այն ժամանակ նա, իհարկե, պետք է առաջարկի միայն մի յելք,—դա անհատական տնտեսութեանների կոոպերացումն է:

Այսպիսով, կոոպերացիայի մասին ծրագիր կազմելիս, անհրաժեշտ է ինկատի ունենալ ագրոպրոպագանդայի հարցերը: Առաջին շրջանում բավական կլինի, յեթե կոոպերատիվ խմբակն իր ծրագրի մեջ մտցնի գլխավորապես գյուղատնտեսական կոոպերացիայի և կոլլեկտիվների մասին ագրոձեռնարկների վերաբերյալ հարցեր, թեկուզ և սեկցիոն կարգով զուգընթացաբար անցնելու համար:

ԽՄԲԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԸ

Ծրագրի հարցերի մշակումը խմբակը կարող է կատարել ղեկավարի հետ, կամ ինքնազարգացման մեթոդով, յերբ չկա ղեկավար: Գլուղը դեռևս քիչ ունի կուլտուրական ուժեր (կուսակցականներ, կոոպերատորներ, գյուղատնտեսներ, ուսուցիչներ և այլն), վորոնք կարողանային դառնալ խմբակի մշտական ղեկավարները՝ կարգավոր դրանց համար դասախոսութեաններ, կազմակերպելով զրույցներ, ընթերցանութեաններ, երևույթիսներ, գործնական աշխատանքներ և այլն: Խմբակը պետք է իր աշխատանքները տանի ինքնազարգացման մեթոդի վրա:

Ինքնազարգացման մեթոդի համաձայն խմբակը մշակում է իր ծրագիրը նախագահութեան ընդհանուր ղեկավարութեամբ, այսպես, որինակ.—

1) Կազմակերպում է բարձրագույն ընթերցում ծրագրի հեր-

թական նյութի շուրջը. յերբ մեկը կարդում է, իսկ բոլորը լսում են, անհասկանալի հարցերի վրա կանգ են առնում, զրույցի բռնըվում, գրի յեն առնում կարդացածները և անցնում առաջ. յերբ նյութը մշակված է բոլորի կողմից, կարդացված հարցը յուրաքանչյուրին տրվում է տանը մշակելու համար:

2) Կամ, ընդհակառակը, ամբողջ խմբակի կողմից նյութին վերաբերող հարցերը կարդացվում և քննվում են, հետո անհատական մշակման նպատակով նյութի առանձին հարցերի շուրջը յուրաքանչյուրին գիրք է տրվում տանը կարդալու համար և արդեն, հաջորդ հավաքույթին, զրույցի ձևով խմբակում մշակվում է կարդացված ամբողջ նյութը:

3) Կարելի յե յերկու խմբակների համար պատրաստել մի նյութ՝ բազմակողմանի մոտենալով հարցին (դիսպուտ). իսկ հետո խմբակում զեկուցում է տրվում, մյուսները լրացնում են, հարցեր են տալիս, բացատրում և յեզրակացութեաններ հանում:

4) Ծրագրի նյութերն անցնելու ժամանակ խմբակը յուրացրած գիտութեանների ինքնաստուգման համար կազմակերպում է հարց ու պատասխանի յերեկո. այստեղ մեկը հարց է տալիս, յերկրորդը՝ պատասխանում, յերրորդն՝ ուղղում, չորրորդը՝ վիճելի հարցեր առաջադրում և այլն:

Ինքնազարգացման աշխատանքի համար կարող են լինել ուրիշ աշխատանքներ, որինակ՝ տանն ինքնուրույն ընթերցանութեան, կոոպերատիվ դատեր, երևույթիսներ և այլն: Յուրաքանչյուր մեթոդի ժամանակ նյութի գործնական մշակումը պարտադիր է: Խմբակի համար դժվար է միանգամայն առանց ղեկավարի աշխատանք տանել, վորի համար և անհրաժեշտ է ղեկավար ունենալ, թեկուզ և վորպես խորհրդատու կամ կազմակերպիչ:

Սոցիալիստին այն ժամանակ է խմբակը դիմում, յերբ, որինակ, վորեւ հարց խմբակն ինքը չի կարողանում զարգացնել: Սովորաբար բոլոր այդ նյութերն ու վիճելի հարցերը գրի յեն առնում, իսկ հետո խմբակի ներկայացուցիչն այդ հարցերը լուծելու համար մասնագետի մոտ է տանում: Այդպիսին կարող է լինել կոոպերատորը, գյուղատնտեսը, ուսուցիչը և այլն. սրանք առաջարկված հարցին պատասխան են տալիս:

Յերկրորդ դեպքը.—յերբ խմբակն ինքը չի կարողանում ծրագիր մշակել, պարապմունքների նախագիծ կազմել, գործնական աշխատանքներ սկսել, երևույթիսներ, ցուցահանդեսներ

կազմակերպել, այն ժամանակ նա կարող է իր մոտ հրավիրել մասնագետի վորպես կազմակերպիչ:

Խորհրդատվությունը կարող է լինել բանավոր և գրավոր:

Խմբակն իր ղեկավարի հետ ամենալավ պարապմունքները տանում է այն ժամանակ, յերբ իր շրջանում են գտնվում կոոպերատորը, գյուղատնտեսը և կուլտուրական մյուս ուժերը, վերոնք պարբերաբար կարողանում են ղեկավարել խմբակի աշխատանքը:

Ղեկավարի հետ ևս աշխատանքները պետք է տանել ինքնազարգացման մեթոդի նման, միայն ավելացնելով լեկցիոն (դասախոսային) պարապմունքներ:

Ղեկավարը չպետք է լինի հին մանկավարժ. նա պետք է տա հայտնի պատրաստի գիտություն և կոնկրետ յեզրակացություններ հանի. նրա դերն է միայն նպաստել և ուղղություն տալ խմբակի անդամներին ինքնուրույն, ինքնազարգացման աշխատանքին:

Ղեկավարությունը կարող է ընդունել այսպիսի ուղղություն:

- 1) Սովորեցնել գրքի հետ պարապել. ինչպես այն կարդալ և հասկանալ. նպաստել համապատասխան գրքերի ընտրությանը:
- 2) Բացատրել աշխատանքի ժամանակ հանդիպած բոլոր անհասկանալի հարցերը, 3) խմբակի գործնական աշխատանքները տանել ուղիղ գծով, 4) հրահրել կազմակերպելու կոոպերատիվ այս կամ այն ձևանարկությունը:

ԽՄԲԱԿԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԲԸ

Շրջապատող ազգաբնակչության մեջ հաջողություն ունենալու և գործնական ձեռնարկությունների ու կոոպերատիվ ազդեցության համար կոոպերատ. խմբակը մասսային պետք է իրազեկ դարձնի իր աշխատանքների հետևանքներին:

Մասսայական կոոպերատիվային ազդեցության և պրոպագանդան պետք է բղխեն տեղական բնակչության շահերից և պահանջներից: Շրջապատող ազգաբնակչության մեջ կոոպերատիվ գիտություն տարածելու ամենամատչելի ձևերն են. — խրճիթ-ընթերցարանում յեվ նրանից դուրս գրույցներ, ընթերցանություն, դասախոսություններ, կոոպերատիվ եփսկուսիքներ, կոոպերատիվային ներկայացումներ, դատեր, խրճիթ-ընթերց. կից կոոպերատիվ անկյան կազմակերպումն, կամպանիա յեվ այլն:

Կոոպերատիվ անկյունը պետք է հանդիսանա կոոպերացիայի հարցերի լաբորատորիա. առանձնապես կարող է ազգաբնա-

կուլթյանը մերձեցնել կոոպ. ծրագրին, միևնույն ժամանակ նա կարող է լինել կոոպերացիայի թանգարանի սաղմը, վորտեղ պետք է տանել և տեղեկատու աշխատանք:

Տեղեկատու սեղանի աշխատանքները ևս կոոպերացիայի հարցերով կարող է ազգաբնակչությանը ծանոթացնել կոոպերատիվ խմբակին: Խրճիթ-ընթերցարանի և կոոպերատիվի ոգնություն խմբակը պետք է միջոցներ ձեռք առնի խրճիթ-ընթերցարանին կից մշտական և շարժական գրադարան կազմակերպելու և այդպիսով ազգաբնակչությանը համապատասխան գրականություն մատակարարելու համար: Բացի դրանից, գյուղում գրքեր ստանալու համար պետք է կոոպերատիվը գրքերի առևտուր սկսի: Այս դեպքում խմբակին անհրաժեշտ է ոգնել կոոպերատիվին տվյալ շրջանի համար գրքեր ընտրելու գործում:

Կնոջ դերը կոոպերացիայի գործում հսկայական է. անհրաժեշտ է նրան տալ կոոպերատիվ գիտություն և կապել գործնական աշխատանքի հետ, իսկ այս կարելի յե անել կանանց գրավելով ղեպի խմբակային աշխատանքներ, վորտեղ նա դեռևս շատ քիչ է լինում: Կնոջը կոոպերատիվ խմբակ քաշելու համար անհրաժեշտ է նախորդը կոոպերատիվում կանանց մեջ տանել դաստիարակչական աշխատանք: Այս նպատակով նաև կոոպերատիվը պետք է ունենա մոլր ու յերեխայի անկյուն: Յեթե կինը կտեսնի, վոր կոոպերատիվն իսկապես աշխատում է կնոջ և առանձնապես մոլր շահերի համար, նրան հեշտ կլինի արդեն գրավել ղեպի կրպակային հանձնաժողովի աշխատանքները, իսկ այստեղից մինչև վարչություն և վերստուգիչ հարձնաժողով մի քայլ է: Այստեղ կինը կվերացնի կոոպերատիվ իր անգրագիտությունը, կհաճախի կոոպերատիվ խմբակ:

Խմբակի հասարակական աշխատանքներում վոչ պակաս կարևոր դեր են խաղում կոոպերատիվ կամպանիաները: Նրանք կարող են շատ լինել. խմբակը պետք է ընտրի իր շրջանի համար հարվածայինը և նրա կատարման համար ամենաակտիվ մասնակցությունը ցույց տա: Որինակ՝ ազդեցիկ մղել վորևե կոոպ. հիմնելու, իր կոոպերատիվի աշխատանքների բարելավման և ուժեղացման, ագրոկուլտուրական և կուլտուրական միջոցների բարելավման համար, նույնպես և կոոպ. ին կից կենցաղի խրճիթ-ընթերցարանի կանոնավորման նպատակով: «Կոոպերացիայի ոլր» տոնակատարությունը մասնակցություն ցույց տալ, քաշել կանանց ղեպի կոոպ. ի ուրիշ կամպանիաների աշխատանքներ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1) Գյուղատնտեսական խմբակներ կազմակերպվում են գյուղացիության ինքնագործունեության հիման վրա և իրենից ներկայացնում են գյուղացիների կամավոր համախմբում, վորոնք ցանկանում են բարելավել իրենց տնտեսությունը:

2) Գյուղատնտեսական խմբակի հիմնական խնդիրներն են՝

ա) Բարձրացնել գյուղական տնտեսությունը՝ ձեռք բերելով գյուղատնտեսական գիտելիքներ և ունակություններ:

բ) Գյուղական ազգաբնակչությանը պարբերաբար ծանոթացնել խմբակի բոլոր աշխատանքներին՝ պրոպագանդա մղելով իրենց նվաճումների և ձեռնարկումների վերաբերյալ՝ գյուղական տնտեսությունն ավելի բարձր հիմքերի վրա դնելու նպատակով:

գ) Մասնակցել գյուղատնտեսական ցուցահանդեսների կազմակերպման և մրցությունների աշխատանքներին՝ նպատակ ունենալով ի հայտ բերել ագրոկուլտուրական բնագավառում ձեռք բերած նվաճումները:

դ) Յուրյց տալ մշտական աջակցություն շրջանային փորձադաշտին և գյուղատնտեսության խորհրդային ազգաբնակչության մեջ գյուղատնտեսական կուլտուրական և տնտեսական նորություններ և փոփոխություններ մտցնելիս:

ե) Ամենալայն աջակցություն ցույց տալ կոոպերատիվ որդաններին, գյուղատնտեսական կոոպերատիվներ կազմակերպելու աշխատանքներին, նրանց ցանցն ընդհանրապես լայնացնելու գործում:

3) Գյուղատնտեսական խմբակն իր առաջ դրած խնդիրներն իրականացնում է հետևյալ կերպով.

ա) Կազմակերպում է զրույցներ, ընթերցումներ, զեկուցումներ գյուղատնտեսության և առանձին հասունացած խնդիրներին վերաբերյալ, ինչպես նաև գյուղատնտեսության զանազան հար-

ցերի շուրջը՝ այդ աշխատանքներում ոգտագործելով մի կողմից խմբակի կարող ուժերին, մյուս կողմից մասնակից անելով տեղական կուլտուրական ուժերին:

բ) Կազմակերպում է գյուղատնտեսական եքսկուրսիաներ, նպատակ ունենալով ծանոթանալ գյուղատնտեսության կուլտուրական ձևերին (շրջանի խորհրդային որինակելի և կոլեկտիվ տնտեսություններին, որինակելի գյուղական տնտեսություններին, ցուցադրական փորձնական դաշտերի և կայաններին), տնտեսությունները վարելու ավելի ռացիոնալ հիմունքներին:

գ) Կազմակերպում է անդամների համար կարճատև գործնական աշխատանքներ կուլտուրական գյուղատնտեսական տնտեսություններում ու շրջանի ձեռնարկություններում:

դ) Նպաստում է խմբակի անդամներին իրենց տնտեսություններում մտցնելու գյուղատնտեսական բույսերի մշակման, ինչպես և կենդանիներին խնամելու և կերակրելու նոր ձևերը:

ե) Կազմակերպում է դպրոցին կամ կոոպերատիվին կից հոդամասերում ցուցադրական դաշտեր:

զ) Շրջանային գյուղատնտեսների միջոցով ծանոթանում է շրջանի կարիքներին և գյուղատնտեսական պայմաններին, անց է կացնում նրա ոգնությունը տարած աշխատանքների հաշվառում, կազմում է աշխատանքների որագրեր, մտցնելով վերջինիս մեջ շրջանի տնտեսական բնորոշ կողմերը:

է) Խմբակի և նրա առանձին անդամների աշխատանքները պետք է տարվեն խմբակի մշակած համապատասխան ծրագրով. գյուղատնտեսական ասպարիզում յեղած բոլոր առաջադրումները և խնդիրները, նաև առանձին փորձերը, պետք է հիմնված լինեն և համապատասխանեն տվյալ շրջանի ազգաբնակչության պահանջներին:

4) Աշխատանքի հիմքը պետք է կազմի գյուղատնտեսական դաշտի կազմակերպչական արտադրական ծրագիրը և շրջանի բնական տնտեսական ուսումնասիրությունը:

Գյուղատնտեսական խմբակը կազմակերպվում է հնգից վոչ պակաս անդամներով, վորոնք պետք է աշխատեն կամ կապված լինեն գյուղատնտեսության և նրան հարակից խնդիրներին:

Ծանոթ.—1) Խմբակի մեջ մտնում են թե յերիտասարդներ և թե հասակավոր գյուղացիներ: Հատուկ խմբակներ միմիայն յերիտասարդության կամ հասակավորների համար չեն կազմակերպվում:

ընթերցման: Ամեն մի խրճիթվար և կարմիր անկյունում աշխատող ընկերոջ հիմնական անելիքներից մեկը պիտի լինի հնար յեղածին չափ ունկնդիրներին անմիջապես հետաքրքրող, նրանց առօրյա կյանքից բխող զանազան նյութերի շուրջը զրույցներ ու ընթերցումներ կազմակերպել: Վորպեսզի ամեն մի ընթերցում, լինի դա լրագիր—«Մաճկալ», «Ավանգարդ», «Հայաստանի աշխատավորուհի», «Խորհրդային Հայաստան», կամ զանազան պատմվածքներ ու ժողովրդական գիտական գրքեր և, կամ սրանց շուրջը կազմակերպված զրույցները,—յուրացվի լսողների կողմից: Նյութը պետք է տալ հետևյալ մեթոդով.—

Ամեն մի ղեկավար ընկեր, նախքան իր խրճիթ-ընթերցարանում կամ կարմիր անկյունում բարձրաձայն ընթերցումը տանելը, անհրաժեշտ է, վոր ինքը տանը նախորոք պատրաստի ընթերցանության նյութը. կարգա միջանի անգամ բարձր ձայնով, առանց շտապելու, առողջանությամբ և, բացի այդ, պիտի աշխատի մշակել կարդալու տեխնիկան, նա պիտի յուրացնի և կարդացած նյութը: Ավելի շատ պաշար ունենալու և նյութն ավելի բովանդակալից դարձնելու համար պիտի հնար յեղածին չափ ոգտըվել թերթերից կամ նյութին համապատասխան գրքերից: Ընտրած նյութի մեջ յեթե կհանդիպեն դժվար, անհասկանալի նախադասություններ կամ մտքեր, հարկավոր է դիմել տեղում գտնված ավելի պատրաստված ընկերների ոգնությանը՝ բացատրություն ստանալու համար: Իսկ յեթե այդպիսիները չկան, կարդացվելիք նյութի տվյալ մասերը պետք է կրճատել: Հոգւածի կամ պատմվածքի մեջ դժվար հասկանալի մտքերն ու նախադասությունները պետք է ավելի պարզ ձևով վերլուծել և կարդալու փոխարեն բերանացի ասել, վորպեսզի ունկնդիրներին ավելի հասկանալի լինի: Ընթերցմանը միշտ պիտի տալ զրույցի ձև: Կարդալու ժամանակ ավելի շատ պիտի նայել ունկնդիրներին: Ընթերցումից առաջ կարդացած նյութի շուրջը պետք է կազմել հարցեր ու ամբողջ զրույցը տանել նախորոք պատրաստված հարցերի միջոցով: Յեթե հոգւածներն ու պատմվածքները փոքր են, պիտի նրանց կարդալ ամբողջովին: Կարդալու ժամանակ չընդունել հարցեր ունկնդիրների կողմից՝ կարդացած նյութի ամբողջությունը չխանգարելու համար: Նյութի ընթերցումից հետո առանց ընդմիջումի պիտի սկսել զրույցը, կարդացած նյութից անմիջապես բղխած հարցերի շուրջը՝ գյուղական, քաղաքական, բնագիտական, հասարակական և այլն:

Զրույցի համար պետք է ոգտագործել տեղի դպրոցում կամ խրճիթ-ընթերցարանում յեղած պլակատները, քարտեզները և այլն: Յեթե գիրքը կամ բրոշյուրը չի կարելի մի յերեկո ամբողջովին կարդալ, պետք է բաժանել միջանի մասերի՝ 15—20 յերեսից վոչ ավել, ամեն մի բաժնին տալ վորոշ վերնագիր և յերեկո յերեք յերեկո հատկացնել՝ շաղկապելով առանձին նյութերը միմյանց հետ, գրքույկի բովանդակությունն ամբողջովին յուրացնելու նպատակով: Զրույցից հետո պիտի պարզ ցույց տալ նրանց, թե ինչպիսի գրքեր կան տեղական գրադարանում, վորոնք իրենց անմիջական բովանդակությամբ պիտի պարզաբանեն գյուղական միջավայրի ապրելու ձևն ու կենցաղը, ծառայեցնելով նրանց միևնույն ժամանակ վորպես լրացուցիչ նյութ՝ նախկին կարդացած հոգւածի կամ պատմվածքի: Զրույցի ժամանակ պիտի աշխատել հոգւածի առաջ քաշել: Այնպես պիտի անել, վոր բոլորը հարցեր տան և ակաթիվ կերպով մասնակցեն առաջացած վիճաբանությանը:

Կիրառելով գրքի և լրագրի բարձրաձայն ընթերցման այս մեթոդական հիմնական սկզբունքները՝ յուրաքանչյուր ղեկավար ընկեր արդարացրած կլինի ընկ. Լենինի այն պատգամները, վորոնք ուղղված են մեր անգրագիտության վերացման և գյուղի կուլտուրական մակարդակը բարձրացնելու գործին:

ԽՐԱԽԹ-ԸՆԹԵՐՅԱՐԱՆ ՅԵՎ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Մեր յերկրի սոցիալիստական շինարարության գործում անգրագիտության վերացմանը խոշոր նշանակություն էր տրվում: Ընկեր Լենինը հաճախ էր ընդգծում այս հանգամանքը. ահա ինչ է ասել նա համառուսական քաղաքականության III համագումարում. «Քանի դեռ մեր յերկրում կա մի այնպիսի յերեվույթ, ինչպիսին անգրագիտությունն է, փաղափայտ լուսավորության աշխատանքի մասին գծված է խոսել: Անգրագիտության փաղափայտությունը գուցե է, հարկավոր է ճիշտ առաջ տարաբան սովորեցնել: Առաջ գրան չի կարող լինել փաղափայտություն. առաջ գրան կլինեն միայն լուրեր, բամբասանքներ, հեքիաթներ, և ապա պատմություններ յեվ վոյ փաղափայտություն»:

Առանց անգրագիտության վերացման, ինչպես ասում է ընկեր Լենինը, դժվար է վորևէ քաղաքական աշխատանք տանել: Դրա համար էլ այդ աշխատանքները պետք է առաջնակարգ տեղ գրավեն: Խրախթ-ընթերցարանը լինելու յե այդ աշխատանքի կենտրոնը և ինքն իր հերթին այդ գործին տալու յե խոշոր նշանակություն և ուժեղ թափ:

ԻՆՉՊԻՍԻ ԱՇԽԱՏԱՆՔ ՊԻՏԻ ՏԱՆԻ ԽՐԱԽԹ-ԸՆԹԵՐՅԱՐԱՆԸ

Ամենից առաջ խրախթ-ընթերցարանը պետք է լայն ագիտացիա տանի անգրագիտության վերացման գործը գյուղում ընդհանրապես լավ հիմքերի վրա դնելու համար: Նա պետք է զրույցի և անհատական պրոպագանդայի միջոցով անգրագետներին մեջ առաջ բերի սեր և հետաքրքրություն դեպի գրականությունը և առհասարակ տրամադրություն ստեղծի կարդալու համար: Լրագրի և գրքերի ընթերցանության, մանավանդ նամակների, հասցեների, դիմումների ու ստացականների գրելու հետ միասին պետք է անգրագետին ապացուցել առողջա կյանքում կարդալ-գրել իմա-

նալու գործնական խոշոր նշանակությունը: Այս աշխատանքն այնպիսի համոզեցուցիչ տոնով, այնպիսի գործնական որինակներին ձևով պիտի տարվի, վոր իրենք՝ անգրագետներն զգան ուսման կարիքն ու պահանջը, չկարծեն, թե Խորհրդային իշխանությունը հարկադրում է նրանց աննպատակ ժամանակ վատնել, այլ դա հենց իրենց՝ այդ անգրագետների ոգտին է կատարվում: Ավելի ուժեղ ագիտացիա պետք է տանել չքավոր գյուղացիության ու բատրակների մեջ, ամեն անգամ ասածները հաստատելով կյանքի ունի պահանջներից վերցրած որինակներով: Որինակ՝ անգրագետ բատրակը պայմանագիր է կնքում վարձողի հետ, ուրեմն մի ուրիշը նրան պիտի կարդա, բացատրի պայմանագրի բովանդակությունը, վերջն էլ պայմանագրի տակը այդ անգրագետ բատրակի փոխարեն ստորագրի:

— Ինչո՞ւ չպիտի ինքը՝ բատրակն իր պայմանագիրը կարողանա կարդալ, ո՞վ է իմանում, թե ուրիշներն ինչպես կկարդան ու կբացատրեն: Լավ չի՞ լինի արդյոք, վոր այդ բոլորը հենց ինքը՝ բատրակը կատարի:— Հենց այստեղ պիտի զգալ տալ նրան՝ բատրակին գրագետ դառնալու պահանջն ու կարիքը:

Մի ուրիշ որինակ՝ մեկի տղեն Կարմիր բանակից նամակ է ուղարկել: Ծնողները և թե ընտանիքի մյուս անդամները կարդալ չգիտեն: Սակայն նամակը հո չի՞ կարելի առանց կարդալու թողնել: Ի՞նչ պիտի անել: Անպայման պիտի սրտատրուփ վազել մի ուրիշի մոտ ու խնդրել նամակը կարդան: Յեվ ի՞նչ: Ինչո՞ւ պիտի տան նամակը մի ուրիշ, բոլորովին կողմնակի մարդ կարդա. գուցե մեջը վորևէ ընտանեկան գաղտնիք կա գրված. ինչո՞ւ պիտի ուրիշը կարդա, իմանա ու հետո յե հալար ու մի բամբասանքի առարկա դառնան գյուղում:

I. Նման աչքի զարնող ցայտուն որինակներ հազարներով կարելի յե բերել: Սրանք պահանջներ ու սուր կարիքներ են, վոր իրենց առողջա կյանքում գյուղի անգրագետներն զգում են ամեն քայլափոխում: Սրանք շատ պարզ, բայց գեղեցիկ ու տեղին որինակներ են ագիտացիան հիմնավորելու և գյուղացիության, մանավանդ չքավորներին առջև, գրագիտություն սովորելու պահանջը դնելու համար:

II. Գյուղացուն պետք է հասկացնել, վոր, յեթե նա ուզում է իր տնտեսությունը զարգացնել, պետք է կարդա փոքրիկ գյուղատնտեսական գրքույկներ, «Մաճկալ» և հետևելով այդ գրքույկներում յեղած ու «Մաճկալ»-ի տված խորհուրդներին, ավելի լավ ձևով հողն, այգին ու բամբակը մշակի, անասունները պահի, վոր կարողանա քիչ հողից շատ ոգուտ վերցնել, քիչ չարչարվել:

շատ արդյունք ստանալ ե այդպիսով թե ավելի հանգիստ կյանք վարել և թե միաժամանակ տնտեսությունը խելոք կերպով ուժեղացնել:

Միայն ագիտացիայով չի կարելի բավականանալ: Անհրաժեշտ է մանրազնիւն ուսումնասիրել անգրագետների ընտանեկան, տնտեսական ու սոցիալական դրությունը և ըստ այնմ գործը դասավորել կամ ղեկավարություն ցույց տալ: Կլինեն բազմաճյուղ ընտանիքով ծանրաբեռնված կանայք, վորոնք չեն կարող լիկկայան հաճախել. կպատահեն դեպքեր, յերբ, բոլոր հանգամանքները նկատի ունենալուց հետո, պարապմունքների տեղն ու ժամանակը բարակների պայմաններին հարմարեցնելուց հետո, դարձյալ մի-քանիսը հնարավորություն չեն ունենա լիկկայան հաճախելու: Առանց նման ուսումնասիրություն կատարելու դժվար է վորոշել՝ ումն է հարկավոր լիկկայան ուղարկել, վորոնց հետ առանձին պարապել—անհատական կամ խմբակային պարապմունքների միջոցով: Դժվար է նաև միանգամից ասել, քանի հոգի յեն գյուղխորհուրդների անդամներից անգրագետ, ինչքան դպրոցական հասակ ունեցող դպրոցից դուրս մնացած անգրագետներ կան, վորոնց հարկավոր է գրագետ դարձնել: Յեթն չկան ճիշտ տեղեկություններ—քանի անգրագետ կան գյուղում, հայտնի չեն նրանց հասակը, սեռը, զբաղմունքը, ազգությունը, հայտնի չեն նրանցից քանիսին է հարկավոր սովորեցնել, ինչպիսի ուժեր կան գյուղում, վորոնց կարելի չէ ոգնություն կանչել, անգրագետներից քանիսն է ցանկություն հայտնում սովորելու (սրանով գլխավորապես չափվում է ագիտացիայի ուժը, ազդեցությունը), հայտնի չեն նրանց տնտեսական ու սոցիալական դրությունը,—վոչ մի դեպքում չի կարելի արդյունավետ աշխատանքի հանգել: Դրա համար ել ամենից առաջ պիտի ունենալ 13—35 տարեկան անգրագետ ազգաբնակչության հաշվառում:

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎԸ

Ցուցակ ագրագետների

Գյուղ,		ըրջան,		գավառ,		տարի,		ամիս.
№	ըստ կարգի	Անուն, ազգանուն, հայրանուն		Հասակ	Ս է ո	Կրթություն		ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
						Ընտանեկան	Սոցալական	

ԳՐԱԳԵՏ ՈՒ ԿԱՐՈՂ ՈՒԺԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Վորովհետև խրճիթվարն ու խրճիթ-ընթերցարանի խորհրդի անդամներն այդ բոլորը հնար չեն ունենա կատարել, դրա համար ել անշուշտ պիտի աշխատանքին մասնակից դարձնել գյուղի բոլոր գրագետ ու կարող ուժերին: Նրանց վրա ևս պիտի դնել ագիտացիա տանելու պարտականությունը: Բացի դրանից, սրանց մեջ հարկավոր է արդեն սովորեցնելու տրամադրություն ստեղծել: Սրանք պիտի ավելի քան համոզված լինեն, վոր իրեն քաղաքացիներ, իրենց պարտքն են կատարում հանգեպ կառավարության, սոցիալիստական շինարարության ու սոցիալիզմի կառուցման: Սրանք, ինչպես և գյուղի ամբողջ ակտիվը՝ ուսուցիչն ու այլ կադավերպությունների անդամներն ու բանիմաց գյուղացիները, բոլորը պիտի լինեն «Կորչի անգրագիտությունը» ընկերության անդամ: Խրճիթ-ընթերցարանը պետք է հետևի, վոր ընկերության անդամներն ամեն կերպ աջակցեն, ոգնեն պետությանը անգրագիտության վերացման գործում: Պետք է նիշած ընկերության անդամների մեջ աշխատանքի բաշխում կատարվի, ամեն մեկին վորոշ հանձնարարություն տրվի կատարելու, անհատական կամ խմբակային պարապմունքներ ունենալու, լիկկայանի պարապմունքներին հետևելու, ընկերության ֆոնդն ուժեղացնելու, լրագրի «անգրագիտության վերացման անկյուն»-ին հոգվածներ տալու և այլն, և այլն:

ԽՈՉՊԵՍ ՀԵՏԵՎԵԼ ԼԻԿԿԱՅԱՆԻՆ ՈՒ ՆՐԱ ՊԱՐԱՊՄ ՈՒՆԻՔՆԵՐԻՆ

Խրճիթ-ընթերցարանը «Կորչի անգրագիտությունը» ընկերության և խորհրդի անդամների միջոցով պետք է հետևի, վոր գործող լիկկայանի կամ կիսագրագետների դպրոցի պարապմունքներն ընթանան նորմալ: Ամենից առաջ հոգ տանի, վոր այդ հիմնարկներն ապահովված լինեն վառելիքով, լուսավորության միջոցով, ուսանողները բավարարված լինեն դասագրքերով ու գրենական պիտույքներով. սովորողների հաճախումները լինեն կանոնավոր, լիկկայանի ուսումնական տնտեսական ծախքերի համար հասանելիք դրամները, ինչպես և ուսուցչի աշխատավարձը ժամանակին ստացվեն և անպայման նպատակին ծառայեն. հետևեն, վոր ուսուցիչը պահի լիկկայանում հաճախումների և նյութի գրանցման մատյան. հասակավոր սովորողները հաճախեն խրճիթ-ընթերցարան, մասնակցեն խմբակային պարապմունքներին, իսկ կիսագրագետները յերբեմն

նույնիսկ կատարեն բարձրաձայն ընթերցում, ստանան անհատականորեն կամ կոլլեկտիվ կերպով գոնե «Մաճկալ» թերթը, յեթե լիկկայանին պետություն կողմից հատկացված գումարը չի բավականացնում: «Կորչի անգրագիտությունը» ընկերության միջոցով ոգնություն հասնեն՝ վառելիք, լուսավորություն (յեթե մեկ լապտեր է, անպայման դարձնել յերկու), կավիճ և այլն մատակարարելով: Առանձին ուղղորդություն պիտի դարձնել, վոր պարապմունքները ժամանակին սկսվեն, պահանջված չափով ամեն որ աշխատանքները տարվեն և, վոր ամենագլխավորն է, ժամանակից առաջ լիկկայանը չփակվի: պարապմունքների տեղությունը լինի անպայման 4 ամիս, հակառակ դեպքում արդյունքը շատ չնչին կլինի:

ՄՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ԼԻԿԿԱՅԱՆԻ ԳՈՐԾԵՐ ՊԱՀԵԼԸ

Պարապմունքներից հետո խրճիթը տալիս է իր ներկայացուցչին՝ ստուգումներին մասնակցելու համար: Կազմակերպում է հանդիսավոր յերեկո կամ ցերեկույթ, վորտեղ դրվում է լիկկայանի ուսուցչի ղեկուցումն իր տարած աշխատանքների մասին, և վորտեղ կիսագրագետ ու գրագետ դարձածները կարդում են լրագրից փոքրիկ հոդվածներ, վորից հետո հասարակության առաջ բաժանվում են լիկկայանը կամ գրագետների դպրոցներն ավարտողներին կամ անհատական կամ խմբակային պարապմունքների միջոցով գրագիտություն սովորողներին—վկայականներ:

Բոլոր տվյալներն ու գրությունները (լիկկայանին, ուսուցչին, սովորողներին, ավարտողներին վերաբերող), մի խոսքով լիկկայանի ամբողջ գործն աշխատանքները վերջանալուց հետո խրճիթվարն ստանում է ուսուցչից ու մեծ խնամքով պահում է խրճիթ-ընթերցարանի արխիվում: Յեթե խրճիթ-ընթերցարանը գոնե այդքանը կատարի անգրագիտության վերացման ասպարիզում, հնարավորություն կտա Խորհրդային իշխանությունը կուլտուրան և քաղաքական լուսավորության գործն ավելի ուժեղ տեմպով զարգացնելու գլուզում:

ՈՒՋՄԱԿԱՆ ԱՆԿՅՈՒՆՆ ՈՒ ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ

Խորհրդային հասարակակարգում զինվորական ծառայության ժամանակամիջոցն ընդգրկում է մոտ 18-ից մինչև 43 տարեկան հասակը: այս ամբողջ ժամանակամիջոցում խորհրդային քաղաքացին զինվորական աշխատանքին մասնակցում է տարբեր ձևերով և տարբեր դրություններում՝ նախագինակոչիկ, տերրիտորիալ մասեր, զորացրվածների պարբերաբար և ժամանակավոր պարապմունք և այլն: Այսպես թե այնպես, զինվորական գիտելիքները դառնում են հարվածային պահանջ խորհրդային քաղաքացիների համար: Սակայն այս ամբողջն իր իսկական նպատակին ծառայեցնելու ամենամեծ գրավականը կլինի միայն այն, յերբ ազգաբնակչությունը գիտակցի Կարմիր բանակի դերն ու նշանակությունը, հասկանա ու ճանաչի նրա հզորությունը և ամենամեծ անհրաժեշտությունը համարի նրա գոյությունը: Մի հանգամանք, վորի իրականացումը բացարձակապես ընկնում է քաղլուսաշխատակցի վրա:

Խրճիթ-ընթերցարան, — ահա այն միջուկը, վորտեղից ուղմական ամենակարևոր գիտելիքները պետք է տարածվեն ժողովրդի մեջ:

Խրճիթ-ընթերցարանում անպայման պետք է կազմակերպել ուղմական անկյուն և ազգաբնակչությանը սերտորեն կապել այդ անկյան հետ: ահա այն միջոցը, վորով հնարավոր է վերոհիշյալն իրականացնել մեծագույն տոկոսով:

Ի՞նչպես կազմակերպել այդ անկյունը և ի՞նչպես տանել նրա աշխատանքները.—

1. Անկյունը կազմվում է խրճիթ-ընթերցարանին կից: Նրա կահավորումը կատարում է խրճիթվարը զինվորական տեղական մասերի (հրամանատար, ջոկատի քաղցեկ և այլն) ղեկավարություն և աջակցությամբ: Այնտեղ, վորտեղ չկա տերրիտորիալ

մաս, անկյունը կազմակերպվում է տեղական զինկոմատներին ոգնությամբ:

2. Ռազմական անկյան աշխատանքն ընդգրկում է մինչդի- նակոչայինների, զորացրվածների և զինապարտների այլ խմբերի փոփոխակի կազմը, ինչպես նաև գյուղական ազգաբնակչության ամբողջ մասսան:

3. Զինվորական անկյան ղեկավարությունը պետք է ընկնի քաղլուսկոմիտեյի վրա, իսկ վորտեղ չկա այդպիսին, ղեկավարու- թյունը պետք է վերապահվի խրճիթ-ընթերցարանի խորհրդին, զորի կազմի մեջ, ըստ տեղի պայմանների, մտնում են նաև կամ տերրիտորիալ մասերի, կամ մինչդինակոչիկների և կամ այլ տիպի երիտմորական մասերի ներկայացուցիչը:

Զինվորական մասերն ու գավզինկոմատը քաղլուսկարներին իհտ միասին պարբերաբար հրահանգներ են տալիս տեղական ան- կյան վարչին: Նրանք կազմակերպում են զինվորական անկյան վա- րչիչների խորհրդակցություններ, ուր քննության են առնվում ազ- գաբնակչության մեջ տարվելիք զինվորական աշխատանքների ու զինվորական պրոպագանդայի վերաբերյալ հարցերը (կարմիր բա- նակի տարեգարձի տոնակատարություն, տերրիտորիալ հավա- քույթներ, զինակոչ և այլն):

4. Խրճիթվարը խրճիթի խորհրդի հետ միասին նշանակում է ռազմական անկյան վարիչ փոփոխակի հրամանատարական կազմից, իսկ վերջինիս բացակայության դեպքում նշանակում է բավական պատրաստված մինչդինակոչիկի կամ զորացրված կար- միր-բանակայինի. ցանկալի յե, վոր նա լինի կոմկուսի կամ կոմ- յերիտմիության անդամ: Թեկնածուն համաձայնեցվում է զինվո- րական տեղական մասերի քաղապարատի կամ գավզինկոմատի հետ:

5. Ռազմական անկյան վարչին ոգնում է անկյան ակտիվը, վոր բաղկացած է կոմյերիտմիության բջիջի, զինվորական գիտե- լիքների և սպորտ-խմբակների ներկայացուցիչներից ու փոփո- խակի կազմի մեկ լիազորից, իսկ տերրիտորիալ մասերի շրջանից դուրս—մինչդինակոչիկներից ու զինվորական այլ կատեգորիա- ներից:

6. Ռազմական անկյան վարիչը սահմանում է հերթապահու- թյուն անկյան ակտիվ աշխատակիցներից, վորոնց վրա ընկնում են հետևյալ պարտականությունները.—հետևել անկյան կարգա- պահությանը և գույքին, հաճախորդներին տալ տեղեկանքներ և

որամատյաններում նշանակել անկյան աշխատանքները հերթա- պահության ընթացքում. նպաստել անկյան աշխատանքի ծրա- գերը կազմելուն, ղեկավարել աշխատանքները և անկյան ավելի կարևոր պարապմունքները (ինչպես, որինակ'հր ացանաձգության մրցումներ, հրացանաձգության պարապմունքներ, զինվորական սպորտ և այլն):

Խրճիթ-ընթերցարանին կից ռազմական անկյան ծախսերն ու կահավորությունը կատարվում է տեղական բյուջեյի հաշվին ընդհանուր հիմունքներով:

Մատակարարման ընդհանուր ղեկավարությունն ընկնում է խրճիթվարների վրա, ըստվորում նրանք՝

ա. ռազմական անկյան մատակարարման հարցերը համա- ձայնեցնում են զինվորական այն մասերի հետ, վորոնք ղեկա- վարում են տվյալ շրջանի զինվորական նախապատրաստական աշ- խատանքները:

բ. Ագմինիստրատիվ վարչության տեղական մարմինների ոգնությամբ միջոցներ են հայթայթում անկյան կահավորման և պահպանման համար՝ ղեկավարվելով զինվորական հիմնարկների և Քաղլուսգլխավորի վորոշումներով:

Զինվորական հիմնարկների վրա ընկնում է՝

ա. Քաղլուսմարմինների հետ միասին վորոշել ծախսերի հոդվածների նորմաները՝ համաձայն զինվորական նախապատ- րաստման ծրագրի և հերթական աշխատանքների, վորոնք պա- հանջում են այս կամ այն ծախսերը:

բ. Միջնորդել համապատասխան մարմինների առջև լրացու- ցիչ ոժանդակություն ստանալու համար:

գ. Մասնակցել տեղերի ռազմական անկյունների մատակա- րարման կարգերի ու նորմաների հետադոտություններին:

Տվյալ քաղհիմնարկի համար սահմանված կարգի համաձայն ռազմական անկյանը տրվում է անհրաժեշտ կահավորում (սեղան- ներ, աթոռներ, նստարաններ և այլն):

Ռազմա-սպորտային աշխատանք կազմակերպելու համար ռազմական անկյունն ընդհանուր հիմունքներով ոգտվում է տվյալ խրճիթ-ընթերցարանի սպորտային գույքից: Սպորտային կազմա- կերպության բացակայության դեպքում սպորտային գույքը ձեռք է բերվում խրճիթ-ընթերցարանի մատակարարման ընդհանուր հիմունքներով:

Յուրաքանչյուր խրճիթ-ընթերցարանին կից կազմակերպ-

վում են ռազմական գրադարաններ, վորոնք հանդիսանում են զինվորական մասերի քաղմարմինների հանձնարարական ցուցակներով կազմված և քաղլուսհիմնարկների հետ համաձայնեցրած ամբողջ գրադարանի ռազմական բաժինը:

Ռազմական անկյունների համար ընթացիկ աշխատանքների միջոցներ հայթայթելու ժամանակ պետք է ինկատի առնվեն ծախսերի հետևյալ հոդվածները.— ռազմական գիտությունների և մասսայական աշխատանք տանելու անհրաժեշտ նյութեր (թուղթ, ներկեր, տուշ և այլն), զինվորական լրագրի հայթայթում, գրադարանը լրացնել զինվորական գրականություններ, անկյանը մատակարարել ռազմական աղյուսակ, հրաձիգ նյութեր, գիտագրամաներ և այլն:

Գաղլուսհիմնարկներն (խրճիթ-ընթերցարան) իրենց հերթին անկյունում տանում են քաղլուսաշխատանքի բոլոր տեսակները:

Ռազմական անկյանը կից կարող է կազմակերպվել ռազմական գիտությունների խմբակ: Այս խմբակն ընդգրկում է մինչև զինակոչայինների և զորացրված կարմիր բանակայինների փոփոխակի կազմի վորակյալ մասը, մշակում ռազմական շինարարություն վերաբերյալ հարցեր և այլն:

Խրճիթ-ընթերցարաններում գոյություն ունեցող Ավիաքիմի բջիջներն իրենց աշխատանքները կենտրոնացնում են ռազմական անկյունում:

Ազգաբնակչության մեջ Կարմիր բանակի մասսայական ժողովրդականացումը և զինվորական գործի հիմունքների պրոպագանդան տարվում են զրույցների և դասախոսությունների միջոցով, վորոնք պարզաբանում են քաղաքացիական կովի պատմությունը, Կարմիր բանակի կյանքն ու կենցաղը, ինչպես նաև ծանոթացնում զինվորական տեխնիկայի ձգտումներին: Ազգաբնակչության մեջ մասսայական աշխատանք տանելու և գյուղացիությունը տեղի ռազմական անկյունները գրավելու համար ոգտագործվում են գեղարվեստական աշխատանքների բոլոր ձևերն ու տեսակները (ագիտ-բեմադրություններ, կենդանի լրագիր և այլն):

ԲԱՐԱՆԱՅԻ ՇՐՋԱՆԻ ԲԱՂ-ԼՈՒՍ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄ-ՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԲԱՐԱՆԱՅԻ ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ (որինակելի)

Բարանայի խրճիթ-ընթերցարանը տեղավորված է մեկ փոքրիկ սենյակում. այս հանգամանքը բացասական հետևանք է ունենում խրճիթի աշխատանքների վրա: Սենյակի կառուցվածքը լավ է (լուսավոր պատուհաններով):

Կահավորումը ծայր աստիճան անբավարար է. խրճիթն ունի մեկ սեղան՝ միջին մեծությամբ, շատ փոքրիկ մի անկյունասեղան, 3 հատ փոքրիկ նստարան՝ յուրաքանչյուրի վրա կտեղավորվի 3-4 մարդ, մի փոքրիկ պահարան, մի վառարան: Խրճիթ-ընթերցարանը կարիք ունի նորից 4-5 նստարանի, լապտերի (սեփական լապտեր բոլորովին չունի), մեկ մեծ սեղանի, մի կանոնավոր պահարանի և նկարների համար շրջանակների:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խրճիթ-ընթերցարանն ունի 660 անուն գրքեր. գրականություն խոշորագույն մասը քաղաքական գրքեր են. գյուղատնտեսական գրականություն կա, բայց վոչ բավարար չափով— քիչ անուններ մեծ քանակով: Գյուղերը պիեսների մեծ պահանջ ունեն: Նախկին խրճիթվարը խրճիթ-ընթերցարանը հանձնելիս գրքերն առանձին չի հանձնել. գրքերի մատյան կա, սակայն գրքերն անխնամ դրություն մեջ թափթփված են պահարանում: Յեթի մեկը կամենում է մի գիրք ստանալ, պետք է քրքրի գրադարանի բոլոր գրքերը, վորպեսզի կարողանա գտնել իր ցանկացած գիրքը: Գրքերը բաց են թողնվում առանց վորևե հաշվառման: Խրճիթվարն ասում է, վոր առանձին թղթի վրա նշանակում են բաց թողնված գրքերը. բայց իրականություն մեջ մեծ

մասամբ բաց են թողնվում հիշողությամբ, այն հոսսով, թե կտանեն և կվերադարձնեն: Ըստ խրճիթվարի հայտարարության յուրաքանչյուր ընթերցող յերբ վերադարձնում է իր կարգացած գիրքը, քննվում է խրճիթվարի կողմից՝ պարզելու համար, թե ինչ չափով է յուրացրել նա իր կարգացածը, և ինչպիսի հարցեր են նրա համար մուծը մնացել, վորոնք պարզաբանելուց հետո միայն բաց է թողնվում գիրք: Սակայն այս աշխատանքի մասին գրավոր վոչ մի հետք չկա խրճիթում, վոր հնարավոր լիներ ստուգել, թե վոր չափով է ձեռն խրճիթվարի հայտարարությունը:

ԹԵՐԹԵՐԻ ԱՌԱՔՈՒՄԸ ՅԵՎ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Ստացվում են հետևյալ թերթերը՝ «Խորհրդային Հայաստան» 1 որինակ, «Մահկալ» 2 որինակ և «Ավանգարդ» 1 որինակ. անհրաժեշտ է կենտրոնական թերթեր ևս ստանալ. ընթերցարանում պահանջ կա նաև այդ թերթերի: Թերթերն ոգտագործվում են բավարար չափով. ընթերցողները շատ են. ըստ խրճիթվարի հայտարարության լինում են թերթերի և գրքերի բարձրաձայն ընթերցումներ, բայց վոչ մի գրավոր նշաններ չկան այդ աշխատանքների մասին: Թերթերն արխիվում չեն պահվում, այլ անկանոն կերպով թափված են պահարանում:

ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ԱՇԽԱՏԱՆԻ

Տեղեկատու-խորհրդատու աշխատանք խրճիթում տարվում է, բայց այդ աշխատանքը չի ձևակերպված և ծրագրված. աշխատանքը տարվում է անկազմակերպ ձևով: Գրավոր վոչ մի հետք չկա այդ աշխատանքի մասին. կողմնակի տեղեկություններից յես յեզրակացրի, վոր զանազան հարցերի և խնդիրների պարզաբանման նկատմամբ վորոշ ոգնություն գյուղացիությունն ստանում է խրճիթ-ընթերցարանից:

ԽՄԲԱԿՆԵՐ

Խրճիթ - ընթերցարանին կից կազմակերպվել են հետևյալ խմբակները՝ բնագիտական, գյուղատնտեսական, ռազմական և քաղաքական. մինչև հիմա աշխատել է ռազմական խմբակը. մյուս խմբակները դեռևս վոչ մի աշխատանք չեն տարել:

ՔԱՂԱՌԱՄԿՈՄԻՏԵ

Խրճիթին կից ընտրված է քաղաքական միություն, վորի մեջ մտնում են մոտ 20 հոգի. կազմակերպվել են 4 սեկցիաներ՝ պատի թեր-

թի, թատերական, «Կորչի անգրագիտությունը» ընկերությունը շրջվարչություն և տոներ անցկացնող սեկցիա: Խրճիթ ընթերցարանում սեկցիաների աշխատանքների մասին գործերի մեջ թղթեր չկան. ըստ վարչի հայտարարության յուրաքանչյուր սեկցիայի գործերը գտնվում են սեկցիայի վարչի մոտ. վերջը պարզվեց, վոր ընդհանրապես սեկցիաներն աշխատում են նույնպես պատահաբար, վոչ մի սեկցիա առաջժամ աշխատանքի ծրագիր չունի:

ԱՇԽԱՏԱՆԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Վոչ մի հաշվառում չի տարվում. խրճիթ-ընթերցարանների որամատյաններ չեն նկատվում, նույնիսկ հաճախողների հաշվառում չկա:

ՊԱՏԻ ԼՐԱԳԻՐ

Խրճիթն ունի պատի լրագիր. լույս է տեսել առաջին համարը՝ նվիրված «Հայաստանի խորհրդայնացման տարեդարձին»: Թե բովանդակությամբ և թե տեխնիկական տեսակետից կարելի չէ բավարար համարել պատի լրագրի վորակը: Թղթակիցների խմբակ չի կազմակերպված:

ԽՐՃԻԹԻ ՎԱՐԻՉԸ

Խրճիթվարը վոչ կուսակցական է և վոչ էլ կոմյերիտական. վորակով կարելի չէ բավարար համարել: Ղեկավարությունը և կապը գյուղի քաղաքական հիմնարկների հետ բավարար է. հաճախ լինում է գյուղերում և անհրաժեշտ ցուցմունքներ տալիս: Խրճիթվարը միևնույն ժամանակ քաղաք հրահանգիչ է. այս հանգամանքը բացասական ազդեցություն է թողնում կենտրոնական որինակելի խրճիթ-ընթերցարանների աշխատանքների վրա:

ՊԼԱԿԱՏՆԵՐ, ԼՈՁՈՒՆԴՆԵՐ ՅԵՎ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՆԿԱՐՆԵՐ

Լոգոնոգները և պլակատները շատ անկանոն են փակցված պատերին. սրանց մեծ մասը չեն բղիվում ժամանակի պահանջներին, բովանդակությամբ հին են և վոչ այժմեական, մեծ մասը ուսներին: Ղեկավարների նկարներ ևս բավական կան, սակայն սրանք նույնպես փակցված են անկանոն և առանց շրջանակների:

ԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ

Փաստորեն անկյուններ չկան, յուրաքանչյուր անկյունում այս կամ այն հարցի մասին (կոոպերատիվ, լենինի, ռազմական և այլն) միջանի հին պլակատներ են փակցված, յերկու նկար, և դրան անվանում են անկյուն. գործնական վորևե աշխատանք անկյուններում չի տարվում:

ԿՈԹԻ ԳՅՈՒՂԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԽՐՃԻԹ. ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ

Վարիչ: Վարիչն ինքը Կոթի գյուղացի յե, կուսակցական, իր պատրաստականությամբ կարող է բավարարել խրճիթի տարրական պահանջներին: Խորացրած քաղցուսաշխատանքների համար բավարար պատրաստականություն չունի:

Շենքը յեվ կառավարումը: Շենքն իր մեծությամբ և իր հարմարություններով կարելի յե բավարար համարել: Կահավորումը պակասում է, ունի շատ փոքրիկ մի պահարան և միջին մեծությամբ մի սեղան, նստարաններ նույնպես չկան, պատուհանները մինչև հիմա ապակի չունեն: Գրադարանային աշխատանքը նույն դրության մեջ է, ինչ վոր Բարանայինը:

Վարչություն: Խրճիթն ունի ընտրված վարչություն, վորը չի աշխատում. կազմված է աշխատանքի ծրագիր, վորի միայն չնչին մասն է կիրառվել կյանքում:

Սոցալազմի հաշվառումը նույն դրության մեջ է, ինչ վոր Բարանայում:

Խմբակներ չկան:

Ընթերցանություն յեվ թերթեր: Թերթեր ստացվում են բավարար չափով՝ «Մաճկալ» 8 որինակ, «Կարմիր Զինվոր» 1 որինակ, «Սորհրդային Հայաստան» 1 որինակ և «Ավանգարդ» 1 որինակ: Բարձրաձայն ընթերցանություններ միշտ ել լինում են: Թերթերը բավարար չափով ոգտագործվում են գյուղացիների կողմից:

Պլակատները, լոզունգները յեվ հեղափոխության դեկլարացիան և կարգերն ավելի անսխիթար դրության մեջ են՝ համեմատած Բարանայի խրճիթ-ընթերցարանի հետ:

Պատի լրագիր: Ունեցել են պատի լրագիր, բայց վերջերս այլևս լույս չի տեսնում. խրճիթվարը պատճառաբանում է, թե թուղթ չունի. ներկայումս թուղթ ձեռք է բերված և պատրաստություններ են տեսնում պատի թերթը վերահրատարակելու:

Ցեղեկատու աշխատանք տարվում է, բայց անկանոն: Աշխատանքի ծրագիր կամ հաշվառում գոյություն չունի. գյուղի ինտելիգենտ ուժերը լայն չափով չեն ոգտագործվում խրճիթ-ընթերցարանի աշխատանքների համար:

Լիկկայացման աշխատանքները: 3 գյուղերում կազմակերպված են լիկկայաններ և յերեք գյուղերում ել կիսազրագետների դպրոցներ. պարապմունքները լիկկայաններում սկսվել են նոյեմբերի յերկրորդ կեսից զանազան ժամանակամիջոցներում: Դասագրքեր մինչև այժմս դեռ չեն ստացվել. բոլոր գյուղերում ել հաճախողների թիվը լրիվ է. կուս. և ԼԿՅԵՄ ընկերներ կանոնավոր չեն հաճախում լիկկայանները:

ՔԱՂԼՈՒՍՎԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՅԵՎ ԳՅՈՒՂ- ԿԱԶՄԱԿԵՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հուլյս դնելով միայն խրճիթվարների կամ քաղլուսհրահան-
գչի վրա՝ դժվար թե կարողանանք կյանքում կիրառել 14-րդ կուս-
համագումարի բոլոր վորոշումները քաղլուսաշխատանքների բնա-
գավառում: Բացի խրճիթվարից և հրահանգչից քաղլուսաշխա-
տանքին պետք է մասնակից անել նաև գյուղի կազմակերպու-
թյունների ձեռնհաս անդամներին:

Գյուղի խրճիթ-ընթերցարանում լույս է տեսնում պատի-
թերթ. առանց վորոշ ղեկավարութուն ցույց տալու այդ թերթը
չի կարող կանոնավոր լույս տեսնել. գյուղի կուսբջիջը վորպես
հրատարակվող այդ թերթերի անմիջական ղեկավարը՝ իր ներ-
կայացուցիչը պետք է ունենա խմբագրական կոլլեգիայի մեջ և
հենց ինքն իր վրա վերցնի թերթի ամբողջ պատասխանատվու-
թյունը: Կոմսոմոլի և կուսբջիջների շրջկոմները բաց են անում
քաղ-ընթերցարան խմբակներ, սակայն վորոնք անջատ-անջատ
աշխատելու հետևանքով վոր մի արգյունք չեն տալիս, քանի վոր
տեղի յե ունենում ուժերի ջլատում:

Ավելի նպատակահարմար է, վոր այդ խմբակներն, ինչպես
նաև գյուղատնտեսական, բնագիտական և այլ խմբակները, կազ-
մակերպվեն միացյալ՝ խրճիթին կից, բացի այդ՝ խմբակներում
ցուցակագրել կայուն հաճախորդների:

Գյուղ-խրճիթ-ընթերցարանը պետք է հանդիսանա գյուղի
կուլտուրական աշխատանքների կենտրոնը: Գյուղի կազմակեր-
պություններն անց են կացնում քաղլուսկոմիտեների և խրճիթ-
ընթերցարանների վարչությունների մեջ իրենց ձեռնհաս ան-
դամներին և պարտավորեցնում աշխատել այս կամ այն խմբա-
կում: Քաղլուսկոմիտեները կամ խրճիթի վարչություններն աշ-
խատանքի բաշխում են կատարում իրենց անդամների մեջ, վոր-

պեսզի ամբողջ գործը չբարդվի մեկ կամ յերկու անձնավորու-
թյունների վրա:

Քաղլուսաշխատակիցներն այստեղ հանդիսանում են ընդհա-
նուր աշխատանքների տոն և ցուցմունք տվողը. նրանք կատա-
րում են աշխատանքի ընդհանուր հաշվառում, միևնույն ժամա-
նակ հսկում այս կամ այն խմբակավարներին, վորպեսզի իրենց վրա
դրված պարտականությունները կատարեն բարեխղճորեն, առանց
ուշացնելու՝ դիտենալով, վոր հիշյալ աշխատանքները ժամանա-
կին և նորմալ կարգով չկատարելու դեպքում պատասխանատվու-
թյունն ընկնում է քաղլուսաշխատակցի վրա:

Ամիսը մեկ կամ յերկու անգամ պետք է ունենալ քաղլուս-
կոմիտեների և վարչությունների նիստ, ուր պարբերաբար դնել խըմը-
վարների ղեկուցումներն իրենց տարած աշխատանքների մասին
և զանազան ցուցմունքներ տալ նրանց նորանոր աշխատանքներ
կատարելու համար: Առհասարակ քաղլուսաշխատանքները մաս-
սային ավելի հետաքրքիր դարձնելու համար անհրաժեշտ է քաղլուս-
կոմիտեների և խրճիթվարչությունների մեջ անցկացնել կուս. կամ
կոմյերիտ. ակտիվ անդամների, վորոնք և կհանդիսանան այդ աշ-
խատանքների ղեկավարն ու տոն տվողը:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

ՔԱՂԼՈՒՍԳԻԼՆՎԱՐԻՆ.

ՄԵԾ-ՄԱՐԳՐԱՅԻ ԽՐԵՒԻՊԿԱՐԻՑ

Մեր խրճիթի աշխատանքները գնում են բավարար. որական հաճախում են միջին հաշվով 14—18 գրազեա գյուղացի, իսկ անգրազեա և կիսագրազեա շատ են հաճախում. հոկտեմբեր ամսին կազմեցինք աշխատանքի ծրագիր՝ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար. այդ ծրագիրն իրագործված է. ունենք գյուղատնտեսական և բնագիտական խմբակներ. համաձայն աշխատանքի ծրագրի—ամիսը յերկու անգամ ունենում ենք խմբակային պարապմունք: Խրճիթում ունենք պատի թերթ, վորը լույս է տեսնում ամիսը մեկ անգամ. ունենք 7 գյուղթղթակից և 4 յերիտթղթակից: Կազմակերպված է գյուղթղթակիցների խմբակ, վորն ունենում է խմբակային պարապմունք. պատի լրագրում արծարծված բոլոր հոգվածների քաղվածքներն ուղարկում ենք շրջգործկոմի, իսկ լրագրի պատճենը՝ շրջաղլուսկոմին:

Այս ամենի հետ միասին խրճիթն ունի նաև իր թերի կողմերը.—մեր խրճիթ-ընթերցարանի բացման նրից՝ 1925 թվից մինչև հիմա չենք ստացել գրքերի արկղ, վոր կարողանանք գրադարանում յեղած գրքերը տեղավորել խրճիթում. տեղեկատու աշխատանք տանելու համար չունենք սեղան և արկղ. աշխատանքը տարվում է վոչ թե գրավոր, այլ բանավոր:

Խրճիթ-ընթերցարանն ունի սեփական շենք, վորը գտնվում է շրջգործկոմի տրամադրության տակ. շենքը շատ խարխուլ է, պատերը ճեղքված. վորևե ծանրության կամ ուժգին անձրևի դեպքում շենքը քանդվելու վտանգի առաջ է կանգնում: Այդ մասին հայտնել են շրջաղլուսկոմի նախագահին և շրջգործկոմին, վորոնք

խոստացել են դարնանը վերանորոգել: Խնդրում եմ միջոցների դիմել շենքի վերանորոգումն արագացնելու համար:

Գյուղ-թատերական բեմ չկա. գյուղի բնակչության (հայ և թուրք) թիվն է 1400, վորոնք զուրկ են մնացել ներկայացումներից. միջանի ներկայացում տրվել է գոմերում: Գյուղում բացվել է կիսագրազեաների դպրոց, վորտեղ ընդունվել են 35 հոգի: Միջանի հոգի դպրոցից դուրս են մնացել. այդ մասին հայտնել ենք շրջաղլուսկոմին: Գյուղում կա յերկու դպրոց՝ հայերի և թուրքերի համար: Հայերի դպրոցում սովորում են 45 հոգի, վորոնցից՝ 36 տղա, 9 աղջիկ. թուրք դպրոցում սովորում են 20 հոգի, վորոնցից՝ 19 տղա, 1 աղջիկ: Մեր դպրոցների աշխատանքներն ավելի թույլ են ընթանում, քան, որինակ, Բասարգեչարինը, վորովհետև դպրոցն ունի 1 ուսուցիչ, վորը 3 խմբակի հետ պարապում է 4 ժամ, փոխանակ յուրաքանչյուր խմբակի հետ 4 ժամ պարապելու: Հարկավոր է ուսուցիչների թիվն ավելացնել: Մեր դպրոցներն իրենց համար սեփական շենք չունեն. հայկական դպրոցի աշակերտության կեսն սպասում է դուրսը, մինչև մյուս կեսը վերջացնում է իր պարապմունքը:

Ընկերական բարեներով՝ Նոր-Բայազետի գավառի ՄԵԾ-ՄԱՐԳՐԱ Գյուղի խրճիթավար՝ Մկրտիչ Մկրտչյան

14 դեկտեմբերի 26 թ.

ԶԵԿՈՒՅՈՒՄ

Զոյախաջ Գյուղի Եաբային խրճիթ-ընթերցարանի հոկտեմբեր, նոյեմբեր յեվ դեկտեմբեր ամիսներում կատարած աշխատանքների մասին

Խրճ. ընթ. ի կապը գավաղլուսկոմարի և շրջգործկոմի հետ յեղել է կենդանի և գրավոր. վերոհիշյալ հիմնարկներից ստացել ենք անհրաժեշտ աջակցություն և դեկավարություն, կապը տեղերի հետ յեղել է կանոնավոր:

Ուժեղ փոխարարերություն է յեղել ՀԼԿՅԵՄ բջիջի հետ. վերջինս ընթերցարանում կազմակերպել է բարձրաձայն ընթերցումներ, զրույցներ և միացյալ ուժերով ներկայացումներ: Ընթերցարանի աշխատանքներում միանգամայն պայմանավ են յեղել կուսբջիջի, ՓՈԿ-ի, կոոպերացիայի, հողատնտեսության կազմակերպություններն ու կին պատգամավորուհիները:

Շրջագործկոմից քաղուսաշխատանքների համար ստացվում է մոտ 49 ու, վորը գործադրվում է խրճիթվարի աշխատավարձի, լիկկայանի, վառելանյութի, շենքի վարձի և այլ մանր ծախսերի համար:

Վերջին յերեք ամիսների ընթացքում անց են կացրած հետևյալ կամապանիաները՝ Հոկտեմբերյան հեղափոխության, 9-րդ տարեգարձի, Հայաստանի խորհրդայնացման տարեգարձի, բերքի տոնի և մարդահամարի:

Այդ կամապանիաների առթիվ ընթերցարանում կազմակերպվել են բարձրաձայն ընթերցումներ, զրույցներ. պարզաբանվել այդ կամապանիաների նշանակությունը:

Ընթերցարանն աջակցություն է ցույց տվել նույնպես և շրջանում կազմակերպված ցուցահանդեսին. գյուղացիների մեջ պրոպագանդա տանելու շնորհիվ, վերջիններս իրենց գյուղատնտեսական ընտիր ցուցանիշներով մասնակցել են ցուցահանդեսին:

Խճիթ-ընթ. աթխատանգներ մեքողները յեղել են՝ բարձրաձայն ընթերցումներ, զրույց, անձայն ընթերցում, դասախոսություններ:

Ունեցել ենք՝ բարձրաձայն ընթերցանություն՝ 51 անգամ, մասնակցել են 521 հոգի, զրույց՝ 44 անգամ, մասնակցել են 316 հոգի, դասախոսություն՝ 4 անգամ, մասնակցել են 546 հոգի: Կազմակերպել ենք ներկայացումներ 3 անգամ, վորոնցից մեկը յեղել է վճարովի, կանանց խմբակի ոգտին, իսկ յերկուսը՝ ձրիաբար, մասնակցել են 558 հոգի:

Ազգաբնակչության վերաբերմունքը խրճիթ-ընթ. նկատմամբ լավ է, ուժեղ է կապված հատկապես յերիտասարդությունը:

Գյուղի բնակչության թիվը հասնում է 3292-ի, վորոնցից գրագետ են 426 հոգի, անգրագետ են 2806 հոգի: Ընթերցարանի շենքը կանոնավոր է, վերանորոգված, կահավորված, ունի մի վառարան, 5 նստարան, 1 թախտ, լապտեր, կողպեք, 2 սեղան, (գյուղացիներինն է) և 22 պլակատ: Ընթերցարանն այս ամիսներին ստացել է «Խորհրդային Հայաստան» 3 որինակ, «Ավանդարդ» 4 որինակ, «Մաճկալ» 2 որինակ, «Կարմիր Ձինվոր», «Նոր Աշխարհ» և «Յերևան» 1—1 որ. և 3 ամսագիր:

Գրադարանի աշխատանքներն սկզբում անկանոն էյին. այժմ ունենք 376 կտ. գիրք, հետևյալ բաժիններով—քաղաքական՝ 157 գիրք, գյուղատնտեսական՝ 60 գիրք, պատմական՝ 60 գիրք, ընդհ. բաժին՝ 39 գիրք, կենցաղային և առողջապահական՝ 32 գիրք,

գրական՝ 18 գիրք և թատերական՝ 10 գիրք: Բաժանորդներին բաց է թողնված 231 գիրք:

Ընթերցարան են հաճախում միջին թվով 290 հոգի. սրանց մեջ են խմբակային աարապողները, զրույցներին և բարձրաձայն ընթերցումներին մասնակցողները, նաև անհատ ընթերցողները:

Ընթերցարանն ունի 2 անկյուն՝ քաղաքական և տնտեսական:

Անկյուններին կից կան 2 խմբակներ—քաղխմակ՝ 30 հոգուց և գյուղատնտեսական՝ 19 հոգուց բաղկացած:

Կիսագրագետների դպրոցում սովորում են 35 հոգի, վորոնցից մեծամասնությունը կանայք են. աշխատանքն ընթանում է կանոնավոր, պարապմունքները լինում են ժամանակին, անցնում են «Աշխատանք» դասագրքի 1-ին մասը:

Գյուղացիների տրամադրությունը տվյալ գյուղում տեղական իշխանության և կազմակերպությունների նկատմամբ լավ է, խուժովություններ և տարաձայնություններ չկան: Նրանց վերաբերմունքը լավ է նույնպես և դեպի խրճիթվարը:

Խրճիթվար՝ Մելիսոն Գեվորգյան

7/1 1927 թ.

Ձուխաչ

Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Քաղուսգլիւծարին կից Անգրագիտութեան վերացման Կենտրոնական Մասակարգ Հանձնաժողովի յիշ գլուղաստեպական ու անտառային բանվորներին արհմիութեան Կենտր. վարչութեան կողմից

1. Գյուղատնտեսական և անտառային անգրագետ և կիսագրագետ այն բանվորների 26/27 թվի հաշվառումը, վորոնք սովորելու յեն քաղութավարի լիկկայաններում, պետք է կատարել հիշյալ յերկու կազմակերպությունների տեղական մարմինների կոնտակտ աշխատանքով՝ ինկատի ունենալով քաղութավարի ցանցը։ Այս գործը կատարելու համար պետք է մշակել հաշվառման կոնկրետ ծրագիր։

